ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Յու. Ավետիսյան, Լ. Ավետիսյան,
Լ. Սարգսյան, Ռ. Սաղաթելյան

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ

Գործնական աշխատանքների ձեռնարկ հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2020

ՀՏԴ 811.19’271(07)
ԳՄԴ 81.2Հ-5
Հ 282

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի
հայոց լեզվի ամբիոնը

Հեղինակներ՝ Յուրի Ավետիսյան, Լևոն Ավետիսյան, Լիանա Սարգսյան, Ռիտա Սաղաթելյան Խմբագիրներ՝ Ա. Սարգսյան (բ. գ. թ.), Մ. Ֆելեքյան (բ. գ. թ.)

Հ 282 ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ: Գործնական աշխատանքների ձեռնարկ հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար / Յու. Ավետիսյան և ուրիշ. -Եր.: ԵՊՀ հրատ., 2020. - 224 էջ:

Ձեռնարկը կազմված է ԵՊՀ-ում դասավանդվող «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» դասընթացի ծրագրին և սկզբունքներին համապատասխան: Նյութն ընդգրկում է արդի գրական հայերենի բոլոր բաժինները: Առավել հանգամանորեն է ներկայացված խոսքարվեստին վերաբերող բաժինը, որտեղ զետեղված են բանավոր և գրավոր խոսքի կառուցմանը, խոսքի արժանիքներին, բանավեճի արվեստին, խոսքային վարվեցողության և հաղորդակցման այլևայլ ոլորտներին վերաբերող առաջադրանքներ: Ձեռնարկում ներառված նյութը նախատեսված է հումանիտար (մասնավորապես իրավագիտության, միջազգային հարաբերությունների և պատմության) ֆակուլտետների ուսանողների համար:

ՀՏԴ 811.19’271(07)
ԳՄԴ 81.2Հ-5

ISBN 978-5-8084-2145-5

© ԵՊՀ հրատ, 2020
© Ավետիսյան Յու., 2020
© Ավետիսյան Լ., 2020
© Սարգսյան Լ., 2020
© Սաղաթելյան Ռ., 2020

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Սիրելի՛ ուսանող

Ճիշտ խոսելու և գրելու կարողությունը, ինչպես նաև հայոց լեզվի հարուստ շտեմարանից ըստ հարկի օգտվելու հմտությունը քո ինքնադրսևորման և մասնագիտական կայացման կարևոր նախապայմաններից են: Տեսական յուրաքանչյուր գիտելիք ի վերջո յուրացվում և ամրապնդվում է վարժությամբ՝ գործնական տևական և նպատակադիր աշխատանքով: Ձեռնարկը ճիշտ կիրառելու դեպքում դու ոչ միայն հնարավորություն կունե-նաս մշակելու և զարգացնելու քո բանավոր ու գրավոր խոսքի որակները, այլև կկարողանաս ըստ անհրաժեշտության հանպատ-րաստից խոսք կառուցել, ասել է թե՝ հանրությանը ներկայանալ որպես գրագետ և բարեկիրթ մարդ:

Ձեռնարկը ծանրաբեռնված չէ ուղղագրական, կետադրական կամ քերականական առաջադրանքներով: Դրանց մի մասը, իհարկե, կոչված է նպաստելու մինչբուհական ուսումնառությամբ ձեռք բերված քո լեզվական գիտելիքները վերհիշելուն: Սա-կայն առավել կարևոր է համարվել այնպիսի առաջադրանքների ընտրությունը, որոնք նպաստելու են խոսքին առնչվող իրողու-թյունների հանգամանալից վարժանքին և ուսուցմանը: Դրանց հետևողական կատարումը քեզ հնարավորություն կընձեռի բա-րելավելու քո գրավոր խոսքի մշակույթը, զարգացնելու բանավոր խոսքի ներազդման հնարավորությունները, ծանոթանալու ճարտասանական արվեստի նրբություններին, տիրապետելու խոսքային ճիշտ վարվեցողությանը:

Վարժությունների այս գիրքն ունի մի առավելություն ևս. այն ըստ էության «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» դասընթացի աշխատանքային ձեռնարկ–տետր է: Առաջադրանքները կազմել ենք այնպես, որ դու հնարավորություն ունենաս աշխատելու նաև գրքում՝ լրացնելով կամ ընդգծելով անհրաժեշտ պատասխանը: Այդպիսով ցանկացել ենք ոչ միայն տնտեսել քո ժամանակը, այլև հնարավորություն ենք տվել տեքստեր կամ բառեր արտագրելու փոխարեն պարզապես զբաղվել առաջադրանքները լուծելով:

Սիրելի՛ ուսանող, մենք վստահ ենք, որ դու հաջողությամբ կանցնես գիտելիքների ձեռքբերման նաև այս ճանապարհը:

* * *

Ձեռնարկը կազմված է «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» բուհական դասընթացի բովանդակությանը համապատասխան: Ունի նեղ մասնագիտական ուղղվածություն. առաջադրանքները կազմելիս գերազանցապես նկատի են առնվել իրավագիտական և դիվանագիտական խոսքի յուրահատկությունները: Տեքստերի հիմնական մասը ընտրվել է նշված մասնագիտությունների համար նախատեսված բուհական դասագրքերից, մենագրություններից, բառարաններից, գիտական պարբերականներից և ՀՀ պետական ատյանների (ՀՀ նախագահների, նախարարությունների, ՀՀ–ում գործող ներպետական և միջազգային կազմակերպությունների և այլնի) պաշտոնական կայքերից: Ըստ անհրաժեշտության նշվում են հեղինակ(ներ)ի անուն–ազգանուն(ներ)ը, աշխատության վերնագիրը (մենագրության դեպքում), գիտական պարբերականի անվանումը և կամ կայքէջի հասցեն:

Ձեռնարկում ընդգրկված են առաջադրանքներ, որոնք վերաբերում են խոսքային տարատեսակ անճշտությունների: Օրինակները գերազանցապես վերցված են հեռուստառադիոհաղորդումներից, պարբերական մամուլից և պաշտոնական լրատվության այլ աղբյուրներից: Այս դեպքերում կարևոր ենք համարել նյութի ոչ

թե հետաքրքրական կամ տեղեկատվական լինելու չափը և կամ անճիշտ գործածության աղբյուրը, այլ լեզվական սխալի տարածվածությունը և սխալը գործնականում շտկելու անհրաժեշտությունը:

Բացի գեղարվեստական տեքստերից, որոնք բերվում են բնագրի կետադրությամբ, մյուսներում կատարվել են որոշ խմբագրումներ:

Ձեռնարկի էլեկտրոնային տարբերակը «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» դասընթացի շրջանակներում մոտ մեկ տարի փորձարկվել է ԵՊՀ իրավագիտության, միջազգային հարաբերությունների և պատմության ֆակուլտետներում, որից հետո ենթարկվել է որոշակի խմբագրման. հաշվի են առնվել նաև ուսանողների առաջարկները:

Ձեռնարկը իր տեսակի մեջ առաջին փորձերից է: Հեղինակները սիրով կընդունեն վրիպումների և բացթողումների վերաբերյալ օգտակար դիտողություններն ու առաջարկները. դրանք հաշվի կառնվեն աշխատանքը վերահրատարակելիս:

1. ԼԵԶՈՒ. ԼԵԶՎԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԵՐԸ, ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Որո՞նք են լեզվի հիմնական գործառույթները:

_____

_____

_____

2. Տեքստերում կան բովանդակային անճշտություններ. ուղղել դրանք:

ա) Ըստ լեզուների ծագման գիտական տեսության՝ հայերենը հնդեվրոպական ընտանիքի լեզուներից մեկն է: Ցեղակից է հնդկերենին, արաբերենին, իրանական լեզուներին, վրացերենին, ռուսերենին, եվրոպական գրեթե բոլոր լեզուներին: Ցեղակից չէ, օրինակ, եբրայերենին, թուրքերենին, ֆիններենին:

բ) Գրերի գյուտից հետո (405 թ.) սկսվում է հայերենի պատմության գրային շրջանը: Այս շրջանը բաժանվում է երեք փուլի՝ հին հայերեն կամ գրաբար՝ 5–12–րդ դդ., միջին հայերեն (կիլիկյան հայերեն)՝ 12–17–րդ դդ., նոր հայերեն կամ աշխարհաբար՝ 17–րդ դարից սկսած: Վերջինս ունի երկու տարբերակ՝ արևելահայերեն և արևմտահայերեն: Արևելահայերենի և արևմտահայերենի երկփեղկման շրջանը կոչվում է գրապայքար:

գ) Բարբառները լեզվի տարածքային տարբերակներ են, որոնք յուրահատկություններ են դրսևորում միայն հնչյունական և բառային մակարդակներում: Բարբառների առաջացման հիմնական պատճառը տարածքային և լեզվական տարանջատ-

վածությունն է: Կարծիք կա, որ բարբառային տարբերությունները դրսևորվում են դեռևս գրաբարյան շրջանից. միջնադարում բարբառների թիվը հասնում է մոտ վեց տասնյակի:

դ) Արևմտահայերենը ձևավորվել է **Կը** ճյուղի բարբառի հիմքի վրա և հնչյունական համակարգով, քերականական մի շարք հատկանիշներով սերտ առնչություններ ունի գրաբարի հետ: Ձևավորման ընթացքում արևմտահայերենի վրա ազդեցություն են ունեցել թուրքերենը, ֆրանսերենը և ռուսերենը: Ըստ էության, արևմտահայերենը և արևելահայերենը երկու առանձին լեզուներ են, որոնց հիմքը հիմնականում գրաբարն է: Ներկայումս արևմտահայերենը Սփյուռքի հայության մի ստվար հատվածի ընդհանուր հաղորդակցման լեզուն է. մեծ մասամբ ծառայում է գրավոր հաղորդակցմանը:

2. ԽՈՍՔԻ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

2.1. ՃՇՏՈՒԹՅՈՒՆ

2.1.1. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

1. Ընդգծել այն բառերը, որոնցում ուղղագրական սխալ կա, և ուղղել:

ա) Աներկբա, դատընդեմ, դեսպանընկալ, տարընթերցում, բարոությունն, պաշտոնէական, որևիցե, անէական, անօրեն, քրեորեն, Դավութօղլու, Բելոօզերով, ապօրինաբար, հոտնկայս, հօդս ցնդել, նորընտիր, առընթեր, առնչվել, հրյա–գերմանական, համընկնել, խոչընդոտ, ասամբլեա, պատմա–աշխարհագրական, Եվրադատարան, նյութատեխնիկական:

բ) Միասին, ավյացիոն, զրոյական, սանկցիա, օբյեկտիվ, քրեաձին, սպրդել, սփրթնել, լերդանալ, հափշտակել, իրավախախտում, փաքցնել, ընդամենը, նյարդաբան, մեղք, հանդիպակաց, փոխզիջում, կոցկել, զեղչային, խուսափել, ուխտադրուժ, բանտախցիկ, գրոշ, Եվրոմիություն, տոննա, հյուսիսատլանտյան, տիեզերագնաց օդաչու:

գ) Ամբաստանել, անհեթեթ, պետահրավական, կիլոմետր–ժամ, բանբեր, հյուսիսեվրոպական, անբասիր, դոլար, զղջալ, ընդհանրություն, արհամարհել, տարորոշել, Կալիֆորնիա, անընդմեջ, սննդամթերք, շարժասանդուղք, քառորդ, կոորդինատ, խանգարվել, նորզելանդական, ի վնաս, քրեակատարողական, առմիշտ, իզուր, ինչ–ինչ:

դ) Պատեհ–անպատեհ, հյուսիս–արևելք, գրավընկալ, հիպնոզ, դատաքննչական, ցուցահանդես–վաճառք, բողոք–դիմում, գեր-

մանա–անգլիական, ռոմանոգերմանական, Պյուռոս, ի դեմս, Նյու Յորք, իսպառ, հարավաֆրիկյան, թղթակից անդամ, երեսունամյա, զոդել, երկու երրորդ, լեփ–լեցուն, ի հեճուկս, առմիշտ, կիլովատտ–ժամ, զիչել:

ե) Ինքնըստինքյան, ընդուպ, ինչևէ, խծկվել, կցկտուր, կմախք, ուղորդել, քրյական, մանրունք, դԲ, մտածածին, նախօրոք, պատճե, դեսպանորդ, հունահռոմեական, լետենանտ, ծեծկրտուկ, բրթել, մԲ, դաստիրակչական, անխափան, իմպիչմենտ, աղուսյակ, հրեական, Բելոռուս, հակընդեմ, ընդիմանալ, անզգուշություն, ռասսայական:

2. Լրացնել բաց թողած տառերը (ըստ անհրաժեշտության):

ա) «Է□թանազիա» (լավ մահ, թեթև մահ, բարեսպանություն) հասկացությունը գործածել է անգլ□ցի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնը: Ըստ հիվանդին մահ պատճառելու եղանակի՝ տարբերում են է□թանազիայի երկու տար□ատեսակ՝ ակտիվ (դրական) և պաս□իվ (բացասական): Առա□ինի դեպքում անբուժելի հիվանդին իր խն□րանքով կյանքից զրկում են դիտավորյալ, արագ և անցավ: Պաս□իվի դեպքում ձեռն□պահ են մնում այնպիսի գործողությունների կատարումից, որոնք ան□րաժեշտ են հիվանդի կյանքի տ□ողությունը երկարացնելու համար: Վեր□ին հար□րամյակների ըն□ացքում կարե□ցանքի շարժառիթով սպանությունը մնում է ինչպես քր□կան իրավունքի գիտության, այնպես էլ հասարակական գիտակցության մեջ ամենավիճելի կատեգոր□ներից մեկը: (*ըստ «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն» հանդեսի*)

բ) Պաշտոն□ական ընդունելությունների մասնակցելիս դիվանագիտական արարողակար□ը նախատեսում է հ□երի ներկայությունը որոշակի զգեստներով: Ազգային տոների, պետության ղեկավարի կամ արտգործնախարարի պատվին կազմակերպված ընդունելությունների ժամանակ կամ երեկոյան ժամը 8–ից հետո

մի□ոցառումների մասնակցելիս տղամարդիկ պետք է հա□նեն սև կամ մու□ գույնի կոստյումներ, որոնց պետք է համահունչ լինեն լաքապատ սև կոշիկները և մու□ գուլպաները: Ընդունված է հա□նել սպիտակ վերնաշապիկ և կապել ոչ վառ գույնի փո□կապ: Հաշվի առնելով ընդունելությունների պաշտոն□ականությունը՝ հրավեր□ի վրա նշում են զգեստի տեսակը՝ «սմոքին□» կամ «ֆ□ակ»: Եր□եք խոր□ուրդ չի տրվում կապել սև կամ ծաղկավոր փո□կապ: (Սև փո□կապ կրում են միայն ս□ո արարողությունների ժամանակ): (*Ի. Կուզնեցով, Պաշտոնական էթիկետ (թարգ.)*)

3. Ընդգծել արտասանական ճիշտ տարբերակը:

ա) Յոթ[ը] — յոթ, ք[ը]ն[ը]նել — ք[ը]ննել, ուղղել — ուղ[ը]ղել, ձեռ[ը]նպահ — ձեռն[ը]պահ, պ[ը]տ[ը]տահողմ — պ[ը]տտահողմ, զ[ը]ն[ը]նում — զ[ը]ննում, բ[ը]ջջային — բ[ը]ջ[ը]ջային, գտ[ը]նվել — գտն[ը]վել, ձեռ[ը]նտու — ձեռն[ը]տու, ձեռ[ը]նբաց — ձեռն[ը]բաց, ռեկտ[ո]ր — ռեկտ[ը]ր, սովալ[ը]լուկ — սովալլուկ:

բ) Անձեռ[ն]ոցիկ — անձեռոցիկ, արտասուք — արտասու[ն]ք, կանաչ — կանա[ն]չ, համայ[ն]քային — համայքային, երկպառակություն — երկպառակ[տ]ություն, բարձ[ր]ունք — բարձունք, նախագահը — նախագա[ն], հաշվապահը — հաշվապա[ն], [վo]տնկայս — [հo]տնկայս, բա[ն]ալի — բա[լ]անի, մանրուք — մանրու[ն]ք:

գ) Եվր[ա]տեսիլ — Եվր[ո]տեսիլ, պր[ա]ֆես[ը]ր — պր[ո]ֆես[ը]ր — պր[ո]ֆես[ո]ր, բա[շխ]ել — բա[խշ]ել, գ[ր]ոշ — գ[ռ]ոշ, ե[ռ]եսուն — ե[ր]եսուն, ա[ր]համարհել — ա[ռ]համարհել, Գե[ր]մանիա — Գե[ռ]մանիա, Ա[ր]մենիա — Ա[ռ]մենիա, սե[ղ]մագիր — սե[խ]մագիր, Վաշինգ[տ]ոն — Վաշինգ[թ]ոն, Քար[տ]եր — Քար[թ]եր, քա[ռ]որդ — քա[ր]որդ:

4. Տրված բառերը (բառաձևերը) կարդալ ճիշտ շեշտադրությամբ:

ա) Պուշկինի, գրեթե, իհարկե, վեկտոր, միմիայն, միգուցե, ռեկտոր, Տոլստոյի, դատափորձաբանական, որևէ, որպեսզի, Դոստոևսկի, միայն թե, արտգործնախարարություն, Ֆրանսիայից:

բ) Վաշինգտոն, մանավանդ, որերորդ, չի վնասել, ինչևէ, ֆիզիկա, Բերեզովսկի, քրեակատարողական, պրոֆեսոր, ի դեպ, խույս տալ, վերահաստատում, օգնում է, նկատի առնել, իզուր, բուժսպասարկում, փոխզիջումային:

5. Ընդգծել արտասանական սխալները կամ ոչ հանձնարարելի ձևերը և ուղղել:

ա) Խոս[էյ]ի — խոս[էՙ]ի, է[յ]ական — է[ՙ]ական, քրիստոն[յ]ական — քրիստոն[էյ]ական, Անդր[յ]ասյան — Անդր[է]ասյան, դաստ[յա]-րակ — դաստ[իա]րակ, զգ[ույ]շ — զգ[ու]շ, համբ[յու]ր — համբ[ույ]ր, քնք[ու]շ — քնք[ույ]շ, ա[տ]յան — ա[ծ]յան, մա[տ]յան — մա[ծ]յան, ար[ձ]յունք — ար[դ//թ]յունք:

բ) Բա[գ]րատ — Բա[ք]րատ, կանխար[գ]ելել — կանխար[ք]ելել, համեր[գ] — համեր[ք], զար[գ]ացում — զար[ք]ացում, նվա[ք]ել — նվա[գ]ել, ար[ք]ելք — ար[գ]ելք, [քթ]նել — [գտ]նել, որ[տ]եղ — որ[դ]եղ, աճուր[թ] — աճուր[դ], հաշման[թ]ամ — հաշման[դ]ամ, վար[կ]աբեկել — վար[ք]աբեկել:

գ) Մի[ջ]ազգային — մի[չ]ազգային, Ի[չ]ևան — Ի[ջ]ևան, մի[ջ]ամտել — մի[չ]ամտել, ա[ջ]ակցել — ա[չ]ակցել, հար[ց]ակվել — հար[ձ]ակվել, ար[ձ]անագրություն — ար[ց]անագրություն, ար[ձ]ան — ար[ց]ան:

դ) Կ[է]ռապատկեն — [կըէ]ռապատկեն, չ[է]ռապատկեն — [չըէ]ռապատկեն, [կըվ]ռնա — կ[ո]ռնա, չ[ո]ռոնեն — [չըվ]ռոնեն, կ[ո]ռոտա — [կըվ]ռոտա, կ[ո]ռակեն — [կըվ]ռակեն, ան[է]ռես — ան[յէ]ռես, տասն[ըէ]ռկու — տասն[է]ռկու:

ե) Ան[օ]ղջամիտ — ան[վօ]ղջամիտ, ան[է]կամտաբեր — ան[յէ]կամտաբեր, ան[է]րեր — ան[յէ]րեր, ան[յէ]րևույթ — ան[է]րևույթ, ան[վօ]րդի — ան[օ]րդի, ան[օ]տնահարելի — ան[վօ]տնահարելի, ան[է]նթակա — ան[յէ]նթակա, ան[է]ռանդ — ան[յէ]ռանդ, ան[օ]խակալ — ան[վօ]խակալ:

6. Տրված բառերի (բառաձևերի) հնչյունափոխված և անհնչյունափոխ տարբերակներից ընդգծել հանձնարարելի կամ նախընտրելի տարբերակները. բացատրել ընտրությունը:

ա) Քննիչի — քննչի
գործիչի — գործչի
կիսաեզրափակիչում — կիսաեզրափակչում
բռունցքի — բռնցքի
հինգական — հնգական
երեսունական — երեսնական
բարիություն — բարություն
խելացիություն — խելացություն
մակույկաձև — մակուկաձև
մշակույթային — մշակութային
հնչույթային — հնչութային
բարդույթավորված — բարդութավորված

բ) Մշակույթաբան — մշակութաբան
ձևույթային — ձևութային
գործառույթային — գործառութային
մշակույթասեր — մշակութասեր
զրույցասեր — զրուցասեր
զրույցընկեր — զրուցընկեր
մրցույթային — մրցութային
տիրույթային — տիրութային
խելացիություն — խելացություն
վայրկյանապես — վայրկենապես
հանգույցալուծում — հանգուցալուծում
սովորույթային — սովորութային

2.1.2. ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՇԵՐՏԵՐ: ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Օգտվելով Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»–ից և Ա. Հայրապետյանի «Օտար բառերի բառարան»–ից՝ տրվածներից առանձնացնել բնիկ հայերեն բառերը և փոխառությունները. վերջինները դասակարգել ըստ փոխատու լեզուների:

ա) Հռետոր, դատ, դատավոր, մայր, եղբայր, հրահանգ, հունվար, պարոն, դրախտ, պատերազմ, գող, տաղանդ, ակադեմիա, ամբիոն, եկեղեցի, կիրակի, մագաղաթ, փիլիսոփա, վարպետ, օրեն(ք), օրի(որդ), կապալ(առու):

Բնիկ բառեր	Փոխառություններ	Փոխատու լեզու

բ) Աչք, ջուր, վարդապետ, պաշտպան, մոմ, կլիմա, պոետ, դահիճ, բարբարոս, ատրճանակ, հյուպատոս, գմբեթ, խաղող, ծով, տղա, մանանա, շամփուր, շղթա, խանութ, կիտրոն, դատախազ:

Բնիկ բառեր	Փոխառություններ	Փոխատու լեզու

գ) Դար, շաբաթ, ուրբաթ, սրիկա, թարգման, հրեա, քարոզ, սատանա, ազգ, անապատ, աշակերտ, աշխարհ, լաբիրինթոս, ապաշխարել, ախոյան, օգուտ, բեմ, դափնի, լիտր, ոստիկան, նախարար:

Բնիկ բառեր	Փոխառություններ	Փոխատու լեզու

դ) Բազուկ, ադամանդ, բազում, ափսե, քահանա, մարզպան, բերան, աղվես, առյուծ, ալյուր, կաթսա, զույգ, դաստիարակ, կայսր, ազատ, մեռոն, կիր, ելակ, օրենք, տոպրակ, բաժակ, բախտ, դպիր:

Բնիկ բառեր	Փոխառություններ	Փոխատու լեզու

2. Գտնել բովանդակային անճշտությունները և ուղղել:

Օտարաբանությունները լեզվի բառապաշարի հարստացման միջոցներից են: Դրանք այլ լեզուներից հայերենին անցած բառեր են, որոնք գործածվում են խոսակցական լեզվում: Փոխառությունները ժամանակի ընթացքում կարող են վերածվել օտարաբանությունների, ինչպես՝ **հիերարխիա, ինտերնետ, ագիտացիա, իմիջ**:

3. Օգտվելով Ա. Հայրապետյանի «Օտար բառերի բառարան»–ից՝ գրել տրված բառերի հայերեն համարժեք(ներ)ը:

ա) Ռեֆերենտ, լոկալ, ակտուալ, ստրատեգիա, դիվիդենտ, կոնցեպցիա, սանկցիա, կոռեկտ, լոզունգ, ռեյտինգ, ագիտացիա, անոնս, դոմինանտ, էլեկտորատ, իդենտիֆիկացիա, ինաուգուրացիա, կոմպրոմիս, կոնկուրենտ, ինդեքս, լեգալ:

_____

_____

_____

_____

բ) Ինովացիա, լեգիտիմ, կոնդոմինիում, կոոպտացիա, մաժորիտար, մենեջմենթ, մաքսիմալ, պոպուլիզմ, ռեկլամացիա, կոլեգիա,

կոմպենսացիա, կոմպլեմենտար, օֆերտա, մոնոպոլիա, ֆիքսինգ, պերսոնա գրատա, պերսոնա նոն գրատա:

_____

_____

_____

_____

գ) Ապելյացիա, ասպեկտ, ավտոռեֆերատ, բալանս, բրիֆինգ, դեկլարացիա, դեմոգրաֆիա, դիլետանտ, դիկտատուրա, դիսիդենտ, էքսպերիմենտ, էքսպոնատ, իմպերիա, ինվեստիցիա, ինտեգրել, լիդեր, լոկալ, կատալոգ, ինտերվալ:

_____

_____

_____

_____

դ) Կատեգորիա, կոնտինգենտ, մեմորանդում, մենթալիտետ, մոնիթորինգ, պատենտ, պրակտիկ, պրետենզիա, պրովոկացիա, ռեեստր, սերտիֆիկատ, սուվերենություն, վետո, տոտալ, քվոտա, ֆիասկո, ֆորմատ, ֆրակցիա, ֆորում:

_____

_____

_____

_____

4. Օտարաբանությունների դիմաց գրել հայերեն համարժեքները:

ա)

1. Նստավայր պետությունը պարտավոր չէ հավատարմագրող պետությանը հայտնել **ագրեման** _____ տալու մերժման դրդապատճառները:

2. Դատախազը հայտարարեց, որ այս օրենքի նախագիծը, եթե ընդունվի, յուրօրինակ **ամնիստիա** _____ կդառնա:

3. Անկախությունից ի վեր մեր երկրում **անարխիան** _____ դառնում է կառավարման մի ձև, և զարմանալի է, որ այն դեռևս չի ստացել պետական **ստատուս** _____:

4. Այն անձինք, ովքեր **պացիենտին** _____ գիտակցաբար դրդում են էվթանազիայի կամ իրականացնում են այն, կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Սկզբնական հաշվառման փաստաթղթերը պետք է ունենան հետևյալ պարտադիր **ռեկվիզիտները** _____:

6. Ինֆորմացիոն _____ դաշտն այսօր բավականաչափ լայն է, սակայն, ցավոք, ներկայացվող **ինֆորմացիան՝** _____ միօրինակ:

բ)

1. Դասերը կընթանան ԵՊՀ 5–րդ **կորպուսում** _____:

2. Այսօր ՀՀ–ում գործում են տարբեր երկրների բուհերի տասնյակ **ֆիլիալներ** _____, որոնց մի մասի արդյունավետությունը և **ֆունկցիաները** _____ կասկածելի են:

3. Կարելի է ասել, որ մեր կուսակցությունների **ագիտացիաները** _____ գրեթե նույն **կոնտեքստն** _____ ունեն:

4. Դատական վարույթին պետք է ցուցաբերել **ադեկվատ** _____ վերաբերմունք:

5. Ամբիցիոզությունը _____ լավ հատկանիշ չէ, բայց կյանքն առանց ինչ–ինչ **ամբիցիաների** _____ վախկոտություն է:

6. Այդ փաստաբանն ունի յուրօրինակ **անալիտիկ** _____ մտածողություն:

5. Ընդգծել օտար բառերը. օտարաբանությունները փոխարինել հայերեն համարժեքներով:

ա) Գենը իր մեջ կրում է ինֆորմացիա անցյալի, ներկայի, անգամ ապագայի մասին: Միայն ասեմ, որ խոսքն այնպիսի փորձագրությունների մասին է, որոնցում հայկական կենսաշ-խարհի կարևոր տարրերը հանդիպում են արևմտյան մտքի հայտնի ֆիգուրներին: Ինքնին հասկանալի է, որ փիլիսոփայության մեջ այդպիսի խայտաբղետ էքսպերիմենտները «մաքուր ձևով» չեն արվում: Նոր գոյաբանական համատեքստերը ներխուժել են կյանք և պահանջում են մեր ներկայությունը՝ անցումային պրո-ցեսներին մասնակցելու համար: Բանակցային կոնցեպցիայի մշակման ժամանակ պետք է նկատի ունենալ պրոբլեմի ալտեր-նատիվ լուծումները: (*մամուլից*)

բ) Քաղաքացիական ժուռնալիստիկան խթանում է քաղաքա-ցիական դիսկուրսը, որի տակտիկան միտված է բարելավելու քաղաքացիների ուղղակի մասնակցությունը հասարակական կյանքին: Հայաստանյան հասարակության պարագայում մարդ-կային կապիտալի ձևավորման և օգտագործման հարցում միգրա-ցիայի պրոցեսների ազդեցությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ է արդեն ոչ միայն առաջնորդվել հետևողական ինդիվիդուալիզմի արևմտյան կոնցեպցիաներով, այլև տեղափոխվել որոշակիորեն այլ՝ սոցիալական օգտակարության հարթություն: (*մամուլից*)

6. Ընդգծել օտարաբան կառույցները և ուղղել:

ա)

1. Ուսումնասիրելով Ոսկան Երևանցու գործունեության որոշ դրվագներ՝ գալիս ենք այն եզրակացության, որ հայ մեծ տպագրիչի գործունեությունը սերտորեն առնչվել է վաճառականության հետ: **2.** Մի քանի օր ուսումնասիրելով ձեռագրերը՝ Գյուրջիևը գալիս է կարևոր ենթադրության: **3.** Ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հրահրելուն ուղղված գործողություններ են հանդիսանում այնպիսի գաղափարներ կամ հայացքներ տարածելը, որոնք խարխլում են վստահությունն ու հարգանքը որևէ ազգի, ռասայի կամ կրոնական դավանանքի նկատմամբ: **4.** Քաղաքացիական խաղաղությունը համարվում է քաղաքական կայուն համակարգերի կարևոր բնութագրիչներից մեկը: **5.** Շատ քաղաքագետների մոտ կարծիք կա, որ լիբերալիզմը անվերահսկելիության դեպքում կարող է վերածվել անիշխանության:

բ)

1. Վաղ միջնադարում յուրաքանչյուր պետության հզորության չափանիշը դա նրա ռազմական ուժն էր: **2.** Անձնական խնդիրներ լուծելիս գուցե արժե առաջնորդվել անհատական որոշումներով, բայց համընդհանուր հարցերի դեպքում խմբակային քննարկումները, կարծիքներով փոխանակվելը ուղղակի պարտադիր են: **3.** Մենք՝ հայերս, անձնական հարցերում, կենցաղում զգալի իրատես ենք, բայց երբ խոսքը գնում է կառավարման մասին, դառնում ենք տասը տարեկան ռոմանտիկ: **4.** Երբ նա արտասանել է իր ճառը, բոլորն ապշել են և սկսել են մրցել նրա հասցեին գովեստներ շռայլելու մեջ: **5.** Նա հայտարարում է, որ ինքն իրոք նվիրված է ժողովրդին, և հենց դրանում էլ կայանում է նրան ծառայելը:

7. Տրված բառերով կազմել այնպիսի բառակապակցություններ, որոնցում դրանք հանդես կգան որպես իմաստային նորաբա-

նություններ (օրինակ՝ *զամբյուղ* — սպառողական զամբյուղ, առաջարկությունների *զամբյուղ*):

ա) Դոնոր, բանկ, ընթերցում, պատուհան, խողովակ, ավագանի, գործիք, թափանցիկ, սառեցնել, գետին, լսում, ճեղքվածք, ծածկույթ, ցանց, էջ:

_____

_____

_____

_____

բ) Մկնիկ, ստվերային, փաթեթային, հոսք, խոսնակ, դեմք, ճյուղ, ճանաչում, այցեքարտ, թիրախային, լողացող, դաշտ, արկղ:

_____

_____

_____

_____

_____

8. Պարբերական մամուլից դուրս գրել 10 դիպվածային բառ. բացատրել դրանց կազմությունը և կիրառության յուրահատկությունը:

_____

_____

_____

_____

9. Գրել տերմիններին բնորոշ 7 հատկանիշ:

_____

_____

_____

10. Ընդգծել անճիշտ ձևակերպումները և ուղղել:

ա) Տերմինները հիմնականում մենիմաստ են և մեծ մասամբ գոյականներ են:

բ) Նույն տերմինը գործածվում է միայն մեկ ոլորտում:

գ) Տերմինի իմաստը ճշգրտորեն սահմանելի է:

դ) Տերմինները չունեն հուզազգացական երանգավորում:

ե) Տերմինները մեծ մասամբ չունեն հոմանշային կամ հականշային տարբերակ, սովորաբար չեն գործածվում ոճական–արտահայտչական նշանակությամբ:

11. Օգտվելով մասնագիտական բառարաններից (իրավաբանական, դիվանագիտական, քաղաքագիտական)՝ բացատրել տրված բառազույգերի իմաստային տարբերություններն ու նրբիմաստները: Օրինակ՝

Տեղահանում — *անձի հարկադիր տեղափոխումն իր տնից կամ երկրից՝ զինված ընդհարումների կամ բնական աղետների պատճառով:*

Տեղափոխություն — *ներքին միգրացիա, որ տեղի է ունենում այն ժամանակ, երբ այլ երկիր մեկնող աշխատողների մնացած թափուր տեղերը համալրվում են երկրի մյուս հատվածներից եկած աշխատողներով:*

ա) Դեսպան — հյուպատոս, օժանդակել — աջակցել, զանցանք — հանցանք, իրավաբան — իրավագետ, կազմել — ձևավորել,

ղեկավարել — կառավարել, ճանաչում — առերեսում, մեղադրյալ — մեղավոր, բացահայտում — գաղտնազերծում, տեղահանում — տեղափոխություն, բռնագաղթել — արտաքսվել, շահույթ — եկամուտ, օտարել — վտարել:

բ) Անձնագիր — անցագիր, կողոպուտ — գողություն, ավազակություն — հափշտակություն, բանտարկել — ձերբակալել, կալանավորել — բերման ենթարկել, երաշխիք — երախտիք, կուսակից — գաղափարակից, ոճրագործ — հանցագործ, հանցավոր — հանցակից, շենք — շինություն, օրինավոր — օրինական, արգելք — արգելանք, տուգանք — տույժ, սկզբունք — հիմունք:

_____

_____

գ) Ապացույց — փաստարկ, առուծախ — առևտուր, գանգատ — բողոքարկում, գույք — ունեցվածք, դատապաշտպան — փաստաբան, հանրային — հասարակական, պաշտպանություն — պահպանություն, կարճել — կասեցնել, հերքում — մերժում, ժխտում — բացառում, տեղեկություն — տեղեկատվություն, վեճ — վիճաբանություն, քննություն — զննություն:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

12. Հետևյալ բառերն ու բառակապակցությունները խմբավորել ըստ գործածության ոլորտների (իրավագիտություն, դիվանագիտություն, քաղաքագիտություն, պատմագիտություն): Առանձնացնել այն բառերը, որոնք կարող են գործածվել տարբեր ոլորտներում:

ա) Հյուպատոսարան, արտաքսում, թրաֆիքինգ, ռեակցիա, հեղափոխություն, ժողովրդավարություն, հավատարմագիր, անկախություն, խորհրդարանական, արտահանձնում, դատապահանջ (հայց), ընտրություններ, վարչակարգ, հպատակագրում, անկախացում, պատվիրակություն, հաշտարար, համաձայնագիր, միգրացիայի ֆեմինիզացում:

բ) Ապօրինի մուտք, դատավեճ, արյան սկզբունք, սահմանադրություն, զավթում, ինքնաբացարկ, ազգայնական, ստրկատիրություն, օրենսդրություն, բողոքարկում, շրջափակում, ազատագրում, մեղք, գահական ճառ, իրավահաջորդում, մաքուր մենաշնորհ, բեռնարգելք (էմբարգո), հավատարմատար, հյուպատոսական իրավազորություն, դաշտ, ենթադատություն:

13. Ընդգծել դիվանագիտական, քաղաքագիտական, իրավաբանական և պատմագիտական տերմինները. դուրս գրել այն տերմինները, որոնք կարող են գործածվել տարբեր ոլորտներում:

ա) 1961 թ. Վիեննայի կոնվենցիայի 4–րդ հոդվածի համաձայն՝ նստավայր պետությունը պարտավոր չէ հավատարմագրող պետությանը հայտնել ագրեման տալու մերժման դրդապատճառները: Դիվանագիտական վարվեցողությունը պահանջում է նույնիսկ

չհայտարարել ագրեմանի հարցման մասին, քանի որ ագրեմանի բացասական պատասխանի դեպքում կարող է բարդություն առաջանալ երկու երկրների փոխհարաբերություններում: Երբ երկու երկրների կառավարությունները ագրեմանի հարցում տալիս են դրական պատասխան, նշանակում է, որ դեսպանի կամ դեսպանորդի թեկնածուն նստավայր երկրի համար «ընդունելի անձ» է (ֆրանս.՝ persona grata): Իսկ եթե ագրեմանի մերժում է ստացվում, այսինքն՝ դիվանագիտական ներկայացուցչի պաշտոնին հավակնող անձը հարմար չէ դեսպանընկալ երկրին, այդ դեպքում նա համարվում է «անընդունելի անձ» (persona non grata), և նրա թեկնածությունը հանվում է: (*Ն. Չալրմյան, Դիվանագիտական և հյուպատոսական ծառայություն և իրավունք*)

_____

_____

_____

բ) Ավտորիտար վարչակարգը (ռեժիմը) ունի անսահմանափակ իշխանություն. այդ իշխանությունը չի վերահսկվում քաղաքացիների կողմից: Իշխանավորները կարող են կառավարել օրենքների միջոցով, որոնք շատ հաճախ ընդունում են՝ իրենց իսկ շահերից ելնելով:

Այսպիսի վարչակարգի դեպքում անխուսափելի է դառնում հարկադրական ուժի կիրառման գերակայությունը: Ի տարբերություն կառավարման տոտալիտար ձևի՝ ավտորիտար վարչակարգը ոչ միշտ է դիմում համատարած բռնությունների: Սակայն քաղաքացիների անհնազանդության և իշխանության կորստի իրական վտանգի դեպքում այս վարչակարգը բավարար հնարավորություն ունի կարգուկանոն հաստատելու համար: Ավտորիտար վարչակարգի պայմաններում բացառվում է իրական ընդդիմության առկայությունը. վերջինիս գործունեությունը կա՛մ արգելվում է, կա՛մ ճնշվում: Կառավարման այս մոդելին բնորոշ

է հետևյալ գործելակերպը. իշխանական խիստ հսկողություն է սահմանվում գոյություն ունեցող, բայց շատ թույլ կուսակցության վրա, արհմիության վրա: Այս կազմակերպությունների գործունեությունը հնարավոր է դառնում միայն այն դեպքում, երբ դրանք գտնվում են պետական օղակների հովանավորության տակ և չունեն որևէ ցանկություն մասնակցելու քաղաքական գործընթացներին: (*ըստ arsennazoyan.wordpress.com կայքի*)

գ) Իրավական պետությունն օժտված է շատ սկզբունքներով, որոնցում մեծ տեղ ունեն պետական իշխանության կազմակերպման ու գործունեության սկզբունքները: Իրավական պետության կազմակերպման ու գործունեության մնայուն, ընդհանուր սկզբունքը իշխանությունների տարանջատումն է: Այս սկզբունքը ենթադրում է միասնական պետական իշխանության բաժանում հարաբերականորեն ինքնուրույն և անկախ երեք իշխանությունների՝ օրենսդիր, գործադիր և դատական: Օրենսդիր իշխանությունն օժտված է գերակայությամբ, քանի որ հենց նա է ձևավորում, ստեղծում մնացած իշխանությունները, սահմանում դրանց գործունեության իրավական հիմքերը: (*ըստ arsennazoyan.wordpress.com կայքի*)

դ) Գործադիր իշխանությունը, հանձինս իր մարմինների, կոչված է անմիջականորեն ապահովելու օրենսդիր իշխանության ընդունած իրավական նորմերի իրականացումը: Իշխանությունների տարանջատման սկզբունքը կանխում է իշխանության չարաշահումը,

բացառում է ամբողջատիրական վարչակարգի արմատավորումը: Դատական իշխանության գլխավոր կոչումը իրավունքի պաշտպանությունն է: Իրավական պետության մեջ դատարանը միակ մարմինն է, որն իրականացնում է արդարադատություն: Դատարանն իրավական պետության մեջ անկախ է և ենթարկվում է միայն օրենքին: Դատարանի անկախությունը քաղաքացիների իրավունքների և ազատությունների կարևորագույն երաշխիքն է: (*ըստ arsennazoyan.wordpress.com կայքի*)

ե) Քաղաքական յուրաքանչյուր վարչակարգ ունի օրինականության և վստահության կարիք: Եթե վարչակարգը ժողովրդավարական է, ապա օրինականության (լեգիտիմության) սկզբունքը կարևորագույն արժեք է, իսկ իշխանության համար՝ լուրջ ազդակ: Այսօրվա քաղաքական պահանջներին համապատասխանող իշխանությունը օրինական (լեգիտիմ) է, եթե այն բխում է ժողովրդից, և քաղաքականությունն իրականացվում է մեծամասնության կամքի համաձայն: Այսինքն՝ պետական իշխանություն ունեցողը ուղղակի կամ անուղղակի ընտրված է ժողովրդի կողմից և վերահսկվում է հենց ժողովրդի կողմից: Պետական իշխանությունն իրականացվում է սահմանադրության սկզբունքների համաձայն: Հանրահայտ ճշմարտություն է, որ հասարակության վրա ազդեցություն թողնելը շատ ավելի հեշտ է օրինականություն ունենալու պարագայում, քան հարկադրանքի կամ բռնապետության միջոցով: Ամերիկացի քաղաքագետ Խուան Լինցը ունի հետևյալ բնորոշումը. «Օրինականության սկզբունքը ենթադրում է մի այնպիսի իրավիճակ, որի դեպքում հասարակության մեջ ձևավորվում է հավատ, համոզմունք իշխող պետական ինստիտուտի նկատմամբ, և չնայած եղած

թերություններին ու բացթողումներին, միևնույնն է, գործող իշխանական և պետական կառույցները նախընտրելի են, քան այն մեկը, ում կարելի է ձայն տալ ընտրությունների ժամանակ»: (*ըստ arsennazoyan.wordpress.com կայքի*)

14. Օգտվելով Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»–ից և Ա. Հայրապետյանի «Օտար բառերի բառարան»–ից՝ դուրս գրել տրված բառերի ստուգաբանությունը և բացատրությունը:

ա) Դեսպան, հյուպատոս, դատավոր, դատախազ, ատրճանակ, դիվանագետ, միգրացիա, կոալիցիա, տոհմ, ամուսին, ակադեմիա, օմբուդսմեն, դեպոզիտ, կապիտան, պորտֆել, լոբբի, քվոտա:

բ) Հոլոքոստ, սենսոր, ռասիզմ, ռիսկ, լիզինգ, նոտար, մանդատ, վետո, դե ֆակտո, դե յուրե, անկետա, օպերատիվ, պարոն, իմպիչմենտ, բյուջե, աուդիտ, բրոքեր, մայոր, հրահանգ, սուբսիդիա:

2.1.3. ՀԱՊԱՎԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Շարադրանքում կան բովանդակային անճշտություններ. ուղղել դրանք:

Հապավումը համառոտագրության մի տեսակ է, որում սպասարկու բառերն ու ածանցները չեն արտահայտվում: Դրանք սովորաբար կազմվում են բառակապակցության կամ սովորական բարդության բաղադրիչների հապավված, կրճատված ձևերի միացումով: Հապավումները լինում են տառային, վանկային, բառային և խառը:

2. Գտնել հապավումները և խմբավորել դրանք ըստ տեսակների:

ՀԷկ, ԲիԲիՍի, զագս, գիտքարտուղար, ս. թ., պետավտոտեսչություն, զինուժ, դրամարկղ, ջրմուղ, հրամկազմ, ծառուղի, ԿԲ, անտառտնտեսություն, վիճվարչություն, սոցցանց, ՀԱՊԿ, աէկ, պրն, քաղխորհուրդ, արտգործնախարար, ՀԲԸՄ, աշխօր,

կմ, Երևանջուր, մանկխորհ, քաղբանտարկյալ, կինովիպակ, բուհական, ՅՈՒՆԻԴՕ, երկարժույթ, ուստարի, ՍիէնԷն, տնտես-վար, Հայխնայբանկ, ՌՈ, մեխմաթ, ՀայՌուսգազարդ, ՆԱՏՕ, հանրօգուտ, դԲ, ռադիոհաղորդում, սոցմանկավարժություն:

_____

_____

_____

_____

_____

3. Ընդգծել տրված հապավումների արտասանության սխալ տարբերակները և ուղղել:

ԱՊՀ [ապրհը], ԿԳՆ [կրգընը], ՍՊԸ [սպը], ՀՅԴ [հրյրդը], ԱԳՆ [ագընը], ՀՄԸՄ [հոմենրթմեն], ԽՍՀՄ [Խրսրհրմ], ԱՄՆ [ամրն], ՕԵԿ [օէկ], ՊՈԱԿ [պօակ], ԵԱՀԽ [յէահրխը], ՀԱՊԿ [հապրկը], ՄԻԵԴ [միյէդ], ՈՒԳԸ [ուգը]:

4. Բացել հետևյալ հապավումները:

ՀԱՊԿ, ՅՈՒՆԻԴՕ, ՅՈՒՆԵՍԿՕ, ԶՈՒ, ՄԱԿ, ՍԴ, ՀԾ, ՆԱՏՕ, ՏՏ, ՊՈԱԿ, ԱԶ, ԿԲ, ՔԿԱԳ, ՊԱԿ, ԱԳԼՃԿ, ԶԼՄ, ՔԴՕ, ԵՄ, ԴԱՀԿ, ԱԽ, զագս, ԱրմենՏել:

_____

_____

_____

_____

_____

5. Բացել հետևյալ լատինատառ հապավումները, որոնք դիվանագիտական պրակտիկայում զետեղված են այցեքարտերի ձախ անկյունում՝ որպես տարբեր խորհրդանիշներ:

P.R., P.F., P.F.C., P.P.C., P.C., P.P., P.F.N.A., P.R.F.N.A.

6. Հնարավոր բոլոր տարբերակներով համառոտագրել տրված բառերն ու բառակապակցությունները և նշել՝ որոնք են նախընտրելի:

ա) Պարոն, դարեր, հազար, պրոֆեսորներ, դեցիբել, ֆինանսական, մասնագիտական, կիլոգրամ, դիվանագիտական, իրավաբանական, թվականներ, թարգմանություն, ներգործական բայ:

բ) Քրեական օրենսգիրք, համեմատիր, և այլն, միլիոն, մայոր, գեներալ–գնդապետ, օտարաբանություն, հազվադեպ, սանտիմետր խորանարդ, փոխգնդապետ, զինծառայող, սույն թվականի:

7. Գտնել համառոտագրության սխալները և ուղղել:

1. Արցախյան հերոսամարտի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ փ/գ–տ Ա. Մարգարյանը: **2.** Սթ. հոկտեմբերին սպասվում է հակամարտող երկու երկրների արտգործնախարարների հանդիպումը: **3.** Պրն. նախարար, Ձեր հանձնարարությունը կատարված է: **4.** Համեմատելով նույն ստեղծագործության երկու թարգմ–ները՝ նկատել ենք, որ տարբերությունները դրսևորվում են հիմնականում բառապաշարային մակարդակում: **5.** 2011 թ. ընթացքում SS ոլորտում գրանցվել է 22.6% միջին տարեկան աճ: **6.** 2011 թ.–ին պաշտոնապես հայտարարվել է սինգապուրյան խոշոր ինժեներական կազմակերպ.–ից մեկի՝ սինգապուրյան ST Kinetics ընկերության մուտքը Հայաստան: **7.** ԵՊՀ ռ./գ. ֆակուլտետը ստեղծվել է հայ բանասիրության ֆակուլտետի հենքի վրա: **8.** ԵՄ–ի անդամակցության խնդրի քննարկմանը մասնակցում էին նաև մի քանի պրոֆ.՝ հրավիրված ՀՀ տարբեր բուհերից: **9.** Հյուսիս–հարավ մայրուղու 40 կմ. արդեն պատրաստ է:

2.1.4. ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ: ԲԱՌԱԿԱՋՄՈՒԹՅՈՒՆ: ԲԱՌԵՐԻ ՁԵՎԱԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐ, ԲԱՌԱՅԻՆ ՁՈՒԳԱԿՑՈՒՄՆԵՐ

1. Դուրս գրել իմաստային նորաբանությունները: Գրել դրանց նախկին և նոր իմաստները:

ա)

1. Այս կուսակցության գործունեությունը երկրում օրինական կարգավիճակ է ստացել դեռևս 2007 թ., որից հետո կուսակցությունն ակտիվ գործում է քաղաքական դաշտում: **2.** Միջազգային խոշոր կազմակերպություններն ու վերլուծական կենտրոնները, մշակելով քաղաքական կայունության ինդեքսներ, նախաձեռնում են համեմատական հետազոտություններ: **3.** Ի սկզբանե ձևավորվել է հակամարտության կարգավորման երկու մոտեցում՝ փուլային և փաթեթային: **4.** Ձեռք բերելով մուտքի արկղ և օգտվելով հրահանգներից՝ հնարավոր է կատարել անհատական տվյալների մուտքագրում: **5.** Սոցցանցերում օգտատիրոջ գործողությունների ժապավենը որոշակի պատկերացում է տալիս նրա մասին:

_____

_____

_____

_____

բ)

1. Գեղեցիկ և գրագետ խոսելու կարողությունը ցանկացած մարդու այցեքարտն է ամենուր: **2.** Յուրաքանչյուր երկրում ընտրությունների թափանցիկությունը պայմանավորված է բնակչության կենսամակարդակով: **3.** Թուրքիան ոչ միայն պատրաստակամություն հայտնեց խորացնելու Թունիսի հետ իր

քաղաքական և տնտեսական համագործակցությունը, այլև ցանկություն հայտնեց մասնակցելու Թունիսի պետական ինստիտուտների կայացման գործընթացին: **4.** Միգրացիոն հոսքերը այսօր շարժվում են Արևմուտքի ուղղությամբ, որի պատճառով լուրջ խնդիրներ են ծագում ընդունող երկրներում: **5.** Հաջորդ օրը այդ տեղեկությունը ջնջվել էր լրատվականի գլխավոր էջից:

_____

_____

_____

_____

գ)

1. ԿԱԵ բոլոր երկրները ունեցել են արտաքին ֆինանսավորման կարիք՝ ծածկելու համար ներքին խնայողությունների և ներդրումների մակարդակների միջև առկա ճեղքվածքը: **2.** Այն երկրները, որոնց հաջողվել է պահպանել կապիտալ հոսքերը, կրել են ամենափոքր կորուստները, իսկ այն երկրները, որոնցում կապիտալ հոսքերը դադարել են, ունեցել են մեծ անկում: **3.** Ռումինիայի վարչապետ Ռադու Վասիլիեն այն կարծիքին էր, որ Հայաստանը կարող է լավ կամուրջ լինել իր երկրի համար դեպի Կովկաս և Կենտրոնական Ասիա: **4.** Համաձայնագրի կնքումը ՀՀ–ին հնարավորություն է տալիս ձևավորելու առևտրատնտեսական և տրանսպորտային նոր միջանցքներ: **5.** Վարչապետի աշխատակազմի կողմից մոտ օրերս կստեղծվի կադրերի բանկ:

_____

_____

_____

_____

դ)

1. Օտարերկրյա պատվիրակությունները, մասնակցելով տվյալ երկրում տեղի ունեցող բանակցություններին, օգտվում են հատուկ արտոնություններից և իմունիտետից: **2.** Եթե դիվանագետը քրեական հանցագործություն կատարի, ապա նստավայր երկրի կառավարությունը իրավասու է դիվանագիտական խողովակով պատիժ պահանջելու դիվանագետի կատարած հանցանքի համար: **3.** Դիվանագիտական ճկուն հարաբերությունները կարող են նպաստել նույնիսկ լողացող փոխարժեքի կայունացմանը: **4.** Ղեկավարը ստեղծում է իր նպատակներին համապատասխան բուրգը: **5.** Այսօր աշխարհում քաղաքական բազում գործիչներ բացում են համացանցային գործիքներ՝ իրենց PR–ն ապահովելու և ընտրողների հետ անմիջական կապ պահպանելու համար:

_____

_____

_____

_____

2. Ընդգծված բառերը ենթարկվել են իմաստափոխության. դուրս գրել դրանք և նշել իմաստափոխության տեսակը (ընդլայնում, նեղացում և այլն):

1. Ծերունի վանականը լուռ թերթում էր գրքի **գլուխները**՝ մտովի թերթելով նաև իր հիշողության ծալքերը: **2.** Դանակի **բերանը** շատ սուր էր, և փոքրիկը անզգուշաբար կտրեց մատը: **3.** Մեր տունն այդ աներեսի համար հյուրանոցի **համարի** էր վերածվել: **4.** Արվեստի շատ գլուխգործոցներ գուցե այդպես էլ չծնվեին, եթե չգտնվեին արժանի **մեկենասներ**: **5.** Դաժան ու անողոք էր **կայսեր** հրամանը: **6.** Համերգին մասնակցում էին ռուսական էստրադայի **աստղերը**: **7.** Նա արագ փորփրեց պահարանի բոլոր **աչքերը**, բայց ոչինչ չգտնելով՝ ձեռնունայն հեռացավ: **8.** Հարբած վարորդը

սթափվեց **ոստիկանի** սուլիչի ձայնից: **9.** Այսուհետև **հանդեսը** տպագրելու է միայն խմբագրակազմում ներքին գրախոսություն անցած հոդվածները:

_____

_____

_____

3. Դուրս գրել սխալ կազմված բառերը և ուղղել:

ա)

1. Այդ ֆրանսացի զորավարի մասին լեգենդներ էին պատմում դեռ կենդանության օրոք: **2.** Բուհը սահմանել է որոշ արտոնություններ առանց տարեկետման իրավունքի սովորող անձանց համար: **3.** Այս տարի մրցույթը բարձր է եղել հատկապես իրավագիտության, միջազգային հարաբերությունների, ռոմանոգերմանական և տնտեսագիտության ֆակուլտետներում: **4.** Կազմակերպության քաղաքականության հիմնական նպատակը կապիտալի առավել արդյունավետ ներդնումն է: **5.** Որոշումը ընդունող անձինք թերևս էական գումար չեն համարում ամսեկան աշխատավարձի 5 տոկոսի «տնտեսումը»:

_____

_____

_____

բ)

1. Եվրոբյուրոկրատների անտարբերությունը ոչ մի բանական հիմք չի թողնում «եվրոպական գեղեցիկ արժեքների» մասին շաղակրատանքը լուրջ ընդունելու: **2.** «Գագառու» կոչվող Ձեր ՍՊԸ–ին չի սպառնում սննկացում: **3.** Քաղաքագետների միության նախագահը հորդորում է զերծ մնալ հարցի ավելնորդ

շահարկումներից: **4.** Մոսկվան հիմա արդեն կապնվել է Ղրիմի հետ նաև գերարագ երկաթուղով: **5.** Հավաքականի կազմում ընդգրկված են նաև շիրակեցիներ, էջմիածնեցիներ:

_____

_____

_____

գ)

1. «ԱՅԲ» միջազգային դպրոցն ունի հոգեբարձուների մեծ խումբ, որը ֆինանսապես օգնում է գերազանց սովորող երեխաներին: **2.** Արդեն հայտնի է, թե ով է ներկայացնելու Հայաստանը Եվրոտեսիլում: **3.** Դուք հավանաբար մոռացել եք թղթերին կցել նաև հաշվանդամության վկայականը: **4.** Տեղին են նաև ներողության խոսքերը, եթե զանգը աննախատեսված է: **5.** Այդ կողմերում արագ է կողմնորոշվում. բնիկ աշտարակեցի է:

_____

_____

_____

4. Բացատրել ձևային ընդհանրություն ունեցող տրված բառերի իմաստային տարբերությունները:

ա) Գործունեություն — գործունություն, գործառություն — գործառնություն, հավաքել — հավաքագրել, հավատ — հավատք — հավատամք, սովորույթ — սովորություն, զգացում — զգացմունք, հայցորդ — հայցվոր:

_____

_____

_____

բ) Ընդդիմախոս — գրախոս, կազմակերպական — կազմակերպչական, տպել — տպագրել, կասեցնել — կանգնեցնել, հայեցակետ — հայեցակարգ, վաստակաշատ — վաստակաբեկ, քննել — քննարկել, փորձել — փորձարկել:

գ) Հազվադեպ — հազվագյուտ, հավակնոտ — հավակնորդ, հետախուզում — հետախուզություն, գերակա — գերադաս, որակել — որակավորել, չափ — չափս, փոխակերպել — փոխարինել, ապաստան — ապաստարան:

5. Փակագծերում տրված բառերից ընտրել ճիշտ տարբերակը:

ա)

1. Այսպիսի ռազմավարությամբ հնարավոր է շրջանցել (**վերահաս, վերահասու**) վտանգը: **2.** Հարցը (**վերաբերվում է, վերաբերում է**) գների ինդեքսի (դասիչի) սպասվող աճին: **3.** Նա միշտ էլ աչքի է ընկել իր մասնագիտական (**պատրաստակամությամբ, պատրաստականությամբ**): **4.** (**Տնօրենությունը, տնօրինությունը**) կատարել է անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ: **5.** Հիշիր, որ դատարանում կեղծ (**ցուցում, ցուցմունք**) տալը նույնպես հանցանք է: **6.** Այդ հաստատությունում աշխատողների (**պաշտոնեական, պաշտոնական**) անհամատեղելիությունը քննարկման առարկա է դարձել:

բ)

1. (**Տեղային, տեղական**) կառավարման մարմինների ընտրություններին քիչ ժամանակ է մնացել: **2.** Նման դասակարգում կատարելիս պետք է անպայման նկատի ունենալ նաև ածանցների (**գործունեության, գործունության**) աստիճանը: **3.** Կարիք չկա սարքը նորից (**փորձելու, փորձարկելու**): **4.** Պատվիրակների հանդիպումը հետաձգվեց, որին լրագրողները տվեցին իրարամերժ (**մեկնություններ, մեկնաբանություններ**): **5.** Կրթական ոլորտում պետք է կտրուկ (**միջոցներ, միջոցառումներ**) ձեռնարկել ուսման որակը բարձրացնելու համար: **6.** Տարրական (**հասկացություն, հասկացողություն**) չունեք գործից, դրա պատճառով էլ մինչև այսօր չեք կարողանում ընդհանուր հայտարարի գալ:

գ)

1. Բանավիճող կողմերի միջև (**հաղորդակցություն, հաղորդակցում**), փոխըմբռնում այդպես էլ չիրականացավ: **2.** Ներողություն, հավանաբար ինչ–որ (**շփոթություն, շփոթմունք**) է եղել, սխալվել ենք: **3.** Դատավճռի (**հրապարակումից, հրատարակումից**) հետո ներկաների գոռում–գոչյունները չէին դադարում: **4.** Տարիների

ընթացքում, բախվելով կյանքի դժվարություններին, մարդն ավելի է (**իմաստանում, իմաստնանում**): **5. Վճռաբեկություն** տերմինը ծագել է (**ֆրանսիական, ֆրանսերեն**) **casser** բառից: **6.** Ըստ քաղաքում պտտվող լուրերի՝ անտեսվել է նամակի գաղտնիության (**պահպանումը, պաշտպանումը**):

դ)

1. (**Ավանդության, ավանդույթի**) համաձայն՝ աստղային երկինքը դիտելիս Պյութագորասը հանկարծ մի հրաշալի մեղեդի է լսել: **2.** Կրոնական այդ ուսմունքի (**հետնորդները, հետևորդները**) մոլորության մեջ են գցում մարդկանց: **3.** Բանակցելիս և առհասա_ րակ շփումների ժամանակ ճապոնացիներին բնորոշ են լսողունակությունը, ինքնատիրապետումը, զգացմունքայնությունից (**զուրկ, զերծ**) մնալը: **4.** (**Զգայնությունը, զգայությունը**) օբյեկտիվ աշխարհի սուբյեկտիվ պատկերն է: **5.** (**Բավական, բավականին**) առաջարկներ են եղել: **6.** Մեծ (**զգուշավորություն, զգուշություն**) էր անհրաժեշտ վերահաս աղետից խուսափելու համար:

6. Գտնել բառագործածության սխալները և ուղղել:

1.

ա) Մեր պետականության սահմանները շատ որոշակի են:

բ) Ձեր հավաքագրած նյութերը կարող են փոխել գործի քննության ընթացքը:

գ) Բավական շրջահայաց անձնավորություն է մեր նոր կառավարիչը:

դ) Ընտանեկան ծանր դրության կապակցությամբ խնդրում ենք նրան հատկացնել դրամական օգնություն մեկ աշխատավարձի չափով:

2.

ա) Այդ բնակավայրերի միջև հաղորդակցումը վտանգված է:

բ) Տնօրինությունը կատարել է նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքներ, և նոր փոփոխություններ են սպասվում:

գ) Նա միշտ էլ աչքի է ընկել իր մասնագիտական պատրաստականությամբ:

դ) Պետք չէ հարցը դիտել միայն այդ տեսանկյունից:

3.

ա) Քաղաքական այդ նոր կառույցի ղեկավար է ընտրվել նախկին պատգամավորներից մեկը:

բ) Կողմերը համաձայնագրով ստանձնում են հետևյալ հիմնական պարտականությունները:

գ) Հանրային հարաբերություններում այժմ շատ բան է փոխվել. փոխվել են հատկապես արժեքային համակարգը և գեղեցիկի ընկալումը:

դ) Պետք է խուսափել վերահասու վտանգից:

7. Բացատրել տրված բառազույգերի իմաստները, յուրաքանչյուրով կազմել մեկական նախադասություն:

Գնողականություն — գնողունակություն, հառնել — հառել, հավաստել — հավաստագրել, հրավեր — հրավերք, միաժամանակ — միառժամանակ, պաշտպանել — պահպանել, տեղի տալ — տեղիք տալ, ուսում — ուսմունք, պատվեր — պատվիրան:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

8. Գտնել բառագործածության սխալները և ուղղել:

ա)

1. Այդ տվյալները հեղինակին հնարավորություն տվեցին հիմնավորելու իր եզրակացությունները և նախադասությունները: **2.** Այսօր վերջապես հռչակվեց երկու տարի տևած դատավարության դատավճիռը: **3.** Գործադիր իշխանությունը, հանձինս իր մարմինների, կոչված է անմիջականորեն ապահովելու օրենսդիր իշխանության ընդունած իրավական նորմերի իրացումը: **4.** Կատարված խախտումների դիմաց կազմվեց արձանագրություն: **5.** Նա հագավ վերարկուն ու գլխարկը և դուրս եկավ հիվանդասենյակից: **6.** Դժվար է որոշել նախատեսվող տույժի չափը. այն կարող է գերազանցել 500 դոլարը: **7.** Այդ հարցի հետ կապված՝ ունեմ դիտողություններ:

բ)

1. Այս տարի լրանում է ԵՊՀ–ի հիմնադրման 98–ամյա տարելիցը: **2.** Նա բացառապես դեմ չէ այդ առաջարկին, բայց դա չի նշանակում, որ անվերապահորեն ընդունում է Ձեր տեսակետը: **3.** Այս տարվա բյուջեն մասնագիտորեն լավ մշակված է և մտացածին: **4.** Երևանից Արցախ ճանապարհը երկար է, և ավտոմեքենայով մեկ ժամում չի կարելի այն անցնել: **5.** Մեր սպասելիքներն ի դերև ելան, և կարճ ժամանակում լուծվեցին մեզ հուզող բոլոր խնդիրները: **6.** Անզգուշությամբ առաջացրել է ծանր կամ միջին ծանրության վնաս մարդու առողջությանը: **7.** Ինչպե՞ս էր բանախոսի ազգանունը:

գ)

1. Պատկերավորությունը խոսքի կարևորագույն արժեքներից է: **2.** Նոր թղթադրամներն օժտված են պաշտպանական հազվադեպ հատկանիշներով: **3.** Սույն հոդվածը նպատակ ունի երաշխավորելու անձին ապօրինի մեղադրանքից: **4.** Լրագրողներն ու խմբագիրները հնարավորություն ստացան մտքերով փոխանակվելու փորձառու խորհրդատու Լորա Քելլի հետ: **5.** ՀՀ ԿԲ նախագահը, անկախ իր պաշտոնեական դիրքից, իրավասու չէ կառավարելու պետական ձուլակտորները: **6.** Մեր նպատակն է, որ հարցը բարձրացվի Եվրախորհրդում: **7.** Եղեռնի 100–ամյա տարեդարձին ընդառաջ ստեղծվել է կազմակերպական հանձնաժողով:

9. Գտնել ավելորդաբանությունները. անհրաժեշտության դեպքում վերաշարադրել նախադասությունները:

ա)

1. Մեզ հետաքրքրում է այն, թե կարո՞ղ եք Դուք արդյոք մեզ տրամադրել Ձեր մյուս մասնաճյուղի գտնվելու վայրը և կամ էլ հնարավորության դեպքում ուղղակիորեն տեղեկացնել մեզ այդ մասին: **2.** Տնօրենը Ձեր ներկայացրած փաստաթղթի տակ արդեն ստորագրել է: **3.** Ի նկատի ունենալով այս թերությունները՝ առաջարկում ենք որոշ փոփոխություններ կատարել նախագծում: **4.** Մենք հույս ունենք, որ հետագայում կշարունակվի մեր համատեղ համագործակցությունը: **5.** Վերջին շրջանում կոլեկտիվում աշխատակիցների միջև ձևավորվել են անհանդուրժելի հարաբերություններ: **6.** Մոտենալով հուշարձանին՝ ի նշան շնորհակալության՝ երիտասարդները խոնարհեցին գլուխները: **7.** Շտապ պիտի զբաղվել տան ներքին ինտերիերով: **8.** Հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված են որոշ արտոնություններ:

բ)

1. Երկրի նախագահը հանդիսանում է երկրի առաջին դեմքը: **2.** Բարձրանալիս մի՛ անտեսիր ներքևում կանգնածներին. ներքև իջնելիս դու դեռ հանդիպելու ես նրանց: **3.** Հաշվի՛ առեք՝ բնագրի տեքստում ուղղագրությունն այդպես է տրված: **4.** Մի՛ փորձեք անտեղի ու անպայման հակադրվել պետական լուրջ ատյանների որոշումներին, քանզի դա խելամիտ ճանապարհ չէ հաջողության հասնելու համար: **5.** Ամենալավ ուսուցիչը դա կյանքն է. թանկ է վերցնում, բայց լավ է բացատրում: **6.** Մոտ 121 մարզիկ է մասնակցելու մեծ թենիսի առաջիկա մրցումներին: **7.** Այդ ներարկումից հետո ծայրաստիճան վատթարացավ հիվանդի վիճակը: **8.** Նա մի կողմից՝ խոստովանել է, մյուս կողմից՝ փորձել խուսափել պատասխանատվությունից:

գ)

1. Մրցության վերջնական արդյունքը կիմանանք մարզիկի ապագա կատարելիք քայլերով: **2.** Այդ մարդն ինչո՞ւ համար է անվերջ խոսում. նրան ասե՛ք՝ ձայնը կտրի: **3.** Նորանշանակ վարչապետը հետաքրքրվել է իրականացվող աշխատանքների մասին և նշել, որ հարկ եղած դեպքում կարող են հենվել իր աջակցության վրա: **4.** Հանդիպեցինք մեր փողոցի վրա. բոլորովին չէր փոխվել, նույն խանդավառ երիտասարդն էր: **5.** Հարցը կայանում է նրանում, որ երկխոսության ժամանակ կողմերը համաձայնության չեկան: **6.** Իրենք, համաձայնելով ՀՀ նախագահի և արտգործնախարարի վարած արտաքին քաղաքականության հետ, մնում են ընդդիմություն: **7.** Դեռահասների դաստիարակության որակը անմիջականորեն պայմանավորված է ընտանիքի սոցիալական վիճակի և ծնողների կրթական մակարդակի հետ: **8.** Հարցի լուծման այս տարբերակը ավելի նախընտրելի է:

_____

_____

_____

_____

_____

_____

դ)

1. Խնդիրը կայանում է նրանում, որ ղարաբաղյան հարցը երկար տարիներ է՝ չի լուծվում: **2.** Երբ նրան տեսնես, կրկին անգամ հիշեցրո՛ւ իր խոստումը: **3.** Կրած ֆինանսական վնասը հասնում է մինչև 5 միլիարդ դրամի: **4.** Քրդական հարցը Մերձավոր Արևելքի թերևս ամենալայնածավալ ու բարդ խնդիրներից է, որը իր մեջ է ներառում Թուրքիան, Իրաքը, Իրանը և Սիրիան: **5.** Տեղեկանքը տրվում է առ այն մասին, որ տվյալ անձը այդ ՍՊԸ–ի հիմնադիրն

է: **6.** Լևոն Արոնյանը շախմատային մրցաշարերի այս փուլում առայժմ ընթանում է առաջին տեղում: **7.** Մեր մեծագույն թերությունը կայանում է նրանում, որ շատ շուտ ենք հանձնվում: **8.** Ըստ կառավարության որոշման՝ դա պետք է համարվեր որպես շրջանառությունից դուրս եկած ապրանքատեսակ:

_____

_____

_____

_____

_____

_____

ե)

1. Արքան մտածում էր թագավորության ապագա ճակատագրի մասին: **2.** Ռաշիդ Գաննուշին, Թուրքիայից վերադառնալով, հայտարարեց, որ ավելի նախընտրում է իր կուսակցությունը: **3.** Հասմիկների հեղափոխությունից քիչ անց Թուրքիան իր աջակցությունը հայտնեց Թունիսում տեղի ունեցող գործընթացներին: **4.** Նա կրկին անգամ թերահավատորեն վերաբերվեց նախարարի խոսքերին: **5.** Նավթային գործակալությունը կտրուկ կերպով կրճատել է հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների համար նախատեսված նավթի բացթողումը: **6.** Ըստ այդ կանոնների համաձայն՝ անսթափ վիճակում աշխատանքի ներկայացողը անմիջապես ազատվում էր աշխատանքից: **7.** Նա պատասխանատու է հանդիսանում փորձագիտական յուրաքանչյուր սխալի համար:

_____

_____

_____

10. Կրճատել կամ վերաշարադրել տեքստը՝ խուսափելով մտքի կրկնություններից:

ա) Եթե մարդու սիրտը լի է Ձեր հանդեպ դժգոհությամբ և անբարյացակամությամբ, ապա աշխարհում հայտնի ոչ մի տրամաբանությամբ նա չի հակվի Ձեր տեսակետին: Մոթմոթան ծնողներին, բռնակալ տերերին և ամուսիններին, ինչպես նաև կռվարար կանանց անհրաժեշտ է հասկացնել, որ մարդիկ չեն ցանկանում փոխել իրենց հայացքները: Նրանց չի կարելի ստիպել, որ փոխեն հայացքները, չի կարելի դրդել, որ անպայման համաձայնեն Ձեր կարծիքին: Որքան էլ խիստ և ստիպողաբար հարցադրումներ անեք, դժվար թե լիարժեք հասնեք Ձեր ուզածին: Բայց միգուցե կհաջողվի նրանց բարյացակամորեն մոտեցնել Ձեր տեսակետին: Հնարավոր է՝ նրանք համաձայնեն Ձեզ հետ, եթե մեղմ կերպով հայտնեք տեսակետներ և սիրալիր զրուցեք նրանց հետ: Միշտ հիշե՛ք հայտնի ասացվածքը. «Մի կաթիլ մեղրն ավելի շատ ճանճ է գրավում, քան մի ամբողջ կճուճ լեղին»: Ուստի եթե ցանկանում եք գրավել մարդուն, ապա նախ և առաջ եղեք սիրալիր, բարյացակամ և մեղմ ու աննկատ համոզեք նրան: (*ըստ Դ. Քարնեգիի*)

բ) Փետրվարյան հեղափոխությունը ծառայեց քեմալականների շահերին: Պատերազմը ընթանում էր հայերի միջև: Մարդկային կորուստների առումով նույնպես կարող ենք համաձայնել այն տեսակետին, որ թուրքերի համար կարևորը հայերի կոտորածն էր, իսկ այս դեպքում հայն էր թափում հայի արյունը, եղբայրն էր սպանում եղբորը. դա միանգամայն համապատասխանում էր քեմալական թուրքերի ծրագրերին: Հայ ժողովրդի զավակների

կորստի առումով ապստամբությունը ջուր լցրեց թուրքերի ջրաղացին: (*մամուլից*)

11. Գտնել կրկնաբանությունները. անհրաժեշտության դեպքում վերաշարադրել նախադասությունները:

ա)

1. Տեղի ունեցածը Եվրախորհրդարանում ներկայացվել է որպես մարդու իրավունքների ոտնահարման կոպիտ խախտում: **2.** Բանախոսը կարևորեց Վաշինգտոն–Երևան երկկողմանի երկխոսությունը: **3.** Տուժողը լրագրողին դատի է տվել՝ պահանջելով իրեն պատճառած բարոյական վնասը փոխհատուցել դրամական կոմպենսացիայով: **4.** Գզրոցից վերցրեց գրիչը և հապճեպ շարադրեց իր ինքնակենսագրությունը: **5.** Մտից գրանցման համարը համարվում է նրա հերթական համարը: **6.** Ի տարբերություն էթիկետի՝ դիվանագիտական վարվեցողության նորմերը չունեն պարտադիր ուժ, մինչդեռ էթիկետը ունի:

_____

_____

_____

_____

_____

_____

բ)

1. Արդեն սկսվել է մարզիկների հավաքականների հավաքագրումը, և լավագույն հավաքականները կմեկնեն մասնակցելու ամառային օլիմպիադային: **2.** Պետք է հանդիպեմ աշխատանքային գործընկերներիս: **3.** ՀՀ–ում հյուպատոսական բնագավառում մշակված քաղաքականություն չկա. առանձին հյուպատոսական

հիմնարկների հիմնումը տեղի է ունեցել հիմնականում ստվար գաղթօջախ ունեցող քաղաքներում: **4.** Եգիպտոսում ստեղծվել է անվերահսկելի քաղաքական իրավիճակ: Այդպիսի քաղաքական իրավիճակ է ստեղծվել նաև Սիրիայում: **5.** Ըստ մարզպետարանի տված տեղեկության համաձայն՝ կառավարությունը օժանդակելու է այդ տարածաշրջանի համայնքին կարկուտի հետևանքով վնասված ցանքատարածությունները «վերակենդանացնելու» գործում: **6.** Դու մեր գործարքին վերաբերվի՛ր, ինչպես որ առաջվա պես:

_____

_____

_____

_____

_____

_____

գ)

1. Տեղի հայ համայնքը բազմիցս անգամներ դիմել է պետական ատյաններին՝ հայկական երկօրյա դպրոց բացելու խնդրանքով: **2.** Հասարակական զբոսայգին, որտեղ այցելելով բավականություն են ստանում քաղաքացիները, հասարակական բարիք է: **3.** Եսասիրությունը սեփական հետաքրքրությունների գերադասումն է ուրիշների հետաքրքրություններից, հասարակական հետաքրքրություններից, դրանց շահագործումն է: **4.** Քննության ավարտին մնացել է կես ժամ ժամանակ: **5.** Առաջ գնալու փոխարեն դեպի հետ ենք գնում: **6.** Պահանջվում են բարձրագույն կրթությամբ 25–35 տարեկան բարետես արտաքինով աղջիկներ՝ վաճառքի և սպասարկման բաժիններում աշխատելու համար:

2.1.5. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կազմել տրված գոյականների հոգնակին:

ա) Հոչակագիր, վերնատուն, տղամարդ, քաղաքագետ, տոնածառ, բուրվառ, կայսր, ակնոց, ձեռնաշղթա, ոսկեղեն, շփոթմունք, գաղթավայր, կամք, ձեռագիր, մատենաշար, թիմ, ստուգայց, թիկնազոր, քարտատեր, լուսանցք, հորատանցք, սարդոստայն, մշակ, ետնադուռ, փողք, արտագաղթ, մանրէ, հանցակից, ականանետ:

բ) Ակնարկ, ատամնաշար, ձյուն, տեսակետ, կողմնակից, ստեղն, հեռագիր, վազանց, աշխատավարձ, նստացույց, նորահարս,

հանրաքվե, սարահարթ, հարթավայր, սպա, վագր, խնդրագիրք, շահույթ, գրչատուփ, մեծատուն, քաղհայց, ականջակալ, փաստարկ, իրավապահ, ծովեզր, վիրակապ, նոթատետր, ժողովուրդ, նռնականետ:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

2. Ընդգծել այն գոյականները, որոնք ունեն հոգնակիի կազմության զուգաձևություններ:

ա) Եղեգն, կին, համարանիշ, հաշվապահ, սպա, տանուտեր, դաշնակից, սառցալեռ, գամփռ, քաղաքապետ, սպի, վերնատուն, շտաբ, սողանք, ստորակետ, երկրաշարժ, լուսանցք, խորհրդանիշ:

բ) Ասուլիս, տեր, մշակույթ, վերնահարկ, տոմսարկղ, մարզպետ, հետիոտն, լեռնանցք, լուսարձակ, փորձագետ, զորք, գետեզր, հուշատետր, սահմանապահ, անձ, համերգ, տեսակետ, օրհներգ, պարոն:

3. Ընդգծել հոգնակիի կազմության սխալները և խոսակցական ոճին բնորոշ ձևերը:

ա) Քարտաշներ, շտաբեր, խաղամոլներ, գյուղացիք, վերնահարկեր, գանգրոսկրեր, մեծատներ, օրինազանցներ, տեսակետեր, ակնոցներ, սպայեր, սանրներ, տնամերձներ, քաղաքագլուխներ, այլոք, սարահարթեր, տիարք, անդրադարձեր:

բ) Խաղաթղթեր, թմեր, խարբերդցիք, մենապարեր, տոնածառներ, քվեաձայներ, բաղաձայններ, պատճեներ, ենթակետեր, երկնաքերեր, անձիք, սպիեր, դիտակետներ, սփյուռքեր, շարասյուններ, աշխատավարձներ, բրենդեր:

4. Գտնել և ընդգծել հոդերի սխալ գործածությունները:

ա)

1. Հանդիպումն սկսվեց նշված ժամանակից քիչ ուշ: **2.** Ժողովուրդն հուսախաբ է եղել արդեն: **3.** Մեր հրանոթներն որոտացին նոր թափով: **4.** Բանակցությունների այսպիսի ընթացքը ստիպում է դիվանագիտական ճկունություն և զգուշություն ցուցաբերել քննարկմանը: **5.** Գործը կատարում էր սառնասրտորեն, անխոս, և այդ ընթացքում ինչած որևէ հարցը կամ խոսքը չէր կարող նրան շեղել: **6.** Այդ հարցն անշուշտ մեզ հետաքրքրում է: **7.** Փայլատակող աստվածն երևում էր Հռոդոսից շատ կիլոմետրեր հեռու, և շուտով նրա համբավը տարածվեց ամբողջ անտիկ աշխարհով մեկ:

բ)

1. Առանձին այրուձի ուներ նաև Սյունիքը, որն, ավելի ուշ դուրս գալով մարզպանության կազմից, պարսկական զորքում ներկայանում էր առանձին այրուձիով: **2.** Խոսքն, այսպիսով, երկկողմանի գիտակցված հանցանքի մասին է: **3.** Նախ հարց է առաջանում մեխանիզմի մասին, որն հնարավոր է դարձնում նոր համատեքստերի ձևավորումը: **4.** Գենային հիշողության մասին հիշատակությունները բավականին խոր արմատներ ունեն: **5.** Պլինիուսին ամենից շատ զարմանք պատճառեց այն, որ արձանի բթամատն երկու ձեռքով գրկել կարող էին միայն շատ քչերը: **6.** Նրա մտադրությունները անմեկնելի էին թվում:

գ)

1. Ձեզանից յուրաքանչյուրդ պարտավոր է հարգել ծնողներիդ ցանկությունը: **2.** Մենք՝ ժամանակակից մարդիկս, շատ ենք տարվել նորագույն տեխնոլոգիաներով: **3.** Ձեզանից՝ ամենքիցդ, պահանջվում է պահպանել լռություն և չընդհատել զեկուցողին: **4.** Իմաստուն ծերունու գլխովը ինչեր ասես չեն անցել: **5.** Մտքովս անգամ չէր անցնի, որ աղջիկն ստիպված էր այդ քայլին դիմել: **6.** Ուսումնասիրություններն ցույց են տալիս, որ գործազուրկ կանանց ու տղամարդկանց տարիքային տարբեր խմբերում գոյություն ունեն միատեսակ վարքի մի քանի մոդելները՝ պայմանավորված նախկին աշխատանքի արժեքային ընկալմամբ:

5. Ընդգծել *ու* և կամ *վա* հոլովման պատկանող բառերը:

Սոչի, անկողին, ժամ, հասկանալ, Լոռի, կաշի, երեկո, Սոֆի, մարդ, տատ, երեքշաբթի, Բաթում, ամիս, ամուսին, մեկնել, երեկ, լեզու, Անի, դար, Թբիլիսի, այրուձի, աստված, շանթարգել, պապ, կիրակի, Գյումրի, այժմ:

6. Ընդգծել *ա* (ներքին) և կամ *ան* հոլովման պատկանող բառերը:

Գառ, հերոսություն, ծունկ, շեղանկյուն, Մանուկ, նվիրում, մահ, մեծատուն, ազգանուն, հարություն, ամառ, հիմք, դիմում, արյուն, կռվան, սյուն, նուռ, խաղատուն, մարդիկ, վաղը, որսաշուն:

7. Ընդգծել *ոջ, ո* (ներքին) և կամ *ի* հոլովման պատկանող բառերը:

Տանտեր, սկեսուր, աստված, հույս, Պապ, տեգր, աներ, տերտեր, մանուկ, գործընկեր, մորեղբայր, տիկին, Հարություն, մամուլ, նախահայր, կաղնի, սկեսրայր, քաղաքամայր, Գառնի, պարտատեր, նախադուռ:

8. Ընդգծել այլաձև հոլովումներ ունեցող գոյականները:

Հանգիստ, գյուղացի, մարդիկ, մերոնք, աղջիկ, անձինք, լեռ, աստված, պատիվ, կայսր, տանտիկին, սեր, Վարդանանք, գիտ-խորհուրդ, հուր, սուր, հագուստ, փախուստ, կեցություն, տատ, վերջալույս:

9. Ընդգծել այն գոյականները, որոնք ունեն հոլովական զուգա-ձևություններ:

Մահ, քույր, դիմում, սպա, Բաթում, գարուն, ձյուն, աստված, մարդ, Լոռի, Սուխում, Շուշի, ծունկ, տանտեր, բուժքույր, շուն, շա-բաթ, առավոտ, սկեսուր, աներ, կանայք, Գալուստ, կաշի, կաղին, անկյուն, ոոպե, քեռի, լույս:

10. Ընդգծել հոլովական սխալ ձևերը:

ա)

1. Արաբական գարունից հետո Մաղրիբում առկա թուրքամետ տրամադրությունները էլ ավելի ուժեղացան թուրքամետ ուժերի՝ իշխանության գալու պատճառով: **2.** Մարզպանության շրջանում, բացի արքունիք ուղարկվող այրուձիուց, Հայաստանում կային նաև այլ զորքեր: **3.** Այրուձիի թվաքանակը ևս փոփոխական էր. պատե-ռազմի ժամանակ այն աճում էր, իսկ խաղաղ պայմաններում՝ նվազում: **4.** Աստվածաշնչի տպագրությունը հովանավորող մյուս երկու վաճառականները որևէ ազգակցական կապ չեն ունեցել որևէ տպագրչի հետ: **5.** Հայ վաճառականության ու Ոսկան Երևանցիի միջև փոխհամագործակցության դրսևորումները այսքանով չեն սահմանափակվել: **6.** Երբ նրան տեսա անկողնիս վրա պառկած, զայրույթից կարկամեցի: **7.** Այսօր լավ ուսուցիչի կարիք շատ է զգացվում:

բ)

1. Հիշատակարանում խոսվում է եկեղեցականների, աշխարհա-կանների ու այն անձանց մասին, ովքեր լուսավորականության

տարածողներն էին: **2.** Չքնաղ է Լոռվա բնությունը հատկապես աշնանը: **3.** Մեր գնացքը Բաթումիից դուրս եկավ առավոտը՝ ժամը յոթին: **4.** Գյումրու ողջ բնակչությունը սրտատրոփ սպասում էր ընտրության արդյունքներին: **5.** Մեկ ժամի ճանապարհը անցանք մի ամբողջ օր: **6.** Այդ երկուսի միությունով շատ կարևոր հարցեր էին լուծվելու: **7.** Խորհուրդիդ համար շատ շնորհակալ եմ, բայց ինքս կլուծեմ այդ խնդիրը: **8.** Մարշալ Բաղրամյանի պողոտայում վերջերս մի նոր գրախանութ է բացվել:

11. Փակագծերում տրված գոյականները ենթարկել քերականական անհրաժեշտ ձևափոխության:

ա)

1. Կարիքների գնահատման (**զեկույց**) ներկայացվում են առաջարկներ՝ ՀՀ (**քաղաքացի**) մատուցվող հյուպատոսական ծառայությունների որակի, ինչպես նաև այս (**ոլորտ**) քաղաքականության (**բարելավում**) համար հատուկ միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ: **2.** ԵՊՀ գլխավոր մասնաշենքն ունի երկու մուտք, մեկը՝ (**Ա. Մանուկյան փողոց**), մյուսը՝ (**Չարենց փողոց**): **3.** Այն (**պետություն**) և խոշոր (**քաղաք**), որոնցում Հայաստանը չունի դիվանագիտական ներկայացուցչություններ, սակայն գործում են ՀՀ (**պատիվ**) հյուպատոսների գրասենյակներ, առաջարկվում է օժտել հյուպատոսական առանձին (**լիազորություն**)՝ անհրաժեշտության դեպքում (**պատիվ**) հյուպատոսի գրասենյակ գործուղելով (**դիվանագետ**): **4.** Ուժեղ կարկուտից ու հորդառատ անձրևներից էապես վնասվել է (**Բորժոմ, Գորի**) շրջանների մեծ մասը:

բ)

1. Ազգային անվտանգության մարմինների առանձին (**պաշտոն**) ծառայության անցնելու համար լիազոր (**մարմին**) ղեկավարի (**թույլտվություն**) բացառիկ (**դեպք**) կարող են ծառայության ընդունվել 30–ից ավելի բարձր տարիք ունեցող քաղաքացիներ:

2. Մեքենան անսպասելի կանգ առավ (**Տիգրան Մեծ պողոտա**). նրանից դուրս եկավ պատկառելի մի այր՝ ձեռնափայտը (**ձեռք**): **3.** Պետական պաշտոնը նախ և առաջ ծառայողական (**պարտականություն**) համալիր է, որը սահմանում է պետական ծառայողի գործողությունների այնպիսի (**կատարում**), որը բխում է իրեն այդ (**պաշտոն**) նշանակած պետական մարմնի (**շահ**): **4.** Անհրաժեշտ է, որ դիվանագետն իր ներքին (**կուլտուրա**) և (**անհատականություն**) կարողանա նպաստել սեփական (**պետություն**) վարկի (**բարձրացում**):

12. Ընդգծել ածականի գերադրական աստիճանի սխալ կազմությունները:

1. Շրջելով աշխարհից աշխարհ, լինելով ամենագեղեցիկ քաղաքներում՝ հասկացավ, որ իր հոգու համար ամենից լավագույն անկյունը հայրենի քարոտ եզերքն է: **2.** Սա մարզիկի գրանցած ցուցանիշերից ամենամեծ ու առայժմ անգերազանցելի նվաճումն էր: **3.** Վերջին տասնամյակներում գիտության ոլորտի աշխատողների աշխատավարձը ոչ թե ցածր, այլ ամենանվազագույն աշխատավարձն է եղել: **4.** Անծանոթի սրճագույն վերարկուն ավելի էր մթնեցնում նրա՝ առանց այդ էլ մուգ դեմքը: **5.** Անսպասելի էր այն, որ շախմատի առաջնությանը բոլորից լավ արդյունքներ ցույց տվեց այդ 12–ամյա երեխան: **6.** Սփյուռքը մեր ամենամեծ ողբերգության հետևանքն է, ուստի արժե՞ հպարտանալ և դիտարկել այն որպես մեր պատմության «լավագույն» ձեռքբերում: **7.** Նա այս անգամ կմրցի ամենից ուժեղագույնների հետ: **8.** Հրամանն ի կատար ածելու համար օրենքը 3 ամիս առավելագույն ժամկետ է սահմանել:

13. Դուրս գրել թվականները և նշել տեսակները:

Քառորդ, քառյակ, քսանական, հարյուր մեկ, առաջին, տասնյակ, երկու երրորդ, հնգամյա, յոթ–յոթ, երկուսուկես, առաջնային, զրո ամբողջ երկու հարյուրերորդական, ինքհատորյակ, երեսունմեկե-

որդ, հարյուրտասական, ութսունութ, հազարամյա, երկրորդական:

_____

_____

_____

_____

_____

14. Ընդգծել թվականների գրության կամ գործածության սխալները:

1. Անկանոն բայերի խոնարհման առանձնահատկությունները ներկայացվում են IV–րդ աղյուսակում: **2.** ԱՄՆ–ում բռնկված տասնօրյա հրդեհների պատճառով անտառի երկու երրորդը այրվել էր: **3.** Հայ եկեղեցու պատմության մեջ և համայն հայության համար անմոռանալի եղան Վազգեն I–ին վեհափառի կաթողիկոսության տարիները: **4.** Առայժմ յոթը հավաքական է մասնակցել համացանցային գրանցմանը: **5.** Շտապ պատրաստե՛ք հրաման՝ ի փոփոխումն հոդված 14–ի: **6.** Հինգն էլ մասնակցում էին ձմեռային օլիմպիադային, և նրանցից միայն երկուսը մեծագույն դժվարությամբ նվաճեց 3–րդ տեղ: **7.** Մեր երեք գործընկերներն էլ գործուղման են մեկնել: **8.** Պետք է հուսալ, որ XXI դարում գերտերությունները ավելի ողջամիտ կգտնվեն. կզսպեն իրենց նվաճողական կրքերը և չեն կրկնի XX–ի մարդակործան քաղաքականությունը:

15. Տրված բառերից (բառաձևերից) դուրս գրել դերանունները՝ նշելով դրանց տեսակը, թիվը, հոլովը:

ա) Ոչ ոք, նույնպես, այսքան, մինչդեռ, ձեզնից, որպիսի, առաջ, սույն, միմյանց, միմիայն, որևէ, այդչափ, նույնիսկ, իրեն, ինքդ, միայն, ոչինչ, իրարից, ինչ–ինչ, ոմանք, որքա՞ն, նման, նույն, մեր:

_____

_____

_____

_____

_____

բ) Ողջ(ը), այնպիսի, այսօրինակ, մի, յուրաքանչյուր ոք, ինչ–որ, ուր, ուրիշները, ում, երբվա՞, ինքներս, ձեզանում, այնինչ, միայն, մեկմեկի, ոչ մի, բոլոր(ը), այս կերպ, այլ, ինչերո՞վ, քանզի:

_____

_____

_____

_____

_____

16. Ընդգծել դերանունների կազմության, հոլովման և գործածության սխալները:

ա)

1. Նա իրենում ամփոփում էր ավանդույթների, ժողովրդական հեքիաթների մի ամբողջ շտեմարան: **2.** Այլոք Գյուրջիևին համեմատում են Նիցշեի հետ՝ ասելով, որ նա Նիցշեին բնավ չզիջող մի հոյակապ ու զարմանալի մտածող է: **3.** Ինչ էլ որ լինի, միևնույնն է, ես կգամ քեզ օգնության: **4.** Ես մաքրել եմ գրադարանի բոլոր գրքերը, բայց նրանց դասավորությունը թողնում եմ քո վրա: **5.** Մեր արշավախումբը մեկնեց Վայոց ձոր, ուր գտնվում է հրաշակերտ Նորավանքը: **6.** Ինչո՞ւ համար էր այս մեծ աղմուկը, եթե բոլորդ պետք է լռեիք ու կատարեիք նրա ցանկությունները:

բ)

1. Կեղծիքի իմաստը հենց նրանում է, որ մարդիկ որոշակի պայմաններում երբեք չեն կարողանում արձանագրել օրենքի խախտումը: **2.** Թուրքիան իրեն հերթին ձգտում էր օգտագործել հեղափոխական շարժումները՝ իր դիրքերը ամրապնդելու համար: **3.** Սրանում համոզվելու համար պետք է հաշվի առնել ժողովրդավարական կարգերի հաստատումը արաբական երկրներում: **4.** Խնդիրը նրանում է, որ առանձին անձանց կամ սոցիալական խմբերի արտագաղթը որոշակի սահմանային մակարդակի հասնելիս սկսում է հակազդել սոցիալական օգտակարության աճին՝ հանգեցնելով մարդկային կապիտալի ամբողջական տարրալուծմանը: **5.** Ես նվերների մի մասը կպահեմ, որոշները կբաժանեմ աղքատներին: **6.** Մասնակիցը նկարեց մանկությունից իրեն հետապնդող մի երազ, որտեղ ինքը վեց տարեկան էր:

գ)

1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք: **2.** Երեսունմեկ առևտրային գործակալություններից որոշների ներկայացուցիչներ կմեկնեն Վիեննա՝ մասնակցելու հավաքին: **3.** Ինչի՞ համար են այս երկարուձիգ հարցաքննությունները, եթե կանխավ որոշել եք Ձեր անելիքը: **4.** Հասցեն ճշտեք, որպեսզի իմանանք, թե ուր պետք է առաքենք կահույքը: **5.** Ղարաբաղյան շարժման տարիներին ազգովին ոտքի կանգնեցինք. ցույցերին մասնակցում էին ուսուցիչ, գրող, շինական, բանվոր և այլոք: **6.** Առայժմ հայտնի չէ, թե հաջորդ բանակցությունը ուր է կայանալու:

դ)

1. Եվ հավատալո՞ւ բան է, որ իր պատմությունը ամենամեծ կրոնական պատերազմների պատմություն է, և այս չաղոթող ցեղի Նարեկացու շուրթերից թռավ աղոթքի ամենաբարձր թռիչ-

քը առ Աստված… (*ԴԴ*): **2.** Նկատի ունեցիր, որ երբ քանդում ես համակարգը, այն կարող է փլվել նաև քեզ վրա: **3.** Այս ու այն կուսակցությունից փորձում էին ազդել նրա վրա, բայց ապարդյուն: **4.** Օտար լեզվի իմացությունը իրեն համար պարտադիր նախապայման չէ: **5.** Նրա հետ խոսելուց հետո կարծես մի ծանր քար ընկավ ինձ վրայից: **6.** Այստեղ աշխատելիս ամեն մեկդ հստակ պիտի իմանա իր անելիքը և չխառնվի մյուսի գործին:

ե)

1. Սևրի պայմանագրի կարևորությունը նրանում է, որ այն տվեց Հայկական հարցի լուծման իրավական և քաղաքական ճիշտ մոտեցումը: **2.** Տնօրենն ասաց, որ ներկայանաք. ինչպե՞ս է Ձեր անունը: **3.** Սակայն հարցն այն է, որ այդ կանաչազարդ տարածքը Ազգային ժողովի՝ որպես ճարտարապետական համալիրի բաղկացուցիչ մասն է, առանց որի այդ ինքնատիպ կառույցն անկասկած կկրի գեղագիտական մեծ կորուստ: **4.** Ամբողջ մարդիկ հավաքվել էին տուժածի մոտ և անվերջ հարցեր էին տալիս: **5.** Նա հաճախ ժպիտով էր պատմում, որ մանկության տարիներին ոչ ոքուց այնքան չէր վախենում, որքան տատից: **6.** Իսկ ճշտե՞լ եք՝ որտեղ է առաքվելու այս ապրանքը:

17. Կազմել տրված բայերի պատճառականները:

Խոսել, հասնել, սառչել, սպիտականալ, աղալ, ուռչել, հնանալ, վազել, կուրանալ, գտնել, կանգնել, կրկնել, կռվել, տեսնել, իջնել, լուսանալ, լսել:

_____

_____

_____

_____

_____

18. Ընդգծել այն բայերը, որոնցում կան հիմքակազմության սխալներ, և ուղղել:

ա)

1. Եվ ծանր–ծանր կուտակվող ամպերը մթնացրին տան՝ ծխից սևացած պատերը: **2.** Ամռան շոգին խորհուրդ է տրվում օգտագործել մաշկը խոնավեցնող քսուքներ: **3.** Սեպտեմբերի 1–10–ը ավտոտեսուչները սովորաբար աշխատում են առավել խստացված կարգով: **4.** Ցեղասպանությունից հետո թուրքերը սկզբում ամայացրին հայկական հողերը, ապա դրանք վերաբնակեցրին քրդերով: **5.** Ավտոտեխսպասարկման կենտրոնում շատ կարճ ժամանակամիջոցում կարող են մգացնել նաև մեքենայիդ ապակիները: **6.** Հայերի ապստամբության առաջնորդ Գրիգոր Մամիկոնյանը կուրացնել տվեց Աշոտ Բագրատունի իշխանին՝ իրենց չմիանալու համար: **7.** Գնալ, հեռանալ դեռ չի նշանակում փախնել. պարզապես ժամանակավոր դադար է պետք:

բ)

1. Հարցի մանրամասն քննարկումից հետո միայն կողմերը համաձայնվեցին ստորագրել պայմանագիրը: **2.** Խնդրի լուծման համար թերևս հարկ կլինի կապնվել իրավաբանական ծառայություններ մատուցող որևէ ընկերության հետ: **3.** Կուսակցությունները վաղուց արդեն գաղափարներ են հարմարացնում իրենց գործելաոճին: **4.** Տարիներ հետո, երբ մեր ճանապարհները զուգադիպվեցին, անցյալի վերհուշը կրկին գլուխ բարձրացրեց: **5.** Հայրենիքի զգացողությունը ձևավորվում է երկրի հանդեպ ունեցած պատասխանատվությամբ, իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ քաղաքացին մասնակցում է որոշումների կայացման գործընթացներին և տեսնում իր իսկ որոշման արդյունքները: **6.** Մառանում կողք կողքի շարված էին մեծ–մեծ տակառներ՝ լի հնեցված գինով: **7.** Դժվար է պնդել, թե հոդվածում նկատի է ունեցվել գույքի մասնակի ոչնչացումը:

19. Որոշել ընդգծված բայերի սեռը:

ա)

1. Դուռը **բացվեց**, և ներս մտավ փոքրամարմին մի տղամարդ՝ հնամաշ հագուստով, թոշնած դեմքով: **2.** Լուսանում էր արդեն, երբ զորականները, դուրս գալով Այրիվանքից, **բաժանվեցին** երկու խմբի: **3.** Քրեական գործն արդեն **հարուցված է**, և մնում է **սպասել** դատական գործընթացի զարգացմանը: **4.** Ըստ օդերևութաբանական ծառայության տվյալների՝ առաջիկա օրերին **սպասվում է** առանց տեղումների, շոգ եղանակ: **5.** Պիզա քաղաքը **գտնվում է** Տոսկանիայում՝ Իտալիայի հնագույն մարզերից մեկում:

բ)

1. Այդ մե՛նք ենք երևի այն հարուստը, Որ անցյալի մեր այդ տկլորությամբ հարուստ՝ Պիտի **ժառանգենք** մեր դարերի կորուստը, Որ բոլո՛ր տկլորներին **սահմանված է** վերուստ… (*ԵՉ*): **2.** Արկածներիս ծովի կղզիներում անցած Ինձ **հանդիպեց** քանի՞ Նավզիկե, Որ **հեռացավ, անցավ** իր կարոտին **կառչած**՝ Իբրև ուրի՞շ Ուլիս, ուրիշի սեր… (*ԵՉ*): **3.** Ես հեռանում եմ, որ **դառնամ**, հազար **փակված** դռներ բանամ, Հիմա գնամ, բարով մնաք… (*ԱՍ*) **4.** Եթե պետք է լավ **հասկացվել**, Եթե պետք է խոր **զգացվել** Լոկ եղածի նոր կրկնությամբ, Ես հպարտ եմ Չհասկացվող Եվ չզգացվող Իմ ինքնությամբ, Շատ–շատերից **չկարդացվող**՝ Բայց և այնպես իմ սեփական ձեռագրով, Այլոց կողմից **չարդարացվող**՝ Բայց և այնպես իմ սեփական ծրագրով (*ՊՍ*): **5.** Ինչ որ **այրվեց** ու հեռացավ, այն, ինչ **ջնջվեց** ու **կարծրացավ**, այն, ինչ կիսատ **շնչեց** հոգում, այն, ինչ **չարվեց** մեր այս կյանքում…, **սպասի՛ր**, սպասի՛ր, ես **կավարտեմ** հաջորդ կյանքում (*ԱՍ*):

20. Դուրս գրել բայերի անդեմ ձևերը՝ նշելով դրանց բնորոշ քերականական հատկանիշները:

Ուրարտական շրջանում հողային հարաբերությունները ունեին բավականին բարդ կառուցվածք: Պետության սահմաններում գտնվող ամբողջ հողը նախ և առաջ բաժանված էր 2 մասի: Առաջին մասը միապետի՝ թագավորի անմիջական սեփականությունն էր, որտեղ նա իր գործակալների օգնությամբ անմիջական շահագործողն էր: Արքունիքի հողային ֆոնդը սկզբնական շրջանում մեծ չափերի էր հասնում, բայց կրճատվելու միտում ուներ, քանի որ դրանից էին կատարվում նվիրատվությունները տաճարներին, կառուցվող քաղաքներին, զինվորական ու վարչական ուռճացող ապարատի անդամներին (ավագանուն): Մեծատոհմիկ ավագանու բանակը անընդհատ համալրվում էր նոր շերտով՝ ծառայող ավագանիով: Իշխող դասակարգի այս նոր խավը, ի տարբերություն մեծատոհմիկ ժառանգական ավագանու, բավարարված չէր իր հողային գույքով և անընդհատ պահանջում էր նորանոր տարածություններ, որը և առատաձեռնորեն տրամադրում էր թագավորը, քանի որ իր իշխանությունը մեծապես հենված էր այդ շերտի վրա: (*ըստ Ա. Ասլանյանի*)

21. Ընդգծել հնացած կամ սխալ բայաձևերը:

ա)

1. Հետազոտողները կառչել են ինչ–ինչ աննշան փաստարկներից և դեպքերի ընթացքը վեր են լուծել առավել ենթադրաբար: **2.** Ասում են՝ շատ հին ժամանակներում Հայաստանում ապրելիս է եղել Տորք անունով մի հսկա: **3.** Վեր մի՛ կաց, համբերի՛, մինչև լավ կազդուրվես: **4.** Ես չեմ սիրում ամբարտավան մարդկանց, որոնք իրենց բարձր են դասում մյուսներից: Այնպես ես ուզում տալ նրանց ռուբլի և ասել. «Իմանաս քո գինը, կվերադարձնես մանրը» (*ԼՏ*): **5.** Աղաչում եմ, Մի՛ վախեցեք անկեղծ խոսքից. Անկեղծ խոսքը չի սպանում, Փակ խոցեր է միայն բանում (*ՊՍ*): **6.** Ըստ գյուղնախարարության տվյալների՝ այս տարի նախորդի համեմատությամբ ներ է մուծվել ավելի շատ սերմնացու, բայց և չի պակասել գյուղմթերքի արտահանումը: **7.** Ինքնախաբեությունը բարոյական ինքնասպանություն է, մի մեռելություն է, որի մեջ մարդկային բոլոր կրքերը հանգստանում են: **8.** Հակիրճ ներկայացրեցի դիվանագիտական վարվեցողության տարրական նորմերը, որոնց անգիր իմացությունն ու կիրառությունը պարտադիր են ոչ միայն դիվանագետի, այլև արտերկրում գտնվող ցանկացած պաշտոնյայի համար:

բ)

1. Գուցե կյանքս ճիշտ չեմ ապրում, վերջն է եկել, ո՞վ գիտի, Մի՛ շտապիր պախարակել, գլխի գալիքն ո՞վ գիտի, Երբ ջահել ենք, չենք հասկանում, որն է ճիշտը, ո՞վ գիտի, Գուցե գինին մի բան ասի, փորձեմ, թեև ո՞վ գիտի (*ՊՍ*): **2.** Պարզվեց, որ մենք ուղղակի խաբնվել ենք: **3.** Մի՛ մոռանար խոստումդ և այնպե՛ս արա, որ ստիպված չլինեմ հիշեցնել քեզ այդ մասին: **4.** Հանգամանքներն անպայման վեր են լուծվելու, իսկ մինչ այդ երկրից չդուրս գաս: **5.** Իրանցի զինվորականներն անօդաչու թռնող սարք են հայտնաբերել ուրանի հարստացման գործարանի մոտ: **6.** Մի քանի անգամ հարցրեցի այդ մասին, սակայն մնացի անպատասխան:

գ)

1. Որքան մոտիկանում էր դատավճիռը հրապարակելու պահը, այնքան դահլիճը աղմկում էր: **2.** Կարծիքը, թե Առաջին աշխարհամարտի ժամանակ տուժվել են նաև թուրքերը, բոլորովին կապ չունի հայոց ցեղասպանության հետ. այսպիսի մտայնությամբ նրանց ուղղակի հաջողվում է փախնել հարցի ըստ էության քննարկումից: **3.** Գնալով հեռվանում էին Գեղամա ծովակն ու շրջակա լեռները: **4.** Մի՛ խաբվեցեք սուտ ու կեղծ քարոզողներին. նրանք են հենց ամենից մոլորյալները: **5.** Հայրենիքի բույրերը հովի ու ծաղիկների հետ գալիս, լցվում էին վանքի գավիթը և նրան քաշում հեռավոր տուն, խաղընկերների մոտ: **6.** Միացյալ Թագավորությունը դառավ ԵՄ–ը լքող առաջին պետությունը:

22. Ընդգծել անկանոն և պակասավոր բայերը:

1. Ինչքան շատ է վաճառքից ստացված եկամուտը, և քիչ են նրա արտադրության ծախսերը, այնքան բարձր է շահութաբերությունը: **2.** Հայերն աշխարհում առաջատար են իրենց սխալ սննդակարգով. ուտելուց հետո սեղանին միրգ են դնում, օրվա մեջ չորս անգամ եփած կերակուր են ուտում, սննդի համատեղելիության տարրական նորմերին չեն տիրապետում, պատկերացում չունեն՝ ինչը ինչի հետ է պետք ուտեն: **3.** Իսկ ժողովո՞ւրդը, որ եղել է հանճարեղ, Եղել է որմնադիր, եղել է կառուցող, Քաղաքներ է շինել, պարիսպներ է շարել, Կամուրջներ է գցել կոր գծով, Ունի՞ արդյոք թեկուզ մի աննշան մասնիկ Վաստակներում ձեր այս անքանքար (*ԵՉ*): **4.** Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման համար տարվող բանակցությունները կարծես առավել ժամանակ շահելու միջոց են. իրականում երկու կողմերը հստակ գիտեն, թե ինչ են ցանկանում: **5.** Եվ ով ինձ հարցնի. «Ի՞նչ արժի», ես ինձ Լուռ կասեմ… «Դատա՛րկ բան,— կասեմ,— Ընդամենն արժի մի… անցած մի կյա՛նք» (*ՊՍ*):

23. Ընդգծել սխալ գործածված շաղկապները և ուղղել:

1. Դրա շնորհիվ պատմությունը հանդես է գալիս ոչ թե որպես պատմագրություն, այլև որպես իրավիճակների հերթափոխ: **2.** Իսլամիստական կուսակցությունը անցկացրեց բազմահազարանոց առաջին ցույցը և պահանջեց, որպեսզի նախագահը հրաժարական տա: **3.** Քանի որ նրա բուն խնդիրը ոչ միայն հասարակության արդիականացումն է, այլ նրա արժևորումն ու իմաստավորումը: **4.** Բացի այդ՝ արքան չէր ցանկանում, որպեսզի սպարապետը մնա գերության մեջ: **5.** Մենք պետք է առաջին պլան մղենք ոչ թե մեր խնդիրները, այլ միասնությունը և ամբողջականությունը: **6.** Սակայն արևմտյան երկրները ուժեր են գործադրում, որպեսզի դա իրենց օգտին ծառայի:

24. Ընդգծել կապերի և շաղկապների (շաղկապական բառերի) սխալ գործածությունները. լրացնել դրանց անհարկի բացթողումները:

ա)

1. Ինչ պատասխան պիտի տանք պատերազմի արդյունքում զոհվածների ժառանգներին: **2.** Այդ հարցի հետ կապված կան մի շարք դիտողություններ: **3.** Որպես ՍՊԸ–ի կառավարիչ՝ Դուք պարտավոր էիք կարծիք հայտնել հարցի հանդեպ, մանավանդ որ տեղական մամուլը ակնարկում էր Ձեր լռության մասին: **4.** Մինչև փաստաթղթերի հետ լավ չծանոթանաս, գործի քննությունը չսկսես: **5.** Ամեն ինչ արված է. անհրաժեշտ է միայն, որպեսզի մարզիկների ակտիվ մասնակցություն ապահովեք: **6.** Հանձինս քեզ ես տեսնում եմ քաղաքականապես գրագետ գործչի: **7.** Ոչ միայն մասնակցել է գործողություններին, այլ ակտիվություն է դրսևորել: **8.** Որ չարը հաղթի, բավական է, որպեսզի բարի մարդիկ ոչինչ չանեն:

բ)

1. Միջոցառումն ուղղված է մարդկանց վիճակի բարելավման նպատակին: **2.** Դաշտը դարձել է անվերահսկելի, ինչի արդյունքում դժվար է պահպանել հատկապես գնորդի շահերը: **3.** Ծրագրի հաջողությունը պայմանավորված է հովանավոր կազմակերպության կողմից տրամադրվելիք ֆինանսական միջոցների հետ: **4.** Պատուհանը բացվում է Աբովյան փողոցին: **5.** Նոր տնօրենը սկսել է ծանոթանալ աշխատակիցներին: **6.** Կրած ֆինանսական վնասը հասնում է ընդհուպ մինչև 5 միլիարդ դրամի: Անկազմակերպ աշխատանքի շնորհիվ գործը տապալման եզրին է: **7.** Ոչ թե աճել են դեպոզիտները, այլև նվազել:

գ)

1. ՀՀ ԳԱԱ–ն գտնվում է Բաղրամյան փողոցի վրա՝ նախագահական նստավայրի մոտ: **2.** Ի դեմս հրամանագրի՝ ներկայացվում են նոր աշխատառոճ և նոր սկզբունքներ: **3.** Ես պատահաբար սեղմեցի ատրճանակի ձգանը և կրակեցի քեզ: Դեռահասների դաստիարակության որակը անմիջականորեն կախված է ընտանիքի սոցիալական վիճակի և ծնողների կրթական մակարդակի հետ: **4.** Վճարել եմ այդ ապրանքի դիմաց, բայց առաքումը ուշանում է: **5.** Չեմ կարծում, որ կդժվարանաս այդ հարցի շուրջը խոսել: **6.** Նա երկար ժամանակ ինձ հոգ էր տանում, ու ես երախտապարտ եմ նրան: **7.** Միջազգային ներդրողները վաղուց են հետաքրքրված մեր տարածաշրջանի մասին:

25. Ընդգծել կապերը. հնարավորության դեպքում կապով արտահայտված լրացումները փոխարինել հոլովական կառույցներով:

ա)

Ճակատագիրը հակում ունի դեպի մեծավորներն ու տիրասերները: Տարիներով նա հլու–հնազանդ հովանավորում է իր ընտրյալներին՝ Կեսարին, Ալեքսանդրին, Նապոլեոնին, քանի որ սիրում է

տարերային խառնվածքները՝ նման հենց իրեն՝ ճակատագրին, որ նույնպես տարերային է՝ անընմբռնելի ու անվերահասու: Բայց երբեմն, թեև բոլոր դարաշրջաններում հազվադեպ միայն, նա տարօրինակ մի քմահաճույքով նետվում է միջակության գիրկը: Երբեմն (դրանք համաշխարհային պատմության ամենազարմանալի ակնթարթներն են) բախտի սանձերը միակ երերուն պահի ընկնում են ոչնչության ձեռքերի մեջ: (*ըստ Ս. Յվայգի*)

բ)

Եվ այդ մարդիկ սովորաբար ոչ թե հրճվանք, այլ վախ են ապրում այն պատասխանատվության առաջ, որ իրենց ներքաշում է համաշխարհային խաղի հերոիկայի մեջ, և նրանք գրեթե միշտ իրենց դողդոջուն ձեռքից բաց են թողնում ակամա իրենց բաժին ընկած բախտը: Նրանցից շատ քչերին է տրվում երջանիկ պատահականություններից բռնելու և դրա հետ միասին սեփական անձը պանծացնելու կամքը: Միայն մի ակնթարթ է մեծությունն իջնում ոչնչության մոտ, և նա, ով ձեռքից բաց է թողնում այդ ակնթարթը, ամեն ինչ կորցնում է անդառնալիորեն: (*ըստ Ս. Յվայգի*)

գ)

1. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մեջ ընդունված է նորանշանակ դեսպանի հավատարմագրերի հանձնումը կազմակերպել պարզեցված ձևով, առանց արարողակարգային հատուկ միջոցառումների: **2.** ԱԳՆ արարողակարգերի ծառայությունը հայտնում է նորանշանակ դեսպանին հավատարմագրեր հանձնելու օրը և ժամը ու պայմանավորվում նստավայր ժամանելու մասին: **3.** Երկրի նախագահին իր հավատարմագրերը հանձնելուց հետո դեսպանը համարվում է իր պարտականությունների կատարմանն անցած և տեղ գրավում տվյալ երկրում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների անձնակազմի մեջ: **4.** Դեսպանն իր նշանակման և հավատարմագրերի հանձնման մասին անձնական նոտարով

տեղյակ է պահում տվյալ երկրում հավատարմագրված բոլոր դեսպաններին:

26. Ընդգծել կապի կամ կապվող բառի սխալ գործածությունները:

ա)

1. Ըստ Ղազար Փարպեցու վկայությամբ՝ Վահան Մամիկոնյանը Նիխորի խնդրանքով արքունիք է ուղարկում երկու հազար հեծյալ: **2.** «Թուրքական մոդելը» ավելի ու ավելի էր համակրանք և ընդօրինակելու ցանկություն առաջացնում արաբական երկրների իսլամամետ կուսակցությունների մոտ: **3.** Այնուամենայնիվ, Ալժիրում ընթացած հեղափոխական շարժումները անհետևանք չէին կարող լինել Թուրքիա–Ալժիր հարաբերությունների վրա: **4.** Հնարավոր է՝ այդ բառն ընտրվել է խնդիրն անգլիական ավանդույթի համար սովոր լեզվով արտահայտելու և կոնկրետ լսարանի մոտ ըմբռնման հասնելու ակնկալիքով:

բ)

1. Պետական համակարգի բարեփոխումների արդյունքում հստակեցվեցին նաև նախարարությունների կանոնադրությունները, միասնականացվեցին նրանց աշխատակազմերի կանոնադրությունները: **2.** ԵՄ անդամ պետությունների շարքում կայունության ամենացածր ինդեքսներն արձանագրվել են Հունաստանի, Բուլղարիայի, Իտալիայի, Պորտուգալիայի մոտ, որոնց քաղաքական համակարգերը բնութագրվում են որպես միջին կայունությամբ: **3.** Բայց ինչպես ինձ մոտ, այնպես էլ Հասմիկի մոտ կար մի տեսակ կասկածի զգացում: **4.** Այդ գյուղակի բոլոր բնակիչները երդման տակ հաստատեցին, որ նա անմեղ է:

գ)

1. Ոչ մի հիմք չկա կասկածելու նրա խոսքերի ճշմարտության վրա, սակայն այս դեպքը, իհարկե, պետք չէ դիտել որպես ընդ-

օրինակման նմուշ. մենք այն բերում ենք ուղղակի որպես զավեշտ: **2.** Արաբական գարնան շնորհիվ շատ երկրներ հայտնվեցին անկայուն իրավիճակում: **3.** Կապիտալի միջազգային հոսքերը առաջանում են ֆինանսական ակտիվների սեփականությունը մի երկրից մյուսին փոխանցելու արդյունքում: **4.** Մեզ հուզող խնդրի մասին որոշակի անդրադարձ է կատարել նաև առաջին նախագահը, սակայն որևէ նոր տեսակետ պայմանագրի դրույթների մասին չի արտահայտել:

27. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասության մեջ՝ ըստ անհրաժեշտության ենթարկելով քերականական ձևափոխությունների:

ա) Պաշտոնական բոլոր _____ ժամանակ պետությունների ղեկավարներին, վարչապետներին, բարձրաստիճան պաշտոնյաներին _____ անպայման _____ նրանց _____:

(**ընդունելություն, տիտղոս, ներկայացնել, նշել**)

բ) Օտարերկրյա պետությունում _____ դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարը, ինչպես նաև ՀՀ արտաքին գործերի նախարարության _____ գտնվող մարմնի կամ հիմնարկի ղեկավարը _____ խրախուսանքի միջոցները՝ այդ մասին անհապաղ _____ արտաքին գործերի նախարարությանը:

(**գործել, կիրառել, տեղեկացնել, ենթակայություն**)

գ) Մինչև 14 տարեկան _____ աշխատանքային պայմանագիր _____ կամ նրանց _____ ներգրավելը _____:

(**կնքել, աշխատանք, արգելել, քաղաքացի**)

դ) Համաձայն դիվանագիտական վարվեցողության _____՝ _____ հրավիրատոմսը ստանալուց հետո հեռախոսով կամ նամակով _____ ընդունելու կամ չընդունելու մասին անհապաղ _____:

(**պահանջել, հրավեր, տեղյակ պահել, նորմ**)

ե) _____ մենք երկար քննարկումների ժամանակ չունենք, _____ խնդրում եմ, _____ առաջարկված նախագծերը վերանայենք, արագ կողմնորոշվենք, _____ կարողանանք նշված ժամկետում ներկայացնել բիզնեսծրագրի ողջ փաթեթը:

(**ուստի, որ, քանի որ, որպեսզի**)

զ) Ամեն մի բարեմիտ և իր գործին _____ անձ պետք է հետևողական լինի սեփական խոսքի և գործի _____ , հակառակ դեպքում _____ հաճախ ստիպված է լինելու կա՛մ պատասխան տալ իր արարքների _____ , կա՛մ լուռ հաշվել իր կորուստները:

(**հանդեպ, համար, նվիրել, կյանք**)

է) _____ Մաքսային միության _____՝ _____ տիրապետելը այսօր կրկին արդիական _____:

(**կախել, ռուսերեն, հեռանկար, դառնում**)

ը) _____ առավել ամբողջական պատկերացում և սերտորեն _____ արտասահմանյան _____՝ սփյուռքի ներկայացուցիչները մեծ առավելություններ ունեն _____ իրացնելու և կապեր հաստատելու առումով:

(**ունենալ, շուկա, առնչվել, արտադրանք**)

թ) Արտասահմանյան ընկերությունների _____ Հայաստանն _____ որպես օֆշորային _____ երկիր մասամբ իր համեմատաբար էժան աշխատուժի և միաժամանակ բարձր արտադրողականության _____:

(**ընտրել, կողմից, շնորհիվ, գործունեություն**)

ժ) Կարելի է ենթադրել, որ _____ աննպաստ _____ հեռուստասերիալները առավել արհեստավարժության պակասի և կարճաժամկետ _____ հետևանք են, քան գաղափարապես ապակողմնորոշելու _____ ծրագիր:

(**շահ, գիտակցել, ինքը, բովանդակություն**)

2.1.6. ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուղղել համաձայնության սխալները:

ա)

1. Արշակունիների՝ որպես թագավորական իշխանություն, վերացումից հետո մի շարք իրավունքների հետ մեկտեղ զորքի կառավարումը ևս անցավ նախարարների ձեռքը: **2.** Ոչ մի տերև, ոչ մի ծաղիկ չէին շարժվում քամուց: **3.** Քննարկման ավարտից հետո հարց ու պատասխան չինչեցին: **4.** Ամենայն ազնիվ ցանկություն ողջունելի է, բայց ինչ–ինչ անհրաժեշտ որոշում պիտի կայացվի: **5.** Ամերիկայի Միացյալ Նահանգները որոշում են ընդունել Ռուսաստանի դեմ համապատասխան պատժամիջոցներ կիրառելու մասին: **6.** Այդ ամենը՝ գարունը, արևը, ծաղիկների բույրը, ամպերի պայծառ գույները, նրա սիրտը վրդովեցին անհանգիստ հույզերով: **7.** Տարերային աղետների ժամանակ ժողովուրդը անբացատրելի ձևով սկսում են միանգամից ինքնակազմակերպվել:

բ)

1. Ոմն տարեց, բայց հայտնի արվեստագետներ հարցը վեճի առարկա են դարձրել և պահանջում են շուտափույթ լուծում տալ դրան: **2.** Ոչ ոք՝ ո՛չ ծնողները, ո՛չ կինը, ո՛չ երեխաները, ո՛չ ընկերները, նրան չներեցին: **3.** Ոչ մի արարք, ոչ մի հանցանք այնքան քստմնելի չեն, որքան հոգեկան հանցանքը: **4.** Պետական բոլոր մուծումները կատարվել է ժամանակից շուտ: **5.** Հրավիրյալների մեծ մասը այդպես էլ չկարողացան որևէ նախաձեռնությամբ հանդես գալ: **6.** Այդ դեպքից հետո ես պատկերացնում եմ, թե ինչեր կկատարվի: **7.** Քեզ չհարգելու պատճառներ իհարկե չկա:

գ)

1. Յուրաքանչյուր ժողովրդի կյանքում կարելի է առանձնացնել մի շարք նշանակալի իրադարձություններ, առանց որի դժվար կլիներ պատկերացնել այդ ժողովրդի հետագա գոյատևումը: **2.** Եթե պայմանագրում որևէ խոսք չկա Կիլիկիայի ներքին քաղաքական կառավարման մասին, ապա արտաքին քաղաքականության մեջ որոշակի փոփոխություններ էր նկատվում: **3.** Կայունության ցածր մակարդակը բնորոշ է քաղաքական այն համակարգերին, որոնցում առկա է սոցիալական սրված հակասություններ, բնակչության բևեռացում, հիմնական աշխատողների աղքատացում ու նեղ շրջանակի մարդկանց հարստացում: **4.** Անավարտ մնացած գործողությունը, չասված միտքը, չապրված զգացմունքը լարվածություն է ստեղծում մարդու հոգում: **5.** Նրան՝ որպես գիտակ մասնագետ, գործընկերները բարձր են գնահատում և հաշվի նստում նրա հետ: **6.** Այս տեսակետից բացառություն չէ ոչ Սասանյան Պարսկաստանը, ոչ Արշակունյաց Հայաստանը, որի իրավահաջորդը եղավ մարզպանական Հայաստանը: **7.** Այս պարագայում գրեթե բացառվում է երկրում մարդկային ներուժի լիարժեք ձևավորումը, կուտակումն ու բնականոն վերարտադրությունը:

2. Ուղղել խնդրառական սխալները:

ա)

1. Եթե Դուք դժվարանում եք ինքնուրույն զբաղվելու իրավաբանական ինչ–ինչ հարցերով, ապա կարող եք դիմել մեր գրասենյակի օգնությանը: **2.** Հարցը տակավին քննարկման փուլում է, ուստի ես այժմ թույլ չեմ տալիս արտահայտվելու: **3.** Նրա բոլոր ձեռնարկումներին մերձավորները միշտ սատարում էին: **4.** Արածդ սխալի համար պիտի ներողություն խնդրես հորդ: **5.** Ես մանրամասն հետազոտել եմ նյութը և քո բերած փաստարկները

մեկ առ մեկ առարկում եմ: **6.** Բոլորս երախտապարտ էինք նրանից իր անգնահատելի ծառայության համար:

բ)

1. Կապված ի հայտ եկած նոր հանգամանքներով՝ գործի քննությունը հետաձգվեց: **2.** Նա լուրջ գիտելիքներ ունի ծրագրավորման մեջ: **3.** Ձեր փոխարեն ես առանց խոսք դուրս կգայի սենյակից: **4.** Ներկայում Հայաստանում միգրացիոն գործընթացները անմիջականորեն պայմանավորված են երկրի աշխատաշուկայում զբաղվածության հնարավորությունների բացակայությունից, ինչի հետևանքով հայերից շատերը ստիպված են աշխատանք փնտրել այլ երկրներում: **5.** Հյուսիս–հարավ մայրուղու կառուցումը էապես խթանելու է երթևեկությանը: **6.** Երևի հեղինակները համարձակություն կունենան հրաժարվել այս դասագիրքը տպագրել տալուց:

գ)

1. Այն աշխատակիցը, որն ամենաբարեխիղճն էր, պարգևատրեցին շքանշանով: **2.** Այսպիսի ակտիվ քաղաքականությունը բխում էր Թուրքիայի շահերից և նպատակ ուներ պահպանել և ամրապնդել Թուրքիայի ձեռք բերած առավելությունները: **3.** Մարդիկ որոշակի պայմաններում չեն կարողանում շահադիտական մղումով առաջնորդվող պաշտոնյային պարտադրել արձանագրելու օրենքի խախտումը: **4.** Ես օրենսդրական նոր փոփոխություններից տեղյակ եմ: **5.** Առարկելով բոլոր առաջարկները՝ նա հասկացրեց, որ ընդհանրապես դեմ է տվյալ խնդրի քննարկմանը: **6.** Մարդը, որ ընդունակ չէ բարի գործ կատարելու, լավ բան մի՛ սպասիր:

3. Ընտրել ճիշտ հարցը, ավելացնել որևէ կապական կառույցով կամ հոլովաձևով դրված լրացում և կազմել նախադասություն:

ա.

Անդրադառնալ ո՞ւմ — ո՞ւմ մասին
անդրադառնալ ինչի՞ն — ինչի՞ մասին

առարկել ինչին — ինչը
բավարարել ինչը — ինչին
բացատրել ինչը — ինչի մասին
դավաճանել ինչը — ինչին
երախտապարտ լինել ում — ումից
խթանել ինչը — ինչին
խոստովանել ինչը — ինչի մասին

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

բ.

Խոչընդոտել ինչը — ինչին
ծանոթանալ ում հետ — ում
ծանոթանալ ինչին — ինչի հետ
կտակել ում — ում վրա
սիրահարվել ում — ում վրա
համաձայնել ում հետ — ինչի հետ
ներողություն խնդրել ումից — ում
շնորհակալություն հայտնել ում — ումից
տեղյակ լինել ինչին — ինչի մասին

4. Ուղղել շարադասական սխալները:

ա)

1. Հաշվի առնելով յուրահատուկ միջազգային հեռախոսային շփման նորմը՝ պետք է ձգտել, որ հեռախոսազրույցը տևի հնարավորինս կարճ: **2.** Երևանի բնակչության կտրուկ ավելացումը պայմանավորված է ոչ թե հիմնականում բնական, այլ մեխանիկական աճով: **3.** Իրավասու մարմին առանց փաստաթղթերի բերման ենթարկված Սահմանադրական դատարանի անդամը պետք է անմիջապես ազատ արձակվի նրա ինքնությունը պարզելուց հետո: **4.** Պաշտոնեական անփութությունը միակ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունն է, որը քրեորեն դատապարտելի է: **5.** Հարգարժան նիստի մասնակիցներ, զբաղեցրե՛ք ձեր տեղերը:

բ)

1. Առաջին հայալեզու գիրքը լույս տեսավ Վենետիկում 1512 թ., որից հետո աշխարհի տարբեր քաղաքներում սկսեցին հիմնվել տպարաններ: **2.** Վստահաբար կարելի է ասել, որ մի շարք ներքին

և արտաքին խնդիրներ հաղթահարելուց հետո Թուրքիան կփորձի Արևմուտքին այլընտրանք լինելու իր հավակնությունները կյանքի կոչել Մաղրիբի մյուս արաբական երկրներում նույնպես: **3.** Այդ իսկ պատճառով խոշոր միջազգային կազմակերպություններն ու վերլուծական կենտրոնները նախաձեռնում են համեմատական լայնածավալ հետազոտություններ: **4.** Կա խնդիր, և անհրաժեշտ է այդ խնդրի լուծման համար գիտակցության օգնությունը: **5.** Հայաստանյան ՄԱԿ–ի գրասենյակը ձեռնարկում է բարեգործական նոր միջոցառում՝ հաշմանդամ երեխաներին օգնելու համար:

գ)

1. Գործն ուղարկվելու է ոչ թե Վճռաբեկ դատարան, այլ քննվելու է վերաքննիչ դատարանում: **2.** Պրոֆեսիոնալ իրավաբանական ծառայության մատուցումը սկսվում է նաև հայցվորի խոսքը հանգամանորեն լսելուց: **3.** Գիտությունը ստիպված է նկատի առնել աներևակայելի խարդախություններ, էլ չասենք արտադրության ամբողջ ճյուղ կազմող կեղծ հնադարյան հուշարձանների պատրաստման հնարավորությունը: **4.** Մենք արդեն հիշատակեցինք այն ամերիկացու մասին, որին հաջողվեց Լուքսորի նրբանցքներում ձեռք գցել արժեքավոր եգիպտական պապիրուսը: **5.** Պահանջվում են վարորդներ՝ իրենց մեքենաներով, առաքիչներ և կին խմորի մասնագետներ:

5. Կետադրել:

ա) Դիվանագիտական էթիկետի պատմական զարգացման ընթացքը պայմանականորեն կարելի է բաժանել 3 փուլի դիվանագիտական պալատական քաղաքացիական: Հնագույն նամակագրական պայմանագրերից մեկը կնքվել է եգիպտական փարավոն Ռամզես II–ի և խեթական թագավոր Հատուշիլ II միջև Ք.ա. 1278 թ.: Ըստ այդ պայմանագրի պայմանները փորագրվել էին արծաթյա թիթեղի վրա խաղաղություն էր հաստատվում երկու

կողմերի միջև: Սա դիվանագիտական էթիկետի առաջին նամակագրական արտահայտություններից է: (*ըստ iravaban.net. կայքի*)

բ) Հույները զարգացրին դիվանագիտական էթիկետը ստեղծելով դեսպանական հանդիսավոր արարողակարգ: Դեսպանների հովանավորը Հին Հունաստանում համարվում էր Հերմես աստվածը: Ի պատիվ նրա դեսպանները կրում էին Հերմեսի գավազաններ որոնց գլխիկներին ամրացված էին դափնու տերևներ թռչնի թևեր և թանկարժեք քարեր: Դափնու տերևները խորհրդանշում էին հունական դեսպանի փառքն ու պատիվը թռչնի թևերը շարժունությունը իսկ թանկարժեք քարերը խորամանկությունն ու ճարպկությունը: Դեսպաններին տրվում էին ծալվող քարտեր որոնցում նշված էին բանակցություններ վարելու հրահանգները:

Դիվանագիտական էթիկետը հետագայում զարգացավ Հին Հռոմում: Հռոմից այլ երկրներ մեկնող դեսպանները կրում էին ոսկյա մատանիներ որոնք խորհրդանշում էին նրանց ուժն ու հզորությունը: Կրելով այդ մատանիները նրանք անարգել անցնում էին այլևայլ պետությունների սահմանները: Բացի այդ այն միջոց էր դեսպանական ուղեբեռները տեղափոխելու: Այլ երկրներից Հռոմ ժամանած դեսպաններին ընդունում էին հատուկ պաշտոնով մարդիկ արարողակարգի մագիստրոսները: (*ըստ iravaban.net. կայքի*)

գ) Հին Հռոմում իշխանությամբ օժտված էին նաև բարձրագույն մագիստրատները դիկտատորը կոնսուլները և պրետորները: Կոնսուլները որոնք երկուսն էին բարձրագույն մագիստրներն էին ընտրվում էին ցենտուրիական կոմիցիաներում: Լիցինիոսի և Սեքստիոսի օրենքների (մ. թ. ա. 367) համաձայն կոնսուլներից մեկն ընտրվում էր պլեբեյներից: Սրանք օժտված էին քաղաքացիական և զինվորական բարձրագույն իշխանությամբ: Կոնսուլը բանակում իրականացնում էր արդարադատություն տնօրինում էր ռազմական ավարը միայն շարժական գույքը իսկ նվաճված տարածքների հարցը լուծում էր Սենատը: Կոնսուլը կարող էր

հաշտության համաձայնագիր կնքել Հռոմեական պետության թշնամու հետ այդ համաձայնագիրը ենթակա էր վավերացման Սենատի կողմից: (*Գ. Սաֆարյան, Ա. Եսայան, Հռոմեական իրավունք*)

դ) Մ. թ. ա. 367 թ. հաստատվեց պրետորի պաշտոնը որը փաստորեն կոնսուլի տեղակալն էր վերջինիս բացակայության ժամանակ: Մ. թ. ա. 3–րդ դ. պրետորների թիվը հասավ երկուսի իսկ մ. թ. ա. 1–ին դ. 8–ի: Ինչպես կոնսուլները այնպես էլ պրետորներն օժտված էին բարձրագույն իշխանությամբ imperium–ով: Նրանց հիմնական լիազորություններն էին ապահովել քաղաքի ներքին կարգուկանոնը պահպանել հասարակական կարգը և անվտանգությունը: Նրանք օժտված էին նաև արդարադատության գործառույթով այն հետագա դարերում ավելի ընդարձակվեց: Ըստ մագիստրատների աստիճանակարգության հաջորդ պաշտոնը ցենզորն էր: Մ. թ. ա. 443 թ. ցենտուրիական կոմիցիաները սկսեցին ընտրել երկու ցենզորներ սկզբում միայն պատրիկներից: Նրանք ընտրվում էին 5 տարի ժամկետով որը հետագայում սահմանափակվեց մեկուկես տարով: (*Գ. Սաֆարյան, Ա. Եսայան, Հռոմեական իրավունք*)

ե) Նրանց իրավասությունն էր քաղաքացիներին ըստ տրիբուսների և ցենտուրիաների այսինքն ըստ դասերի բաժանելու գործը իսկ Օվինիոսի օրենքի համաձայն մոտ. մ. թ. ա. 312 թ. նրանք սկսեցին կազմել սենատորների ցուցակները: Այդ գործառույթներից բացի ցենզորների վրա է դրվում նաև բարքերի վերահսկողությունը: Նրանք մասնակցում էին նաև ֆինանսական հարցերի տուրքերի մաքսերի չափը որոշելու և կառավարման այլ գործառույթներին: Ցենզորի պաշտոնը պլեբեյների համար մատչելի դարձավ միայն մ. թ. ա. 351 թ. իսկ մ. թ. ա. 339 թ. ըստ Պուբլիոս Ֆիլոնի օրենքի սահմանվեց որ ցենզորներից մեկը պետք է պլեբեյ լինի: Ցենզորների որոշումները ենթակա չէին գանգատարկման և դատական քննության: (*Գ. Սաֆարյան, Ա. Եսայան, Հռոմեական իրավունք*)

2.2. ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գտնել խոսքի հնչյունական (ձայնային) ներդաշնակության խախտումները և ուղղել:

1. Տեղական ներկայացուցչությունների չնչին միջամտությունը կարող էր օգտակար լինել գինու ու օղու սպառման գործընթացի կազմակերպմանը: **2.** Ձեռք բերեք սպառողական վարկեր տասներկուսուկես տոկոս տոկոսադրույքի չափով: **3.** Ի դեպ, ցուցահանդեսում ցուցադրված ցուցանմուշները Ցյուրիխից մեծ դժվարությամբ էին տեղափոխվել Վենետիկ: **4.** Փաստ է, որ այդպիսի մրցույթների ժամանակ, չնայած ժյուրիի պահանջներին, մարզչական չնչին ցուցումները վճռորոշ դեր են կատարում: **5.** Եվրոպական արտադրության սալիկներ և պատուհաններ, ջրատաքացուցիչ, ջեռուցիչ սարքեր ու օդորակիչներ և… զեղչային ճկուն համակարգ միայն մեր խանութ–սրահներում:

2. Առանձնացնել լեզվական այն միջոցները, որոնք պայմանավորում են խոսքի հարստությունը:

ա)

1. Սոսափում է ու սիրով սարն է ելնում իմ սոսին, Սոսին՝ իմ սեգ հարսի պես՝ լուսնի ոսկե կուժն ուսին, Ու ես շորորն եմ հիշում իմ շուշանի աբրեշում, Որ հուշ դարձել մշուշում ու ինձ դրժել, չի հիշում (ՀՇ): **2.** Իմ խոսքերը կարկաչում են կապույտում, Կարկաչում են ու կանչում են կապույտում… ….Երազներ կան, որ կարոտներ են միայն, Լո՛ւյս կարոտներ, որ կանչում են կապույտում… (ԵՋ): **3.** — Ահա՛ ես հեռանում եմ,— շարունակեց նա ավելի նվազ ձայնով.— շուտով պիտի խորասուզվիմ անհայտության ծովի մեջ… ձեզ է մնում կյանքը յուր չարիքներով, հրապույրներով… աշխատեցե՛ք վայելել նրան իմաստնաբար և չնմանիլ ինձ, չվատնել այն անօգուտ… Քեզ եմ թողնում իմ գահը, սիրեցյա՛լ Աբաս, քե՛զ եմ

թողնում և հայրենիքը ցավերով ծանրաբեռնված… Ժառանգի՛ր առաջինը և խնամող եղիր վերջնույն… Դու բախտավոր ես ընտանյաց մեջ, բախտավոր կլինիս և թագավորությանդ մեջ… զի ով օրինավոր հայր է որդվոց, նա կլինի և օրինավոր հայր յուր հպատակաց… (*Մ*):

բ)

1. Ադրբեջանի վարչապետը ժպտալլուկ դեմքով մոտեցավ ողջունելու ՌԴ նախագահին: **2.** Լավ է կուլ գնալ առյուծին, քան կրկին դառնալ աղվեսի բաժին: **3.** Պարզ դարձավ, որ որոշ հիմնարկներ զրկվել են կառավարության փողամուղ ուղիներից: **4.** Եթե Ձեզ ասեն, որ Ձեր գնացքը արդեն գնացել է, հիշե՛ք, որ տեղ հասնելու համար դեռ կան ինքնաթիռ ու զբոսանավ: **5.** Նրա քաղաքական կարիերան ավարտված է. նա շարունակում է մեռնել: **6.** Հիշյալ նախարարը շատ ամուր է աթոռվել, և անհնար է նրանից ազատվել: **7.** Մենք մանկությունից ենք ճանաչում իրար և դատապարտված ենք հավատարմորեն ու ընդմիշտ ընկերություն անելու:

3. Ընդգծել հնաբանությունները, բացատրել դրանց կիրառության նպատակը:

ա)

1. Սույն օրենսգրքի և այլ օրենքների հիման վրա ու ի կատարումն դրանց՝ ՀՀ նախագահն իրավունք ունի ընդունելու քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող հրամանագրեր: **2.** Ձգտելով հաստատել գործընկերային սերտ հարաբերություններ երկու պետությունների արդարադատության նախարարությունների ենթակայության և վերահսկողության ներքո գործող մարմինների և հաստատությունների միջև՝ կողմերը համաձայնեցին ներքոհիշյալի մասին: **3.** Ավարտելով նամակը՝ ևս մեկ անգամ խորին հարգանոք ու շնորհակալության բարձր զգացումով կսպասեմ Ձեր այցին:

բ)

1. Ձեր աշխատանքի ընդունման հրամանում սխալ է նշվել պաշտոնը, ինչի համար այն արդեն վավեր չէ, և վաղն ևեթ կտրվի ի փոփոխումն հրամանի: **2.** Տեղեկանքը տրվում է առ այն, որ 1–ին կուրսի ուսանող Արմեն Տիգրանի Ներսիսյանը սեպտեմբերի 10–18–ը գտնվել է Պրահայում և մասնակցել շախմատի միջազգային մրցաշարին: **3.** Ի պատասխան Ձեր գրության՝ հայտնում ենք, որ նախագիծը հընթացս քննարկվում է, և օրենքով սահմանված ժամկետում Դուք կստանաք եզրակացությունը նախագծի վերաբերյալ:

գ)

— Ձինվո՛րք և ժողովո՛ւրդ Գառնո. այս մանկամարդ իշխանուհին ձեր ամենքի հանցանքը քավեց. հայրենիքի փրկության համար նա յուր անձն է առաջարկում ողջակեզ: Անշուշտ, դուք էլ ինձ նման չեք կամենալ, որ այդ զոհն ընդունեք, բայց նրա քույրերին խրախուսելու համար մենք նրան պիտի վարձատրենք. նա ապացուցեց, որ հարազատ ժառանգ է Սյունյաց դյուցազնոգի նախարարաց, մենք էլ պիտի ապացույց անենք, որ գիտենք մեծարել հայկազանց հարազատ նախարարազնի անձնվիրությունը: (*ըստ Ստ. Զորյանի*)

4. Ընդգծել դիպվածային բառերը: Հնարավո՞ր է դրանք փոխարինել համագործածական բառերով: Բացատրել խոսքային որակների փոփոխությունը:

ա)

1. Նրա հանդեպ կարող են ցուցաբերել նույն մոտեցումը, ինչը ցուցաբերվեց մեկ այլ մահափորձացուի դեպքում: **2.** Քաղաքապետի ընտրություններն անայլընտրանք են լինելու: **3.** Իրական հայաստանակենտրոնությունը ամենօրյա աշխատանքի ու բարեկեցիկ պետություն ստեղծելու մեջ է: **4.** Նախագահի պաշտոնը զբաղեցնող մարդն ընդհանրապես չպետք է ինչորբանամետ լինի: **5.**

Եթե այս պետությունը նախորդ պետության իրավահաջորդն է, ուրեմն նաև բարոյահաջորդն է: **6.** Հիմա մշակույթի, գիտության տարբեր ոլորտներում առաջացել է նվեր ստացող ձոներգուների մի տեսակ, որոնք իրենց մտավորական են համարում, քաղաքականության հետ բացարձակ կապ չունեն, բայց իրենց տիրոջ համար կարող են գնալ քարոզարշավի: **7.** Մինչև վերջերս նախագահացուների աղմկահարույց անուններ էին շոշափվում, որոնց հետևում լրջորեն կանգնած մտավորականների անուններն ինձ ցնցում էին:

բ)

1. Այդ ոչնչամետները ավելի լուրջ վտանգ են ներկայացնում, քան ընդդիմադիրները: **2.** Եթե այսպես շարունակվի, և օրենքները հաճախ լքեն մեր քաղաքացուն, ապա ազգովի սփյուռքացման շեմին ենք հայտնվելու: **3.** Այս օրերին նախ և առաջ հենց ինքնաանվտանգության համար պետք է շատ զգույշ լինել կիսաչկայացած հրմշտիչներից ու սադրիչներից: **4.** Բողոքի ցույցը աստիճանաբար վերածվում է զանգվածային պարացույցի: **5.** Աշնանը կրկին մեկնարկում է ընտրարշավը՝ դասական դարձած ընտրասֆալտի տեսքով: **6.** Դժվար է կայուն առաջընթաց ապահովել՝ վարկամոլ քաղաքականություն վարելով:

5. Օգտվելով համացանցից՝ բացատրել տրված դարձվածքների, թևավոր խոսքերի և արտահայտությունների ծագումը: Դրանցով կազմել նախադասություններ:

ա) Ամերիկա հայտնագործել, աքիլլեսյան գարշապար, բաբելոնյան աշտարակաշինություն, դամոկլյան սուր, դանայան տակառ, դիվանագիտական խողովակ, կլոր սեղան, սիզիփյան աշխատանք:

_____

_____

բ) Անցնել Ռուբիկոնը, առյուծի բաժին, ավգյան ախոռ, երկաթյա գավազան, իններորդ ալիք, հաննիբալյան երդում, ոսկե հորթ, պյուռոսյան հաղթանակ, սողոմոնյան վճիռ, ֆորս մաժոր, կռվախնձոր:

գ) Գորդյան հանգույց, Թեմիսի սպասավոր, Լինչի դատաստան, Կոլումբոսի ձու, Հուդայի համբույր, ձեռքերը լվանալ, մեղմացուցիչ դեպք հանցանաց, Պանդորայի արկղ, պրոկրուստյան մահիճ, վերջին մոհիկան, տրոյական ձի:

_____

_____

_____

_____

_____

6. Կազմել նախադասություններ՝ փոփոխելով տրված դարձվածքների և թևավոր խոսքերի բաղադրիչ(ներ)ը:

ա) «Ջայլամի քաղաքականություն», «Կուժ ասեմ, կուլա լսիր», «Դուդուկի տակ պարել», «Եկա, տեսա, հաղթեցի», «Առյուծի բաժին դառնալ», «Հռոմի պապից կաթոլիկ», «Գայլի գլխին ավետարան կարդալ»:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

բ) «Կարկուտը ծեծած տեղն է ծեծում», «Կրակի վրա յուղ լցնել», «Ծովն անցնել, գետում խեղդվել», «Օդային ամրոցներ կառուցել», «Մեծապատիվ մուրացկաններ», «Աթոռից կառչել», «Գործը գլուխ բերել»:

_____

_____

7. Վերականգնել փոփոխված դարձվածքների, ասացվածքների, արտահայտությունների սկզբնական ձևերը և դրանցով կազմել նախադասություններ:

ա)

1. Ֆրանսիացիների յոթ երգերն էլ գինու մասին են: **2.** Վերմակդ ոտքերիդ չափով քաշի՛ր վրադ: **3.** Բաժանի՛ր, որ հեշտ քանդես: **4.** Օտար երկրում ինչ ցանեցիր, քոնը չէ: **5.** Կամք կուսակցությանց, կամք Աստծո: **6.** Փորձառու գայլ: **7.** Նրա այո–ն այո է, ոչ–ը՝ այո:

բ)

1. Մեր գործը խոսք է: **2.** Բոլոր ճանապարհները տանում են փակուղի: **3.** Նստել թախտին, սպասել աթոռին: **4.** Հին ընկերները

աննկատ են դավաճանում: **5.** Ասա՝ ով է ընկերդ, ասեմ՝ ինչ մեղք ունես դու: **6.** Թրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը… նայած, թե ում լեզուն է կտրել: **7.** Արջն այդպես էլ երկրորդ երգը չսովորեց:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

8. Առանձին շարքերով դուրս գրել անփոփոխ և փոփոխված դարձվածքները. անփոփոխները ենթարկել փոփոխության և հակառակը:

ա) Ուկրաինայում կուսակցությունների ձայն բարբառո հանապատի սկզբունքն ինչո՞վ է պայմանավորված. նրանք կարծես գիտեն՝ որտեղ է թաքնված շան գլուխը, բայց լռում են, որովհետև նվագը կա՛մ իրենց սրտով չէ, կա՛մ էլ պատվիրված է ոչ իշխանական կուլիսներից:

բ) Հիմա արդեն վստահ կարելի է ասել, որ ռուսական լրատվամիջոցների լեզուն ուղեղից յոթ մղոն առաջ է ընկել:

գ) Մինչ ցուցարարները հուժկու բողոքի ալիք են բարձրացրել, իշխանությունը հանգիստ խղճով ուղիներ է որոնում բողոքի ալիքը քնեցնելու:

դ) Ժողովուրդը ցաքուցրվել է, իսկ փրկության ձեռք մեկնող չկա. հյուսիսային կողմը թքած ունի, իսկ Արևմուտքի մեկնած սառնասիրտ ձեռքը վարկերի տեսքով է:

ե) Իբր քիչ էր զայրացած գործարանատիրոջ գլխին եկածը, բանվորներն էլ այս տապին տաք ջուր լցրին նրա տաք գլխին:

զ) Հիշյալ գործում Հայաստանը ձեռքերը ծալած չի նստել. որոշակի նախաձեռնություն կա հակառակորդի փետուրները անմնացորդ քամուն տալու:

_____

_____

_____

_____

_____

_____

9. Ընդլայնելով փոփոխության ենթարկել տեքստը՝ գործածելով խոսքի հարստության և բազմազանության տարբեր միջոցներ (նորաբանություններ, հնաբանություններ, դարձվածքներ և այլն):

Ամեն մարդ երազանքների իր աշխարհն է ստեղծում: Անուրջները շատանում են, երբ կյանքն է դժվարանում: Մարդու իրավունքն է, բայց ոչ քաղաքական գործչի. նա իրավունք չունի իրեն ու հանրությանը երազանքներով պաշարելու: Հնարավոր է՝ նա երազում տեսել է, որ թռչում է անդունդների վրայով: Սա չի նշանակում, որ պիտի զարթնի քնից ու գնա ժողովրդի մոտ՝ այն պատմելու կամ ժողովրդին իր հետևից տանելու: Ժողովրդի պատմություն, հոգեբանություն, աշխարհագրություն, ազգի բնավորություն. սրանք են քաղաքական գործչի՝ նախագծեր կազմելու և մարդկանց առաջնորդելու հիմքերը: Հակառակը չի կարող լինել: Հակառակը չպե՛տք է լինի:

10. Գրել շարադրություն (1–2 էջ)՝ «Ես՝ տարիներ անց» վերնագրով: Գործածել խոսքի հարստության և բազմազանության զանազան միջոցներ (բազմիմաստ բառեր, բառային անսովոր զուգակցումներ, հնաբանություններ, հոմանիշներ և այլն):

2.3. ՃՇԳՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՍՏԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Փակագծերում տրված բառերից ընտրել մեկը. բացատրել ընտրությունը:

ա)

1. Իր պատկերացմամբ՝ դեպքը ներկայացնող ապացույցը շատ (**ցայտուն, ակնհայտ, անթաքույց**) ի ցույց է դնում նրա անմեղսունակությունը: **2.** Հռոմի ընդարձակումը սկսվեց հանրապետության ժամանակաշրջանում, սակայն իր գագաթնակետին հասավ Տրայանոս (**արքայի, կայսեր, թագավորի**) գահակալման ընթացքում: **3.** Մարդիկ հրաշալի կարողանում են (**պահել, պաշտպանել, պահպանել**) այն գաղտնիքները, որոնք չգիտեն: **4.** Հեղինակավոր մի շարք մասնագետներ իրենց տեսակետները ներկայացրին հայերի զանգվածային սպանությունների (**կապակցությամբ, առնչությամբ, մասին**):

բ)

1. Տիգրան Մեծը, հաշվի առնելով, որ գտնվում է երկու հզոր տերությունների՝ Հռոմի և Պարթևստանի (**ոտնձգման, ոտնձգության**) տակ, Ք. ա. 66 թ. Արտաշատում Պոմպեոսի հետ կնքեց հաշտության պայմանագիր: Նա հրաժարվեց (**ազատագրած, նվաճած, զավթած**) երկրների մեծ մասից, վճարեց հսկայական ռազմատուգանք, բայց պահպանեց Մեծ Հայքի ամբողջականությունը և անկախությունը: **2.** Քննարկման ժամանակ սկսված վիճաբանությունը (**ստեղծվել էր, ձևավորվել էր, ծագել էր**) կարծիքների թերընկալումներից: **3.** Շուշիի (**գրավումից, ազատագրումից, բռնագրավումից**) անցել է մոտ 20 տարի: **4.** Կոմիտասը հատ առ հատ (**հավաքեց, հավաքագրեց, ի մի բերեց**) մեր ազգային երգերը:

2. Նախ տրված են տողեր հայ գրողների գործերի նախնական օրինակներից, ապա՝ դրանց մշակված տարբերակները: Կատարված փոփոխություններն ընդգծված են: Փորձե՛ք բացատրել՝ ինչու են կատարվել այդ փոփոխությունները: (Հարկ եղած դեպքում ամբողջությամբ կարդացե՛ք համապատասխան երկը):

ա)

Եվ մարդասպանը դուրս եկավ ձորից,
Մոլոր է հաղթական նրա քայլվածքը,
Սարսափ **էր ընկնում** արնոտ աչքերից,
Եվ խառնված էր հպարտ հայացքը:

Եվ մարդասպանը դուրս եկավ ձորից,
Դեմքը՝ այլայլված, քայլվածքը՝ մոլոր,
Սարսափ **էր կաթում** արնոտ աչքերից,
Եվ կերպարանքը փոխված էր բոլոր:
(*Հ. Թումանյան, Անուշ*)

բ)

Աղջի՛, **ծամկտրած,** նստիր վրանում,
Ինչ ես դուրս գալիս խելքամաղ անում:

Աղջի՛, **անաբուռ**, նստիր վրանում,
Ինչ ես դուրս գալիս խելքամաղ անում:
(*Հ. Թումանյան, Անուշ*)

գ)

Շամբեղեն գըրչով **գըրեցի** փառքեր
Ի նվեր քեզ, **հին** հայրենիք,

Ի նվեր քեզ, հին հայրենիք:
Շամբեղեն գըրչով երգեցի կարոտ
Ի նվեր ձեզ, հայ պանդուխտներ,
Ի նվեր ձեզ, **ախ** պանդուխտներ
…**Պըրտու** գըրչով **փլած** տունս երգեցի
Ի նըվեր քեզ, հայր **կարեվեր,**
Զայն կըտրեցի մեր աղբյուրին քով
Ի նըվեր քեզ, մայր կարեվեր:
Իմ գըրչով կըռիվ, կըռիվ երգեցի:

Եղեգնյա գըրչով **երգեցի** փառքեր
— Քեզի **ընծա՛**, **իմ** հայրենիք,
— Քեզի **ընծա՛**, հին հայրենիք:
Եղեգնյա գըրչով երգեցի կարոտ
Ձեզի **ընծա՛,** հայ պանդուխտներ,
Ձեզի **ընծա՛**, **հեգ** պանդուխտներ
…**Եղեգնյա** գըրչով **որբ** տունս երգեցի
Քեզի ընծա՛, հայր **ալեհեր,**
Ցամքած աղբյուրեն մեր զայն հոտեցի
Քեզի ընծա՛, մայր կարեվեր:
Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի:
(*Դ. Վարուժան, Ձոն*)

դ)

Ես ուզեցի **ըլլալ քնար**
Ներա **ոտքի տակը նիրհող**,
Ներա հոգվույն **խորը լռող**
Թեթև պատկեր մ’ըլլալ, **մոռնալ**
Ձիս, **միմիայն ըզնե** խոկալ,
Վառե երազ մ’որուն մեկ շող:

Ես ուզեցի **քնար մ'ըլլալ**
Ներա **ձեռքի տակ հևացող,**
Ներա հոգվույն **խորն հիացող**
Թեթև պատկեր մ'ըլլալ **շարժյալ,**
Մոռնալ զիս, լոկ ըզնե խոկալ,
Վառե երազ մ'որուն մեկ շող:
(*Պ. Դուրյան, Դրժել*)

3. Ընդգծել հոմանիշները, որոշել դրանց տեսակը և բացատրել ոճական դերը:

ա) Մեծ հաղթանակը նշանավորող օրվա երկրորդ կեսին միայն, երբ սարսափելի ջարդն ու կոտորածը արդեն ավարտվել էին, սուլթան Մահմուդը մուտք է գործում նվաճված քաղաքը: Հպարտ ու լրջախոհ՝ նա իր հոյակապ նժույգով անցնում է թալանի վայրենի ու սահմռկեցուցիչ տեսարանների մոտով՝ առանց որևէ կողմ նայելու, քանի որ հավատարիմ է տված խոստումին՝ չխանգարել զինվորներին, որ իր համար հաղթանակ էին նվաճել իրենց ահավոր արհեստով: (*ըստ Ս. Յվայգի*)

բ) Բայց ահա տեղի է ունենում այն, ինչ Բյուզանդիոնի կողմի հուսալքվող, ճիչ ու կական բարձրացնող բազմությանը հրաշք է թվում: Հանկարծ ծովը հուզվում է թեթևակի, և ուժեղ քամի է բարձրանում: Չորս գալիոնների թոշնած առագաստները իսկույն լցվում են, ուռճանում, մեծանում, դառնում կլորավուն: Քամին, բաղձալի, փրկարար քամին վերստին զարթնում է: Գալիոնների նավախելները բարձրանում են հաղթականորեն, և նրանք, առագաստները բացած, հանկարծակի մղումով առաջ են շարժվում, հակահարձակման անցնելով՝ հիմնովին խորտակում են ամենուր վխտացող թուրքական նավերը: Նրանք ազատվել են արդեն, նրանք փրկված են: (*ըստ Ս. Յվայգի*)

գ) Պետք է հստակորեն գիտակցել հետևյալ պարզ իրողությունը. որքան էլ ինքնավստահ, որքան էլ ամբարտավան, որքան էլ դաժան՝ բռնապետությունն անհանգստանում, զայրանում և նույնիսկ սարսափում է, երբ նրան հիշեցնում են իր գործած ոճիրներն ու հանցանքները: Ակնհայտ է, որ օրինազանց, օրինախախտ, հանցավոր վարքի պատճառների մասին խոսում և գրում են մի շարք գիտությունների ներկայացուցիչներ՝ մանկավարժներ, հոգեբաններ, իրավաբաններ, քաղաքագետներ և այլք, ովքեր առանձնացնում են բազմապիսի պատճառներ ու պայմաններ՝ հանցավորության պատճառականության շղթայում ինչ–որ դեր ունեցող: (*մամուլից*)

4. Ընդգծել խոսակցական և ժարգոնային իրողությունները. արդյոք պատճառաբանվա՞ծ է դրանց գործածությունը:

1. Եթե ընդամենը մի փոքրիկ քերծվածքի համար մեծ գումարներ հատկացվեց պետբյուջեից, ապա 10 փամփուշտից ուխոդ արած հերոսն արժանի է ավելի լուրջ փոխհատուցման: **2.** Կոչ եմ անում ձեզ տեսնել և հաշվի առնել ակնհայտը, կայացնել վճիռ, որը կարող է անարդարության, ամենաթողության, բեսպրեդելի և լկտիության զոհ դարձած քաղաքացիներին հետ պահել վերջնական հուսահատությունից ու գաղթելու ցանկությունից: **3.** Բանից պարզվում է՝ այս նեղ մաջալին, երբ պետության համար ամեն մի գրոշն ունի մաքուր ոսկու արժեք, պետբյուջեից ինչ–որ գումարներ են հատկացվում որոշ անձանց պարտք–մարտքերի մարման համար: **4.** Մշակույթի՛ հարգարժան վերլուծիչներ, բավական է գլուխ հարթուկեք ձեր տարտամ ու միօրինակ վերլուծություններով. միևնույնն է, մշակութակիր լուրջ հանրությունը ձեր զահլան չունի. հանդարտվե՛ք և հա՛ց փնտրեք ավելի օգտակար գործերով:

5. Տրված նախադասությունները տարբեր պատճառներով կարող են տարընկալումների տեղիք տալ (նախադասու-

թյունները կետադրված չեն): Բացատրել՝ ինչով է պայմանավորված երկընկալումը. անհրաժեշտ փոփոխություններ կատարելով՝ խոսքը դարձնել առավել հստակ:

1. Օմբուդսմենի դրամաշորթության վերաբերյալ ներկայացրած տվյալները մեկ ամիս շարունակ հանրության ուշադրության կենտրոնում էին: **2.** Նախագահի նշանակումը անակնկալի բերեց նույնիսկ ամենից մերձավորներին: **3.** Գործողությունների մեկնաբանությունները որոնք կատարվել են Ձեր կողմից բողոքի ալիք են բարձրացրել: **4.** Մեղադրող կողմի մոռացության մատնած հայցադիմումը գտնվեց արխիվային թղթապանակից: **5.** Դիմեք մի ուրիշ հայտնի փաստաբանի: **6.** Վարչապետի տնտեսական հանձնաժողովի նիստում արտասանած ճառը մամուլում տարբեր քննարկումների արժանացավ:

6. Գտնել խոսքի ճշգրտությունն ու հստակությունը խախտող իրողությունները (քերականական, բառագործածության և այլն), ուղղել. անհրաժեշտության դեպքում վերաշարադրել:

ա)

1. Ք. ա. 2–րդ հազարամյակում այդպիսի հանցանքի համար դատապարտում էին գնդակահարության: **2.** Հրաժեշտի քաղաքավարական նորմերը սովորաբար դրանք լինում են շնորհակալություն տեղեկության համար, օգնություն, առաջարկություն: **3.** Բանկի կառավարիչը աշխատակիցներին հանձնարարեց՝ կազմեն երկրորդ եռամսյակի պլանը, քննարկեն վարչություններում և վերջնական արդյունքը ներկայացնել քննարկման: **4.** Այստեղ նկատի են ունեցվում գույքի ոչնչացման եզակի, ոչ զանգվածային դեպքերը: **5.** Բացի դրանից՝ նրա վրա դրված պարտականություններն ի կատար ածելու համար նա պետք է ունենա փորձված խելք և հավասարակշռված բնավորություն:

բ)

1. Ցանկալի է նաև, որպեսզի դիվանագետը ցուցաբերի բարյացակամություն և բարություն, որոնք կստիպեն նրա ամենափակ և զուսպ զրուցակցին բացվել և անկեղծանալ, ինչպես նաև մտքի ճկունություն, որի միջոցով դիվանագետը կկարողանա իր տեսակետը պահպանել և խելամտորեն հարցեր առաջադրել: **2.** Դիվանագետը պետք է խոշոր գիտելիքներ ունենա տնտեսագիտության ոլորտում: **3.** Հեղինակավոր մի շարք մասնագետներ իրենց տեսակետները ներկայացրին հայերի զանգվածային սպանությունների կապակցությամբ: **4.** Նա երկու ամիս առաջ մահացել է. նրան չի կարելի հարցաքննել: **5.** ՀՀ Ազգային ժողովի փոխխոսնակը 1961 թ. մարտին պաշտոնական այցով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն:

գ)

1. Եկել են իրենց ուսուցչին հարգանք մատուցելու իր հոբելյանի առթիվ: **2.** Մարքեթինգի նպատակներն են՝ ինչքան, ինչ ապրանք, ում և ինչ ժամկետում է անհրաժեշտ վաճառել, որպեսզի վաս-

տակել գործարարության նպատակներում նշված գումարը: **3.** Այնպիսի մարդկային հատկանիշը, ինչպիսին է բարեկեցության աճի ձգտումը, մի կողմից՝ արտահայտվում է անհատի պահանջմունքների էլ ավելի աճման մեջ, մյուս կողմից՝ ստիպում է նրան հասարակության մեջ փնտրել չբավարարված պահանջներ և իրականացնել այն, ինչը անհրաժեշտ է մյուսներին: **4.** «Հայոց կտակը» եռագրության երկրորդ գիրքն է՝ նվիրված ցեղասպանության թեմային, որում արծարծվում է նաև եղեռնի թեման: **5.** Դա ոտնձգում է հասարակական անվտանգության դեմ:

_____

_____

_____

_____

_____

7. Չխմբագրված տեքստերը համեմատեք խմբագրվածների հետ՝ ցույց տալով խոսքի անճշտությունները: Առաջարկեք Ձեր տարբերակը:

ա) ՀՀ–ում հանրային կառավարման ոլորտում բարեփոխումների անհրաժեշտությունը առաջացավ Խորհրդային Միության փլուզման և շուկայական տնտեսության անցում կատարելու պատճառով: 1999 թ. ՀՀ վարչապետի որոշումով ստեղծվեց ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հանձնաժողովը, որի շրջանակներում մշակվեց ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հայեցակարգ՝ համապատասխան ուղենիշներով:

ՀՀ–ում հանրային կառավարման ոլորտում բարեփոխումների անհրաժեշտությունն առաջացավ Խորհրդային Միության փլուզումից և շուկայական տնտեսության անցնելուց: 1999 թ. վարչապետի որոշումով ստեղծվեց ՀՀ պետական կառավարման համակարգի բարե-

փոխումների հանձնաժողով, որը մշակեց ՀՀ պետական կառավարման համակարգի բարեփոխումների հայեցակարգ:

բ) Առաջընթաց դանդաղորեն էր նկատվում կամ չէր նկատվում ռումինա–ռուսական հարաբերություններում: Այս առումով նշանակալի ազդեցություն ուներ այն հանգամանքը, որ պաշտոնական Բուխարեստը հանդիսանում էր ՆԱՏՕ–ի ընդլայնման և իր ՆԱՏՕ–ին ու ԵՄ–ին անդամակցության եռանդուն ջատագով:

Դանդաղ առաջընթաց էր արձանագրվում ռումինա–ռուսական հարաբերություններում: Այս առումով նշանակալի ազդեցություն ուներ այն հանգամանքը, որ պաշտոնական Բուխարեստը ՆԱՏՕ–ի ընդլայնման և ՆԱՏՕ–ին ու ԵՄ–ին անդամակցության եռանդուն ջատագով էր:

գ) Երկրորդ բաղկացուցիչն ընդգրկում է ՌԴ պետական քաղաքականության տեղեկատվության ապահովումը, որը հիմնականում կապված է Ռուսաստանի Դաշնության պետական քաղաքականության վերաբերյալ ռուսական ու միջազգային հասարակությանը հավաստի տեղեկատվության ապահովման հետ:

Երկրորդը ՌԴ պետական քաղաքականության տեղեկատվության ապահովումն է, որը հիմնականում վերաբերում է Ռուսաստանի Դաշնության պետական քաղաքականության մասին միջազգային հասարակությանը հավաստի տեղեկատվություն ապահովելուն:

_____

_____

_____

8. Գտնել խոսքի անճշտությունները, խմբագրել:

ա) ՆԱՏՕ–ի եվրոպական երկրների բնակիչները չեն ուզում մարտնչել ուրիշների փոխարեն: Նրանք նաև չեն ցանկանում պատերազմել Ռուսաստանի հետ, հետևաբար նրանք նույնիսկ համաձայն են հրաժարվել Հյուսիսատլանտյան դաշինքի կոլեկտիվ պաշտպանության հիմնական հոդվածներից մեկից, որը հավասարեցնում է զինված հարձակումը դաշինքի երկրներից մեկի վրա: Այս մասին վկայում են հարցման արդյունքները, որոնք անցկացվել են ամերիկյան «Pew Research» հետազոտական կենտրոնի կողմից: (*մամուլից*)

_____

_____

_____

_____

_____

բ) Հայաստանում արտագաղթի սոցիալական գործոններն ուսումնասիրելիս կամ մարդկային կապիտալի օգտագործման արդյունավետությունը գնահատելիս հնարավոր չէ հաշվի չառնել նաև գենդերային ռիսկերի ազդեցությունը, որոնք ակնհայտորեն դրսևորվում են, օրինակ, զբաղվածության ոլորտի ու աշխատաշուկայի գենդերային անհաշվեկշռվածության երևույթի մեջ: Տեղեկատվության բնագավառում ՌԴ–ի ազգային շահերի հաջորդ բաղկացուցիչն է ընդգրկում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, ինչպես նաև հայրենական տեղեկատվական ռեսուրսների հավաքագրման,

պաշտպանման ու դրանց արդյունավետ կիրառման ապահովագրումը: (*մամուլից*)

_____

_____

_____

_____

_____

2.4. ՊԱՐԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

1. Կատարել անհրաժեշտ փոփոխություններ՝ արտահայտված միտքը դարձնելով ավելի պարզ ու մատչելի:

ա) Տնտեսագիտության մեջ դրական հայեցակարգի էությունը կայանում է նրանում, որ գործարարությունը ընկալվում է որպես մարդկանց միանգամայն սեփական նախաձեռնությամբ իրականացվող հասարակական օգտակար հանրօգուտ գործունեություն, որի նպատակն է հանդիսանում այլ մարդկանց համար ապրանքների արտադրությունը և ծառայությունների իրականացումը:

_____

_____

_____

_____

_____

բ) Գործարարությունը հակասական երևույթ է, սակայն, չնայած այդ հակասությունները կարող են բազմազան կոնֆլիկտների ծագման պատճառ հանդիսանալ, ընդհանուր առմամբ դրանք տնտեսության զարգացմանն են ծառայում և միանգամայն կործանարար բնույթ չեն կրում:

_____

_____

_____

գ) ԼՂՀ հիմնախնդրի լուծման մասով ՀՀ նախագահը և ՌԴ նախագահը շարունակում են իրենց նախկին տեսակետների, կարծիքների առաջադրումը:

դ) Սեփականության իրավունքը ամրապնդում է այս կամ այն սուբյեկտի հնարավորությունը յուրացնել օբյեկտների որոշակի ամբողջություն, այդ պատճառով էլ, պահպանելով ավելի վաղ կուտակված սեփականությունը և մեծացնելով սեփականության օբյեկտների ցուցակը գործարքի իրականացման գործընթացում, էկոնոմիկայի սուբյեկտները պահպանում և ամրապնդում են իրենց դիրքը մյուս սուբյեկտների համեմատ, իսկ եսասիրական հետաքրքրությունները յուրաքանչյուր մարդու ստիպում են ձգտել սեփական տնտեսական դիրքի ամրապնդմանը և վերարտադրմանը էկոնոմիկայի մյուս սուբյեկտների համեմատ:

2. Ընդգծված տերմինների փոխարեն գրել հայերեն համարժեքները. ո՞ր դեպքում է նախադասության միտքը ավելի պարզ ու մատչելի:

ա) Պետական սեփականության իրավունքի առաջացման առանձնահատուկ եղանակ է **ռեկվիզիցիան** _____:

բ) Կոնֆիսկացիան _____՝ որպես պետական սեփականության իրավունքի առաջացման հիմք, կիրառվում է միայն օրենքով նախատեսված դեպքերում որպես հանցագործության կամ այլ իրավախախտման համար սանկցիա:

գ) Նեգատոր _____ հայցը կարող է հարուցվել, եթե սեփականատիրոջ սուբյեկտիվ իրավունքի խախտումը չի դադարել:

դ) Վերբալ _____ հայտագիրը ամենատարածված դիվանագիտական թղթակցությունն է: Միջազգային իրավունքի համաձայն՝ գոյություն ունի պետության ճանաչման երկու ձև՝ **դե ֆակտո** _____ և **դե յուրե** _____:

ե) Շուտով քննարկման կդրվի **էքստրադիցիայի** _____ մասին օրենքի նոր նախագիծը:

զ) Ի տարբերություն Արևմուտքի երկրների՝ մեզանում դեռևս նոր–նոր է ուրվագծվում **ֆրանչայզինգի** _____ երևույթը, այն էլ՝ բազում թերություններով:

3. Վերաշարադրել տեքստը՝ բազմաբաղադրիչ նախադասությունները փոխարինելով պարզ նախադասություններով: Բացատրել տարբերությունը:

ա) Պետք է իրատես լինել և հասկանալ, որ միջազգային հանրությունը երկար չի հանդուրժելու Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված իրադրությունը, քանի որ այն սպառնում է տարածաշրջանային փոխհամագործակցությանն ու անվտանգությանը, ինչպես նաև Արևմուտքի նավթային շահերին, ուստի հեռու չէ այն օրը, երբ կողմերին պարտադրվելու

է կարգավորման փոխզիջումային մի ծրագիր, որը լինելու է ոչ թե հարցի իրավական, այլ քաղաքական լուծում, թեև աշխարհի ուժեղները դա հրամցնելու են որպես միջազգային իրավունքի օրինակելի դրսևորում, և այդ հանգամանքներում ո՛չ Ադրբեջանը, ո՛չ էլ Ղարաբաղն ու Հայաստանը փոխզիջումից խուսափել չեն կարողանալու, ինչպես չկարողացան խուսափել բոսնիական և արաբա–իսրայելյան հակամարտության կողմերը: (*Լ. Տեր–Պետրոսյան, Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը (տե՛ս http://www.levonpresident.am)*)

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

բ) Փոխզիջումը, սակայն, միայն պարտադրանք չպետք է դիտել. ընդհակառակը, հակամարտող կողմերն իրենք դեռ պետք է հսկայական ջանքեր գործադրեն նրա շուտափույթ կայացման համար, որովհետև այլընտրանքը, ինչպես ասվեց, պատերազմն է ու ժողովուրդների նորանոր տառապանքներն են, մինչդեռ փոխզիջումն ընտրություն չէ լավի ու վատի միջև, այլ ընտրություն է վատի ու վատթարի միջև, այսինքն՝ փոխզիջումն ընդամենը վատթարից խուսափելու միջոց է, որից հակամարտող կողմերը հարկադրաբար օգտվում են, երբ հասնում են վատթարի

գիտակցմանը և ի վիճակի են դրսևորելու քաղաքական կամք ու անհրաժեշտ խիզախություն: (*Լ. Տեր–Պետրոսյան, Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը (տե՛ս http://www.levonpresident.am)*)

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

գ) Փոխզիջման դիմելիս կողմերը սովորաբար առաջնորդվում են մի քանի նկատառումներով, այն է՝ ազատվել իրենց բնականոն կենսագործունեությունն ու զարգացումն արգելակող և լուրջ վտանգներով հղի հակամարտությունից, սառեցնելով խնդիրը՝ հետաձգել այն՝ ժամանակ շահելու, ուժեր կուտակելու և ավելի բարենպաստ հանգամանքներում հօգուտ իրենց լուծելու նպատակով, խուսափել անկանխատեսելի բարդություններից՝ հույս փայփայելով, որ հետագայում ժողովուրդների հարաբերություններում նոր մտածողության արմատավորման և արժեքների վերագնահատման պատճառով խնդիրը կարող է կորցնել իր սրությունը, և սահմանները, օրինակ, կորցնեն այն նշանակությունը, որ ունեն ներկայումս: (*Լ. Տեր–Պետրոսյան, Պատերազմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը (տե՛ս http://www.levonpresident.am)*)

2.5. ՍԵՂՄՈՒԹՅՈՒՆ (ԿԱՐՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

1. Տրված նախադասությունները դարձնել ճշգրիտ և սեղմ՝ կատարելով անհրաժեշտ փոփոխություններ:

ա)

1. Հիմք են հանդիսանում դրա առավել մանրամասն կարգավորման համար: **2.** Աշխատանքը միշտ էլ կազմակերպված կերպով է կատարում: **3.** Դիվանագետը երբեք չպետք է մոռանա լինել զուսպ և համեստ, քանի որ սեփական հաջողությունը ընդգծելու փորձը ուրիշներին կստիպի զգալ նվաստացում և խանդ, ինչը կթուլացնի հասած արդյունքները: **4.** ՀՀ կենտրոնական բանկի կառուցվածքային բարեփոխումների իրականացման կապակցությամբ ՀՀ կենտրոնական բանկի գործավարության կատարման կարգապահությունը բարձրացնելու, հսկողության կազմակերպումն ու կառավարումն ամբողջությամբ կատարելագործելու նպատակով:

_____

_____

_____

_____

_____

_____

բ)

1. Մեր ազգային մտածողությանը և մենթալիտետին խորթ են բարոյականության այդ կարգի նորմերն ու կանոնները: **2.** Հարցի վերաբերյալ կա կարծիքների և տեսակետների բազմազանություն, տարատեսակություն: **3.** Համակարգչային տեխնիկայի զարգա-

ցումը այսօրվա դրությամբ գտնվում է որակապես նոր մակարդակի վրա: **4.** Հանցագործության շարժառիթները կարող են ամենատարբերը լինել: **5.** Գյուղական բնակչության մեջ 54%–ը կազմում են ընդհանուր միջնակարգ, իսկ 20%–ը՝ արհեստագործական կրթություն ունեցողները. միայն 11%–ն է բաժին ընկնում բարձրագույն կամ հետբուհական կրթություն ունեցողներին:

_____

_____

_____

_____

_____

_____

գ)

1. Կենտրոնական բանկի ղեկավարությունը գնում է այս որոշման ընդունմանը: **2.** Հաղորդակցվել կարողանալ դա նշանակում է կարողանալ ճանաչել մարդկանց, գնահատել նրանց գործնական հնարավորությունները և դրա հիման վրա օգտագործելով հաղորդակցման հոգեբանական ունակությունները՝ նրանց հետ փոխհարաբերություններ կառուցել: **3.** Այն դիտվում է որպես տեխնիկական պայման մեղադրանքը փոփոխելու որոշում կայացնելու համար: **4.** Տնտեսական առաջընթացի մասով կարող են ասել, որ աֆրիկյան երկրների զգալի մասը տասնամյակներ է, ինչ հետ նահանջ է ապրում:

_____

_____

_____

2. Գնահատե՛ք տրված տեքստերի տեղեկատվականությունը: Անհրաժեշտության դեպքում կրճատե՛ք նախադասություններ ու բառեր, որոնք, ըստ Ձեզ, ծանրաբեռնում են տեքստը և խանգարում տեղեկույթի ընկալմանը:

ա) Ինչ է գենային հիշողությունը: Գենն իր մեջ կրում է ինֆորմացիա անցյալի, ներկայի, անգամ ապագայի մասին, այդ իսկ պատճառով գենը պետք է հիշողություն ունենա: **Գենային հիշողություն** բառակապակցությունն այսօր արմատավորվել է մեր առօրյա խոսքում, օգտագործվում է գրական երկերում: Գենային հիշողություն ասելով՝ հասկանում են ընդունակությունը հիշելու այն, ինչը չի եղել անհատի կյանքի անմիջական փորձում: Սովորաբար դրանք անցյալի որոշակի տեսիլներ են, ցեղային հիշողություն, նախկին կյանքի պատկերներ և այլն: Գենային հիշողությունն անվանում են նաև նախնիների հիշողություն, ցեղի հիշողություն: Այդ հիշողությունն ավելի շատ զգացողության մակարդակում է և երբեմն շատ խորքային մակարդակից լողում է վեր և առաջ բերում ոչ հստակ պատկերներ, զգացողություններ: Գենային հիշողությունը դրսևորվում է երազներում կամ գիտակցության փոփոխված վիճակներում, քանի որ տվյալ դեպքում գիտակցությունը պաշտպանում է հոգեկանը անձի երկատման զգացումից: Այսինքն՝ գենային հիշողությունը զգացական մակարդակում է, այն մարդու հիշելու ընդունակությունն է այն ամենի, ինչը չի եղել իրական կյանքում: (*մամուլից*)

բ) Արարքի հասարակական վտանգավորությունը և քրեական հակահիրավականությունը հանցագործությունը բնութագրող անհրաժեշտ հատկանիշներն են: Ընդ որում, դրանք բնութագրում են ոչ միայն հանցագործությունն ընդհանրապես, այլ նաև առանձին, կոնկրետ հանցագործությունը: Որքան էլ վտանգավոր լինի կատարված կոնկրետ արարքը, այն չի կարող հանցագործություն համարվել, եթե նախատեսված չէ քրեական օրենսգրքով:

Հանրորեն վտանգավոր արարքների շրջանակի որոշումը և դրանց կատարման համար քրեական պատասխանատվության սահմանումը օրենսդրի բացառիկ իրավունքն են: Քրեական օրենսգրքում տրվում է հանցավոր ճանաչված հանրորեն վտանգավոր յուրաքանչյուր արարքի հասկացությունը:

Ինչպես ամեն մի երևույթի, այնպես էլ հանցագործության յուրաքանչյուր կոնկրետ տեսակի հասկացությունը տրվում է դրա հստակ, պարզ, անհրաժեշտ և բավարար հատկանիշների միջոցով:

Հանրորեն վտանգավոր արարքի՝ քրեական օրենսգրքով սահմանված հատկանիշների համակցությունը կոչվում է հանցակազմ: Փաստորեն հանցակազմը հանցագործության օրենսդրական կեցության ձևն է: Որպեսզի հանրորեն վտանգավոր արարք կատարած անձը քրեական պատասխանատվության ենթարկվի, անհրաժեշտ է հավաստել, որ նրա կատարած արարքում առկա են քրեական օրենքով նախատեսված արարքի բոլոր հատկանիշները: Միայն այդ դեպքում կարելի է ասել, որ անձը հանցանք է կատարել:

Հանցակազմը իրավաբանական հասկացություն է, որն ամրագրում է հանրորեն վտանգավոր որոշակի արարքի տիպական հատկանիշները և արտացոլում դրա հանցավոր բնույթը: Հանցակազմն իր մեջ ընդգրկում է որոշակի տեսակի վտանգավոր արարքների բազմաթիվ հատկանիշներից միայն նրանք, որոնք անհրաժեշտ և բավարար են տվյալ արարքը հանցագործություն համարելու և այլ հանցագործություններից սահմանազատելու համար: Այլ կերպ ասած՝ հանցակազմի մեջ ընդգրկվում են օբյեկտիվ իրականությունում կատարվող, որոշակի տեսակի հանրորեն վտանգավոր արարքի միայն այն հատկանիշները, որոնք ցույց են տալիս այդ արարքի էությունը, հատուկ են տվյալ տեսակի արարքի կատարման բոլոր դեպքերին ու

դրսևորումներին: (*Տ. Բարսեղյան, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք*)

3. Գեղարվեստական և հրապարակախոսական տեքստերից դո՛ւրս գրեք թևավոր խոսքեր, ասույթներ և դրանք գործածելով՝ նկարագրե՛ք Ձեզ հետաքրքրող անձին կամ երևույթը: Արդյոք դրանք նպաստեցի՞ն Ձեր խոսքի սեղմությանը:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

4. ա) Տրված են աշխարհի հինգ ամենակարճ պատմվածքներից: Արդյոք հեղինակներին հաջողվե՞լ է սեղմ խոսքով արտահայտել հարուստ բովանդակություն:

1. Վաճառվում են մանկական կոշիկներ. հագած չեն: (*Է. Հեմինգուեյ*)
2. Ինձ մեծ երևակայեցի. մեծացա, կորցրի երևակայությունս:
3. Կներես, զինվո՛ր, կոշիկները զույգով են վաճառվում:
4. Ուղևորնե՛ր, հիմա ձեզ հետ կապիտանը չի խոսում:
5. Ես նետվեցի, իսկ հետո միտքս փոխեցի:

բ) Համացանցից դուրս գրել նմանատիպ 5 պատմվածք:

_____

_____

_____

_____

_____

_____

գ) Ինքներդ հորինե՛ք այսպիսի պատմվածքներ:

_____

_____

_____

_____

_____

2.6. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կազմել տեքստ՝ պարբերությունները դասավորելով տրամաբանական հաջորդականությամբ:

Ա.

ա) Կիրառել գերազանցության հասնելու ձգտումը: Մարտահրավերը: «Ձեռնոց նետելու» ցանկությունը: Սրանք **հոգով ուժեղ մարդկանց** վրա ազդելու անսխալ միջոցներ են:

բ) Զրույցը տեղի էր ունենում օրվա վերջում՝ գիշերային հերթափոխից առաջ:

— Մի կտոր կավիճ տվեք ինձ,— ասաց գործարանատերը, ապա, շրջվելով դեպի պետը, հարցրեց,— որքա՞ն ձուլվածք է տվել այսօր ցերեկային հերթափոխը:

— Վեց,— պատասխանեց արտադրամասի պետը:

Այլևս ոչինչ չասելով՝ հատակին մի մեծ «վեց» գրեց ու հեռացավ:

գ) Գործարանում մի արտադրամասի պետ կար, որի բանվորները հերթափոխային առաջադրանքները չէին կատարում: Գործարանատերը զարմանում էր:

— Բայց ինչպե՞ս է ստացվում, որ Ձեզ նման գործարար մարդը ի վիճակի չէ հասնելու առաջադրանքների կատարմանը,— հարցրեց գործարանատերը:

—Չգիտեմ, ես համոզել եմ բանվորներին, ստիպել, խնդրել, հայհոյել եմ, սպառնացել, որ կհեռացնեմ աշխատանքից: Բայց ապարդյուն: Նրանք չեն ցանկանում աշխատել այնպես, ինչպես հարկն է:

դ) Ցերեկային հերթափոխը գալով տեսավ հատակի «յոթ»–ը: Նշանակում է՝ գիշերային հերթափոխը իրենցից լա՞վ է աշխատում:

Դե լավ, նրանք ցույց կտան գիշերային հերթափոխին: Ցերեկային հերթափոխը եռանդով գործի անցավ, իսկ երեկոյան հատակին հայտնվեց մի հպարտ «տասը»: Աշխատանքի տեմպը սկսեց աճել:

ե) Շուտով հետ մնացող արտադրամասն առաջ անցավ գործարանի բոլոր արտադրամասերից իր բարձր և արդյունավետ աշխատանքով: Սկզբո՞ւնքը: Խոսքը տանք գործարանատիրոջը:

— Որևէ գործ անել տալու լավագույն միջոցը մրցակցության խրախուսումն է: Ես նկատի չունեմ ստոր, շահադիտական մրցակցությունը. խոսքը գերազանցության հասնելու ձգտումի մասին է:

զ) Երբ գիշերային հերթափոխի բանվորները եկան ու տեսան հատակին գրված «վեց» թիվը, զարմացած հարցրին, թե դա ինչ է նշանակում: Արտադրամասի պետը պատմեց կատարվածը ու հեռացավ: Հաջորդ առավոտ գործարանատերը նորից եկավ արտադրամաս: Գիշերային հերթափոխը «վեց»–ը փոխարինել էր մեծ «յոթ»–ով: (*ըստ Դ. Քարնեգիի*)

Բ.

ա) Դա մարտահրավեր է, որը դրդում է զրուցակցին ներքին հակամարտության և կամ ձեր դեմ մարտնչելու: Դա միայն պատասխան հարված հասցնելու ցանկություն կառաջացնի: Դրանից հետո կարող եք նրա գլխին թափել Պլատոնի կամ Կանտի ողջ իմաստասիրությունը, սակայն ձեզ չի հաջողվի համոզել, քանի որ դուք նրան արդեն վիրավորել եք:

բ) Մարդկանց համոզելը դժվար է նույնիսկ ամենից բարենպաստ պայմաններում: Ուրեմն ի՞նչ կարիք կա ավելորդ դժվարություն ստեղծելու և զրուցակցին ներքին հակամարտության տրամադրելու: Եթե մտադրվել եք ինչ–որ բան ապացուցել, ապա թող այդ մասին ոչ ոք չիմանա: Արեք դա այնքան նրբորեն ու վարպետորեն, որ ոչ ոք չզգա: Մարդկանց պետք է սովորեցնել այնպես, ասես նրանց չեք սովորեցնում:

գ) Եթե որևէ մեկը սխալ է, և դուք հաստատ, այո՛, նույնիսկ հարյուր տոկոսով վստահ եք, որ նա սխալ է, միևնույնն է, չարժե միանգամից վրա տալ: Ավելի լավ չէ՞ խոսքը սկսել այսպես. «Ո՞վ կմտածեր…», «Հնարավոր է՝ սխալվում եմ, բայց…», «Եթե սխալվեմ, ինձ ուղղեք…», «Գուցե ստուգենք փաստերը…»: Աշխարհում ոչ ոք երբեք չի առարկի, եթե դուք ասեք. «Հնարավոր է՝ սխալվում եմ: Եկեք ստուգենք փաստերը»: Ի դեպ, հենց այդպես են վարվում գիտնականները:

դ) Սպիտակ տանը եղած տարիներին Թեոդոր Ռուզվելտը մի անգամ խոստովանեց, որ կյանքում ավելի լավ բան չէր ցանկանա, քան եթե ինքը հարյուր դեպքից յոթանասունհինգում իրավացի լիներ: Եթե դա առավելագույնն է, որ կարող էր հուսալ XX դարի ամենահայտնի մարդկանցից մեկը, ապա ի՞նչ կարելի է ասել մեր մասին…

…Եթե վստահ եք, որ հարյուր դեպքից հիսունհինգում իրավացի չեք, ապա կարիք կա՞ ուրիշներին անընդհատ ասելու, որ նրանք իրավացի չեն:

ե) Դուք կարող եք հայացքով, ինչերանգով կամ որևէ շարժումով մարդուն հասկացնել, որ նա իրավացի չէ, ընդ որում, սրանք խոսքից ոչ պակաս պերճախոս միջոցներ են: Իսկ եթե որոշել եք խոսքով ասել, որ նա իրավացի չէ, ապա երբեք մի՛ սկսեք «Ես Ձեզ կապացուցեմ», «Ես ավելի խելացի եմ. լսեք և անպայման կփոխեք Ձեր կարծիքը» և նման արտահայտություններով: (*ըստ Դ. Քարնեգիի*)

2. Գտնել խոսքի տրամաբանականության խախտումները և ուղղել: Ինչո՞վ է պայմանավորված խախտումը:

ա)

1. Գարեջրի և գինու գործարաններում անցկացրած բուժզննումը ցույց տվեց, որ նրանցից յուրաքանչյուր 3–րդն ունի բարձր զարկերակային ճնշում: **2.** Այդ մարդաշատ քաղաքում ես ոչ միայն

ծանոթացա իմ կյանքի ընկերոջը, այլև հաղորդակից եղա նրա դարավոր մշակույթին: **3.** Ռուսական ռազմաբազայում խնդիրներ կան, որոնք պետք է բուժել: **4.** Լավ չէ, որ մեր գիտնականների մեծ մասը գրեթե չի զբաղվում գիտությամբ և ստեպ–ստեպ է հանդես գալիս հոդվածներով: **5.** Շեքսպիրի երկերը թարգմանվել են բազում լեզուներով, որոնք ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ, սրտամոտ են շատերին:

_____

_____

_____

_____

_____

բ)

1. Հինգ տարի շարունակ ջրասույզները ուսումնասիրել են Սևանի հատակը և հանգել այն եզրակացության, որ պետք է սիրել Սևանը: **2.** Վերջին տարիներին մեծ գործ է արվել կրթական համակարգի բարելավման համար, մինչդեռ ուսուցիչները շարունակում են աշխատել հին մեթոդներով, որովհետև բարելավումը շատ դանդաղ է ընթանում: **3.** Ծիրանենու լավ մշակված փայտից դուդուկը եթե չջարդեն ոտքի տակ, ապա կարող է դիմանալ մի քանի հարյուր տարի: **4.** Հանրագիտարանի հոդվածների լեզվական կառույցը տարբերվում է գիտական այլ հոդվածներից: **5.** Ըստ անցկացված վիճակագրության՝ ՀՀ–ում ուսուցիչների մեծ մասի միջին տարիքը 45 է, իսկ երիտասարդ ուսուցիչների թիվը մոտ 9 տոկոս է:

_____

_____

_____

_____

_____

գ)

1. ԱՄՆ–ի և Հայաստանի նման փոքր երկրների հանգամանքները, հետևաբար նաև անվտանգության խնդիրները էապես տարբերվում են: **2.** Չպետք է մոռանալ, որ մենք փաստորեն Ադրբեջանի հետ դեռևս պատերազմի մեջ ենք: **3.** Համաշխարհային արդյունաբերությունը այսօր մեծ քանակությամբ քիմիական արտանետումներ է արտադրում: **4.** Եղեռնը առիթ դարձավ Սփյուռքի ձևավորման: **5.** Կլինիկան առաջարկում է հարբեցողների և այլ հիվանդությունների հիմնավոր ախտորոշում և բուժում:

_____

_____

_____

_____

_____

3. Տրված են տրամաբանական խնդիրներ: Պատասխանել դրանց և նշել, թե խնդիրներից յուրաքանչյուրը տրամաբանության որ օրենքով է կառուցված:

ա) Դուք մի ինքնաթիռի օդաչու եք, որ թռչում է Լոս Անջելեսից Երևան՝ դադար առնելով Փարիզում: Քանի՞ տարեկան է այդ ինքնաթիռի օդաչուն:

բ) Ջորջ Վաշինգթոն, Շերլոք Հոլմս, Ուիլիամ Շեքսպիր, Լյուդվիգ վան Բեթհովեն, Նապոլեոն Բոնապարտ և Ներոն: Այս ցուցակում ո՞վ է սկզբունքորեն տարբերվում մյուսներից և ինչո՞ւ:

գ) Հյուրանոցն ունի 7 հարկ: Առաջին հարկում ապրում է 4 մարդ, իսկ յուրաքանչյուր հաջորդ հարկում՝ 2–ով ավելի, քան նախորդում: Ո՞ր հարկից են ամենահաճախ վերելակ կանչում:

դ) Եթե գիշերվա 12–ին անձրև է գալիս, ապա կարելի՞ է ակնկալել, որ 72 ժամ հետո արև է լինելու:

4. Տրված ձևակերպումներում կան տրամաբանական օրենքների խախտումներ. գտնել և բացատրել դրանք:

ա) Հանցագործությունները լինում են կանխամտածված, չկանխամտածված, վտանգավոր և խմբակային:

բ) Հասարակական հարաբերությունների յուրաքանչյուր ոլորտ կարգավորվում է իրավական որոշակի նորմերով: Կան հասարակական կյանքի ոլորտներ, որոնք իրավական նորմերով չեն կարգավորվում:

գ) Եթե մարդը չափից շատ ալկոհոլ է օգտագործում, կորցնում է ինքնատիրապետումը: Տվյալ մարդը կորցրել է ինքնատիրապետումը: Նշանակում է՝ նա չարաշահել է ալկոհոլը:

դ) Զինվորը դիմում է հրամանատարին.

— Հրամանատա՛ր, կարելի՞ է մարդուն պատժել այն բանի համար, որը նա երբեք չի արել:

— Ո՛չ, երբեք:

— Այդ դեպքում խնդրում եմ ինձ չպատժել, որովհետև ես չեմ կատարել երեկվա Ձեր հրամանները: (*Հ. Հովհաննիսյան, Փաստարկում և հռետորություն*)

2.7. ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լեզվական ի՞նչ միջոցներ են պայմանավորում տրված տեքստերի և նախադասությունների արտահայտչականությունը:

ա)

Բայց աչքերում նրանք երկինք չգտան,
Ու սրտերում — արեգակներ ոսկեվառ.
Ու բզկտվեց հայացքներից անկենդան
Որբ սիրտը մեր՝ երազորեն — հոգեվար:
Ես ուզեցի երգել գովքը Աստծու,
Երգել փառքը պայծառ սիրո ու հացի.
Սիրտս լցվեց… բայց չգիտեմ, թե ինչու —
Գորշ օրերի տաղտկությունը երգեցի…
Թաղված մնաց իմ աչքերում մի անհուն,
Կապուտաչյա երջանկության առասպել.
Մի երկնային առնչության պատմություն —
Ու կարծրացավ սիրտս՝ անլույս ու անբեր:
…Չէ՞ որ կյանքում չհասկացավ ոչ ոք մեզ,—
Ու խնդացին լուսավո՛ր մեր աչքերին,
Բութ հեգնեցին մեր կարոտները հրկեզ —
Ու հեռացան: Ու ո՛չ մի լույս չբերին:
Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես,
Կյանքը դարձավ անմխիթար զառանցանք.
— Մենք կժպտանք, գո՛հ կժպտանք մեռնելիս,
Որ երազում երազեցինք ու անցանք… (ԵՉ)

բ)

Լո՛ւյս առավոտի,
Դու, որ նման ես երաժշտության,

Եկ ու ինձ փրկիր այս գիշերային անդաշնությունից,
Շաղոտ շուրթերով շշնջա նորից խոսքը հաշտության
Ու սիրտս զտիր,
Որ պղտորվել ու ելել է հունից:
Ամբողջ գիշերը
Ես նման էի մի մութ անձավի,
Ուր կասկածների քամին էր հեծում,
Կսկիծն էր զարթնել ինչ–որ մի անցած, մոռացված ցավի
Ու մոլոր հավքի հուսահատությամբ պատերս էր ծեծում:
Եվ թվում էր ինձ,
Ձայներ եմ լսում ես ինչ–որ տեղից,
Որ աղերսում են արևի գինի, մուրում սեր ու հաց…
Ես գնում էի
Արևի,
Գինու,
Հացի հետևից,
Բայց վերադառնում ունայն ու հոգնած:
Լռ՛ույս առավոտի,
Դու որ նման ես երաժշտության,
Եկ ու փարատիր այս տագնապը խուլ,
Շաղոտ շուրթերով շշնջա նորից խոսքը հաշտության
Ու դիր ճակատիս
Բարակ մատներիդ հրաշքը տխուր:
Գիտե՛ս դու,
Գիշերն իմ այս տարիքում ցավ է ու կասկած,
Եկ, արտույտի պես ինձ վրա թևիր,
Դիր ափերիս մեջ հավատն իբրև հաց,
Ու գնանք նորից
Արևի,
Գինու,
Հացի հետևից… (ՎԴ)

գ)

1. Պողոտան չի լռում. բոլորն ասում են՝ ժողովուրդը ոտքի է կանգնել. երանի՜ մեզ, որ կարողանում ենք գործից հետո մի չորս ժամով ոտքի կանգնել ու գնալ քնելու: **2.** Այս զարգացումները ապացուցեցին, որ մեր երիտասարդությունը դատապարտված է հաղթանակի: **3.** Այն տարիներին, հին ու թանկ տարիներին ջահել էինք, ազնիվ ու համարյա անաղարտ, շիտակ, շիփ–շիտակ, անկոտրում ու միասին: **4.** Թե որքան կձգվի այս վիճակը, դժվար է ասել, բայց որ մարդկանց շարքերը ձգվում են մինչև փողոցի վերջնամասը, արդեն փաստ է: **5.** Իրենք հիմա փչացնում են ձեզ, իրենց նման ձեզ դարձնում են նյութապաշտ, փողասեր ու արատավոր:

դ)

1. Տղաս տուն եկավ ուշ գիշերին: Հարցրի՝ որտե՞ղ էիր, ձայն չհանեց. ձայնը հետո էր լսվելու… ոստիկանությունում: **2.** Փոքր չափաբաժիններով ալկոհոլն անվնաս է ցանկացած քանակությամբ: **3.** Երբ հողը գյուղացուն հանձնելու փոխարեն գյուղացուն հանձնեցին հողին, հայ մարդը որոշակի հոգեփոխության, նույնիսկ հոգեխեղման ենթարկվեց: **4.** Ես իմ մանկությունից կարմիրը ջնջեցի ու ծննդավայրից պատանեկություն հասցրի կապույտը: **5.** Ավարայրը պատերազմ էր հանուն հավատի, Սարդարապատը կռիվ էր հանուն կյանքի ու ընդդեմ մահվան, և այնտեղ պարտվեց հայ ժողովրդի մահը:

2. Տեքստը ա) հարստացնել արտահայտչամիջոցներով (մակդիր, համեմատություն, չափազանցություն, հեգնանք և այլն), բ) ավելացնել սկիզբ և ավարտ, գ) վերնագրել:

ա) Շատ չարչարվեցին, փտած չոր փայտ դրեցին սալի վրա և քարով հարվածեցին: Կայծեր թռան այդ հարվածներից, բայց կրակ չստացվեց:

Հետզհետե արևը բարձրացավ, սառը ժայռերը սկսեցին գոլանալ, խաշամի վրայից եղյամը վեր կացավ: Քամիներից պաշտպանված և արևահայաց այդ լանջերին նոյեմբերյան արևոտ օրը տաք է լինում այնպես, ինչպես ամառը հյուսիսում: Տղաները իրենց զգեստները փռել էին քարերին և լուռ էին իրենց հյուծված մարմիններին նայում (*ՎԱ*):

բ) Ինչ լինում է, լինի… Ստեղծել ենք ու ստեղծող ենք, կառուցել ենք ու կառուցող ենք…, եղել ենք, կանք, կլինենք…, չենք կորչի ու չենք թողնի մեր Մասիսներն անտեր… Եվ այս ենք ասում, և ազգային զարթոնք ենք ասում, ինքնորոշման իրավունք, միացում, անկախություն, հայրենիք, հայրենասիրություն. հասկացությունների համակարգ ենք հնարել ու… Ո՛չ, մենք չենք հնարել: Մեր մեղքը չէ, որ ուժեղները կարողանում են ուժեղ լինել և իրենց ուզածն անել: Ու նորից ու նորից հայտնագործում ենք ինչ–որ ազգային բարդույթներ՝ թերարժեքություն, ընկճվածություն… (*մամուլից*)

3. Ընդգծել հականիշները, որոշել դրանց տեսակը:

Հայից… Որքան տարօրինակ, հանելուկային արարած: Որքան խաբուսիկ: Երևույթը, ոչ ինքը: Բայց և ի՞նչ է ինքը, իր նկարագիրը: Զուր աշխատանք. — որոնում ես իր ինքնությունը, գտնում, բայց և իսկույն տեսնում ես, որ դա էլ նորից երևույթ էր: Անհանգիստ դեմք ունի, չի թողնում նկարես: Իր ցեղային պատկերն էլ տարօրինակ է: Թվով գրեթե ամենափոքրն է, տառապանքով՝ ամենամեծը, ժամանակով ամենահինն է, վիճակով՝ ամենից անփոփոխը: Ամենից աննպաստը իր երկրի դիրքն է, ինքն ամենից համառ կառչեց նրան: Որքան անհույս է թվում իր ապագան, բայց և որքան հուսացող է նա: Ասենք՝ իր կյանքում երկու բան բնավ չտեսավ. մեկ՝ բախտ, մեկ էլ՝ հուսահատություն: Ինչպե՞ս ճանաչես նրան, ինչպե՞ս չափես: Իր չափը չափազանցն է. զարմանալի հավասարակշռություն, որ ծայրահեղության մեջն է:

Տեսե՞լ եք նրա բնակարանը — խլուրդի ծակուռ… բայց անցիր նրա երկիրը. — ինչ հիասքանչ վանքեր, հոյակապ աշտարակներ, գողտրիկ խաչքարեր: Հավատալ կարելի՞ է, թե ինքն է շինել այդ բոլորը: Խոսակցությունն ես լսում՝ հայհոյանքի կեսը եկեղեցի ու Աստված է: Լցրել է իր երկիրը եկեղեցիներով, տարին մի անգամ չի մտնում մեջը՝ աղոթելու: Աղոթք էլ չի անում առօրյա կյանքում. իր կրոնը երբեք չի քարոզել ուրիշներին: Եվ հավատալի բան է, որ իր պատմությունը ամենամեծ կրոնական պատերազմների պատմությունն է, և այս չաղոթող ցեղի Նարեկացու շուրթերից թռավ աղոթքի ամենաբարձր թռիչքը առ Աստված…

Տանել չի կարողանում ծես, ձև, աստիճան, քաղաքավարություն: Ռամիկ է գերազանցապես: Իր Խրիմյան Հայրիկը, ամենից շատ կաթողիկոսությունը ատեց: Դիպլոմատիայի մեջ մի բանումն է շատ հոգածու — անկեղծ լինել: Այնքան անկեղծ է և միամիտ, որ անկասկածելի խորամանկի և կեղծավորի է նմանում: Մինչդեռ իր հարևանները, այս աշխարհի բեմի վրա դեր կատարելով միայն, ցույց են տալիս, թե կացնով հարվածում են դիմացինին, հայը իսկապես կացինը իջեցնում է գլխին: «Ապա ճշմարտությունը», — մտահոգվում է նա:

Դանդալոշ է և խոնարհ՝ իր Սասունցի Դավթի նման է և անասելի ըմբոստ, հարվածող է նրա պես: (Քծնում է, ստրկանում օտարի ոտի տակ, ինչպես իր Ձենով Օհանը, բայց) երբ վրա է հասնում գերագույն վտանգը, հերոսանում է հանկարծ և ծարավում վիշապի նման: Բարի է առհասարակ, շոյիր, և կկողոպտվի, բայց և, առհասարակ, ինքն է բարեկամ քեզ, իսկ քո բարեկամությունը վանում է: Այնտեղ, ուր մի ուրիշ ցեղ ուրիշների միայն սերը կարող է վաստակել՝ հայը գտնում է հնարը ատելություն առաջ բերելու: Տաղանդ է՝ իր դեմ ատելություն ստեղծելու: Ուրիշի հաջողության մեջ նախանձոտ է ինչպես վարդապետ: Եթե գժտվեց մեկի հետ՝ ոխակալ է ինչպես ուղտ:

Ամեն հայ մի հայ ունի, որի հետ թշնամի է մինչև մահ: Սա նրա անհրաժեշտությունն է: Անկարգ է և անիշխանական թե՛ հասարակության, թե՛ պետության և թե՛ գաղափարների մեջ: Իբրև ժողովական՝ անմիաբան է, անտանելի, խռովարար:

Ուր հեղափոխություն՝ այնտեղ հայություն: Բայց իբրև «ական»՝ ծայրահեղական է: Իր կռիվը երեք ճակատի վրա էր միաժամանակ: Շահի դեմ, Սուլթանի դեմ, Ցարի դեմ: Ասենք՝ ամեն հայ մի փոքր շիրակեցի է, Դոն Քիշոտի պես: Կոտորածներից ամենազարհուրելին ինքը տեսավ և ինքն էր, որ չխրատվեց: (Իր օրիենտացիան բացակայի օրիենտացիան է: Թաթա՛րն իր մոտը՝ սպասեց ռուսին, ռո՛ւսը եկավ՝ աչքը եվրոպացուն էր: Եկա՛վ անգլիացին՝ դարձյալ ռուսին էր սպասում: Ռո՛ւսն է գալիս՝ չի ընդունում… Ուրեմն իր պետությո՛ւնն է ուզում ստեղծել, չի՛ ուզում ստեղծել, ի՞նչ իմանաս… Մի ձեռքը ճանկռտելով հիմնում է այդ պետությունը, մյուս ձեռքը ճիգ է անում հիմքից քանդելու):

Ինչո՛ւ է այսպես, ինչի՞ց է դժգոհ, ի՞նչ է կամենում… Ինչո՛ւ է այսպես անհավասար, ներհակ, մաղձոտ (անհավատալի՝ իր ստորության մեջ), անչափելի՝ իր վեհ թռիչքներում:

Երևի վրեժ ունի նա, մի վատ բան սրտի մեջ, որի համար և մեկուսանում է, որ նյութե, դավե, վնասե: Ոչ հայի ամենամեծ առաքինությունն ես ուզում — ամենաներողամիտ ցեղը աշխարհիս մեջ: Ի՞նչ եղավ իր պատմությունը — զարհուրելի ջարդեր, խոշտանգում, բնաջնջում… (Բայց ով է ամենից շատ ջանք թափում փրկելու Էնվերին ու Քեմալին): «Ջարդիր ինձ,— ասում է նա, — ահա Քո պատիժը և վրեժը»: Ինձ թվում է, թե շատ մեծ վիրավորանք կա հայի սրտի խորքում, շատ խոր թաղված… Ինձ թվում է, թե դրա համար է նա ջարդվում, ճապոնացու պես, որ երբ մեկից խորապես վիրավորվում է, կանչում իր բարեկամներին, հայտնում իր վիրավորանքը և վերցնելով դանակը՝ պատռում իր որովայնը:

Այդպես է հայը: Չի ուզում, որ իրեն դիպչեն, մոտենան, հրեն թեկուզ: Նա մեկուսի խստակյաց, բարի և ազատակյաց է: Երբ նայում են հային, ինձ թվում է, թե նրա վիրավորանքը այն արծվի վիրավորանքն է, որին ցած են բերել բարձր լեռներից: Թպրտում է, ընկնում քարի, աղբի մեջ: Կեղտոտվում ու թևերը կոտրում: Կերակուր ես մեկնում, չի ուզում: Մաղձոտ է, մեկուսի, բայց չունի գծուծ ատելություն, որ բարձր լեռներին անծանոթ զգացում է: Սա Հայկն է, որին զրկել են կյանքի միակ պայմանից՝ ազատությունից... (ԴԴ):

4. Նախորդ վարժությունից գտնել հակադրությները և որոշել, թե լեզվական ինչ միջոցներով են դրանք ձևավորվել:

5. Տարբեր աղբյուրներից դուրս գրել հայ և օտարազգի հասարակական–քաղաքական նշանավոր գործիչների (օր.՝ Գ. Նժդեհ, Ն. Մանդելա, Վ. Պուտին, Ու. Չերչիլ և այլք) խորիմաստ մտքեր, արտահայտություններ (10 — 15 օրինակ)՝ կառուցված բառախաղի, պարադոքսի, հակադրության կամ հեգնանքի հիմքի վրա:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

6. Տրված շրջասույթների իմաստներն արտահայտել մեկ բառով:

ա) Փոքրիկ կորսիկացի, սև ոսկի, ճերմակ մահ, կապույտ արյուն, Առաջին ռակետ, Ամենայն հայոց բանաստեղծ, Ծիծաղի արքա, սպիտակ խալաթավոր, Հայ երգի վարպետ, Բուրգերի երկիր, Կակաչների երկիր, երկնագույն վառելիք, Ծագող արևի երկիր, հինգերորդ անիվ, Երաժշտության մայրաքաղաք, Սև աշխարհամաս:

բ) Մամոնայի երկրպագու, Կարմիր մոլորակ, անտառի գեղեցկուհի, Թեմիսի սպասավոր, նոյյան ժամանակներից//Նոյի թվից, սպիտակ ագռավ, երկաթե լեդի//տիկին, սպիտակ ջարդ, Բաքոսի աշակերտ, առյուծի կաթ, օդային դարպասներ, չորրորդ իշխանություն, Հյուսիսային Վենետիկ, սպիտակ ոսկի:

_____

_____

_____

_____

_____

7. Տրված տեքստերում հնարավոր էր խուսափել բառերի կրկնությունից, թե՞ ոչ. հիմնավորել:

ա) Հիմնադրամի կողմից հիմնադրամին հանձնված գույքը դառնում է հիմնադրամի սեփականությունը: Հիմնադրամի սեփականության առաջացման աղբյուրներ են ոչ միայն հիմնադրամների ներդրումները, այլև այլ անձանց բարեգործական նվիրաբերումները: (*Տ. Բարսեղյան, Հայաստանի Հանրապետության...*)

բ) Ավտոմեքենան վարելու իրավունք վերապահվում է միայն վարորդական իրավունք ունեցող 18 տարին լրացած անձին: Պետավտոտեսչությունը իրավունք չունի պետհամարանիշներ տալու, եթե ավտոմեքենայի սեփականատերը վարորդական իրավունք չունի: Սեփականատերը ավտոմեքենան օգտագործելու իրավունքը նոտարական կարգով վավերացված լիազորագրով կարող է հանձնել այլ անձանց՝ պայմանով, որ նրանք ունենան վարորդական իրավունք: (*Տ. Բարսեղյան, Հայաստանի Հանրապետության...*)

գ) Խնամակալը կամ հոգաբարձուն նշանակվում է խնամակալության կամ հոգաբարձության մարմնի կողմից մեկ ամսվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ նշված մարմնին հայտնի է դարձել քաղաքացու նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու անհրաժեշտությունը: Խնամակալներ և հոգաբարձուներ կարող են նշանակվել միայն չափահաս և գործունակ քաղաքացիները: Խնամակալ և հոգաբարձու չեն

կարող նշանակվել ծնողական իրավունքից զրկված քաղաքացիները: (*Տ. Բարսեղյան, Հայաստանի Հանրապետության...*)

դ) Բազմակողմ խորհրդաժողովի ժամանակ յուրաքանչյուր պատվիրակություն պետք է սահմանված ժամկետում իր կազմի մասին հայտնի այն պետությանը, որի տարածքում կազմակերպվում է բազմակողմ խորհրդաժողովը: Ընդ որում, պատվիրակության ղեկավարի վրա ընկնում է պատվիրակության ողջ գործունեության պատասխանատվությունը: Պատվիրակության ղեկավարը պարտավոր է լավ գիտենալ բանակցությունների առարկան իր բոլոր մանրամասնություններով, լինել հմուտ, պատրաստված և իր երկրի քաղաքական ընդհանուր ուղղությունը ճիշտ պատկերացնող պաշտոնատար անձ՝ օժտված բանակցություններ վարելու համապատասխան փորձով: Ղեկավարելով իր պատվիրակությունը՝ պատվիրակության ղեկավարը պետք է միաժամանակ տեղեկացված լինի յուրաքանչյուր անդամի կարողության և որակական հատկանիշների մասին: (*ըստ Ն. Չալըմյանի*)

8. Տարբեր տեքստերից դուրս գրել թևավոր խոսքեր (ասույթներ), որոնք կազմված են՝ ա) պարադոքսի, բ) բառախաղի, գ) հակադրության հիման վրա:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

9. Ընդգծված բառերն ու կապակցությունները արտահայտել մեղմասությամբ:

1. Հարգարժան ընդդիմախոսը **չի հասկացել** մեր մոտեցումը: **2.** Գործի վարույթով զբաղվող քննիչը, որին Դուք երաշխավորել եք, **անտեղյակ է** ողջ ընթացքին: **3.** Կարծում եմ՝ Դուք այդ հարցում **սխալվում եք**: **4. Բերանդ բացելու** փոխարեն լավ կլիներ՝ ընդամենը ներողություն խնդրեիր: **5.** Երիտասարդ, Ձեր ներկայացրած նախագիծը **մերժում ենք**: **6.** Արդյոք ճիշտ է այն տեղեկությունը, որ այս գրասենյակի աշխատողները **պարապ–սարապ թրև են գալիս: 7.** Երկրում առկա տնտեսական և իրավական **վատթար վիճակը** կանխելու համար ներկայացրած առաջարկությունների այս փաթեթը **միանգամայն անընդունելի է**. այն **զուրկ է** կենսական հիմքերից ու **ընդհանրապես կապ չունի** ՀՀ իրականության հետ: **8.** Արցախ — Ադրբեջան սահմանագծում **կրակոցները չեն դադարում. կան զոհեր:**

_____

_____

_____

_____

_____

_____

10. Փոխարկել տրված նախադասությունները. բացատրել փոխարկված նախադասության նրբիմաստային տարբերությունը:

ա) Բեյրութում երիտասարդ ազգայնականների խումբը ծանր բախում է ունեցել իշխանության ներկայացուցիչների հետ:

բ) Գործարանը տալիս է բարձր որակի արտադրանք:

գ) Միջազգային հանրահայտ որոշ ընկերություններ այսօր սնանկացման եզրին են ոչ ճիշտ վարկային քաղաքականության պատճառով:

դ) Հարցաքննությունը տեղի ունեցավ հանդիպումից առաջ:

ե) Նրա հետ հնարավոր չէ անթերի աշխատել:

_____

_____

_____

_____

_____

_____

ա) Հարգարժան պարոնը իմ տանտիրուհու ամուսինն է:

բ) Ղազախստանը համաձայնագիր է ստորագրել Առևտրի համաշխարհային կազմակերպությանը անդամակցելու համար:

գ) Նա լավ է տիրապետում իր մասնագիտությանը:

դ) Շրջայցից հետո երկու երկրների վարչապետները ամփոփել են արդյունքները:

ե) Թանգարանի հիմնարկեքից հետո բլրի վրա կառուցված հարթակում տեղի ունեցավ փոքրիկ միջոցառում:

_____

_____

_____

_____

_____

ԱՄՓՈՓԻՉ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Շարադրանքում կան տարաբնույթ սխալներ. խմբագրել, բացատրել:

ա)

1. Իրանի դեմ պատժամիջոցների մեղմման հարցով նախնական համաձայնություն է ձեռք բերվել: **2.** Մեզանում չի վարվում վիճակագրություն, որը ցույց կտա, թե ներդրումների որ մասն է իրականացնում Սփյուռքը: **3.** Սրա պաշտոնական բացատրությանը կարելի է չկասկածել, կլինի նույնը. մետաղների միջազգային գները նվազել են: **4.** «Ձեր անվան շուրջ բազմաթիվ մամուլի հրապարակումնե՞ր են եղել»,— հարցրեցի գործարարին: **5.** ՌԴ–ն շատ կցանկանար հարևան երկրին նույնպես տեսնել ԵՏՄ լիակատար անդամ: **6.** Չնայած պատմեց, որ գյուղացիներից սակավաջրության մասին բողոքներ է ստացել, բայց մեզ հետ զրույցում հակառակի մեջ էր համոզում: **7.** Վարդավառի ժամանակ տոնական երգերը սովորաբար երգում է ողջ թափորը:

_____

_____

_____

_____

_____

_____

բ)

1. Նրան ուղղեցինք մի քանի հարց՝ կապված քաղաքում այդ անձի անվան հրապարակի շուրջ: **2.** Անվտանգության

աշխատակիցները նրանց հետ համատեղ փորձում էին թույլ չտալ մարդկային կուտակումներ: **3.** Այնուհետև բուհերի ռեկտորները փոխանակվեցին համալսարանների մասին բուկլետներով և հուշանվերներով: **4.** Բանկից տեղեկացանք, որ բանկոմատների հետ կապված տեխնիկական վթար է եղել, որը փորձում են շուտափույթ կերպով կարգավորել: **5.** Նշենք, որ որոշ առանձին դեպքեր, որոնց մասին դեռ կանդրադառնանք, կասկածի տակ են դնում ողջ գործընթացի օբյեկտիվությունը: **6.** Այդ հանցանքի համար որոշ երկրներ կիրառում են ցմահ մահապատիժը:

_____

_____

_____

_____

_____

_____

գ)

1. «Ռեալ»–ի դեմ դիմակայելը լուրջ խնդիր է հակառակորդի համար: **2.** Մեզ Ռուսաստանի հղված պատասխանում տարաձայնությունների մասով ակնարկ անգամ չկար: **3.** Միտքը ճիշտ արտահայտելու համար պետք է ճիշտ դասավորել բառերը նախադասության մեջ. նախ այդպես նախադասությունը ունենում է գեղեցիկ հնչողություն և ապա՝ ճիշտ արտահայտված միտք: **4.** Համեմատաբար կայուն են երշիկեղենի և մսամթերքի որոշակի տեսակների գները: **5.** Ինչպես նշվեց, նոր մեթոդը նախկինում անտեսանելի է մնացել գիտության համար: **6.** Մայրը դերձակ է, իսկ հայրը մահացել է:

_____

_____

_____

_____

_____

_____

դ)

1. Սահմանամերձ գոտում սպա է պայթել ականի վրա և ծանր վիճակով տեղափոխվել հիվանդանոց: **2.** Նրանք նախապես ծրագրավորել էին այդ արշավը: **3.** Օրենսդիրի մի շարք աշխատակիցներ ավտոմեքենա են վարում առանց ամրագոտին իրենց վրա կրելու: **4.** Յուրաքանչյուր փոխանցումից 40–50 ցենտ միջնորդավճարի պահում է իրականացնում: **5.** Բնակչության կողմից գազի իրացման ծավալները նվազում են: **6.** Դեկանի փոխտեղակալը հաստատեց, որ այդ օրը ուսանողները բացակայել են դասերից:

_____

_____

_____

ե)

1. Կխնդրեի ներկայացնեք Ձեր մոտ առկա տպավորությունները: **2.** Մեր անձնակազմը ամեն ինչ կանի մրցույթում ամենալավագույնս ներկայանալու համար: **3.** Յուրաքանչյուր պաշտոնատար անձը պետք է լրջորեն մոտենա այդ խնդրին: **4.** Ես նորից կրկնում եմ, որ այսօր մեր երգարվեստը այլ սկզբունքներով են առաջ շարժվում: **5.** Սեփականության իրավունքը իրավունքի ցանկացած համակարգում հանդիսանում է որպես կենտրոնական ինստիտուտ:

6. Սեփականության իրավունքի ծառայական դերը կայանում է նրանում, որպեսզի ամրապնդի տվյալ հասարակությունում գոյություն ունեցող սեփականության տնտեսական հարաբերությունները:

_____

_____

_____

_____

_____

_____

2. Ընդգծել այն միջոցները, որոնք պայմանավորում են տրված տեքստերի և նախադասությունների արտահայտչականությունը:

ա)

Ստալինի երկաթյա ձեռքով հսկա երկիրը դարձավ հսկա մի ոհմակատեղի՝ միշտ պատրաստ հարձակվել–հոշոտելու: Երկրի փլուզումից հետո մենք ունենք մարդ ոհմակասեր, մարդ՝ օրենքից դուրս, մարդ՝ գիշատիչի հոգեբանությամբ: Ով մեզ հետ չէ, մեր դեմ է: Ապրելակերպ–փիլիսոփայություն: Բռնապետությունը ջրի երես հանեց այն, ինչ մարդը առողջ բնազդներով ու չգրված օրենքներով թաքցնում էր հոգու մութ խցերում: Ստալին, բռնապետություն: Բռնապետություն–ստալին: Փաստորեն նա ի չիք դարձրեց պատմության վիթխարի աշխատանքը: Մարդուն: Եվ որքա՜ն շուտ հասցրինք արատավորվել: Մեկ դար անցավ: Չէ՛: Հիմա սովորել ենք (չասեմ՝ վարժվել ենք) հոգու հետ գործարք անել: Ո՞վ ենք մենք: Անկիրթ, սակայն ջերմեռանդ ուսուցանել գիտենք, անձեռնհաս, բայց ղեկավար ենք (ղեկավարել հո չգիտենք…): Վերևին՝ քծնել, ներքևին՝ ստորացնել (ստորացնել հո

չգիտենք…): Մենք սուտ արտադրող ենք, ու լեզուն մեր՝ անամոթ: Հաղթանակների ու հրճվանքների մեջ մնացինք աղքատ: Ամոթի կարմիրը խլեցինք մեր երեսից: Մարդու երեսից: Մարդուց: Վայ մարդ ասողիդ… Տիրելուց աներկյուղ ենք, տերերից վախենում ենք, մարդկային բառաչով ողջունում ենք առաջնորդներին, նսեմացնում ենք մեր մեջ նստած մարդուն, նրա էությունը: Մարդ էությունը (*ՍՍ*):

բ)

1. 2018–ի թեկնածուի մասին կխոսենք, երբ կգա ժամանակը. բոլորին էլ խորհուրդ կտամ դանդաղ շտապել: **2.** Եթե միջազգային վարկատուների մոտ մեր վարկունակության մասին դույզն–ինչ կասկած առաջանա, նրանք անմիջապես կանգ կառնեն, այդ պատճառով պետք չէ կարծել, որ մենք վարկերի նոր ձնագունդ ենք պատրաստում և խաչ ենք քաշում երկրի ապագայի վրա: **3.** Այսօր բոլորովին այլ է իրավիճակը. Ռուսաստանը շրջապատված է ՆԱՏՕ–ով, որն ընդլայնվել է մինչև բալթյան երկրները և ցուցադրում է իր մկանները: Միացյալ Նահանգները, ընդհակառակը, ուժեղ է, նրա տնտեսությունը վերածնվել է ճգնաժամից հետո, ԱՄՆ–ը առաջատար ռազմական ուժն ունի աշխարհում, բայց նրանք տառապում են առաջնորդության դեֆիցիտով, իսկ Եվրոպան կրկին պառակտված է և ի վիճակի չէ ընդհանուր արտաքին քաղաքականություն վարելու, նրա ղեկավարությունը մարմնավորում է մեկ հզոր և կայուն երկիր՝ Անգելա Մերկելի Գերմանիան: **4.** Ամեն տեսակի գլադիատորական մարտերի նկատմամբ հասարակության կարոտն անմար է և բավարարման կարիք ունի: Շատ տարիներ առաջ կրակոց եղավ նաև տեղական նշանակության մեկ այլ բդեշխի մեքենայի ուղղությամբ: Նա ողջ մնաց ու շարունակեց պաշտոնավարել՝ մտնելով Աստծո պահած զավակի դերի մեջ:

3. ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՃԵՐ

3.1. ԳԻՏԱԿԱՆ ՈՃ

1. Ընդգծել գիտական ոճին բնորոշ հատկանիշները:

Ճշգրտություն, հուզականություն, ընդհանրականություն, պատմողականություն, վերացականություն, խոսակցական միավորների առկայություն, հետևողականություն, միօրինակություն, արտահայտչականություն:

2. Գրել գիտական ոճի բառապաշարին բնորոշ 5 հատկանիշ:

_____

_____

_____

3. Նշված քերականական առանձնահատկություններից որո՞նք բնորոշ չեն գիտական ոճին. լրացնել բնորոշ հատկանիշների շարքը:

ա) Գոյական և բայ խոսքի մասերի գերակայություն:

բ) Բայի առաջին և երկրորդ դեմքերի հաճախակի գործածություն:

գ) Բայի բոլոր հինգ եղանակների համաչափ գործածություն:

դ) Ոչ նյութական խոսքի մասերի (կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն) բացակայություն:

ե) Բարդ նախադասությունների և դերբայական դարձվածներով կառույցների գործածության հաճախություն:

զ) _____

է) _____

ը) _____

թ) _____

ժ) _____

4. Գրել 5–ական համագործածական բառ, որոնք ստորև նշված ոլորտներում կարող են գործածվել նաև տերմինային նշանակությամբ (օրինակ՝ *տերև*):

ա) իրավագիտություն, **բ)** տնտեսագիտություն, **գ)** դիվանագիտություն, **դ)** բուսաբանություն, **ե)** սոցիոլոգիա, **զ)** փիլիսոփայություն, **է)** քաղաքագիտություն:

_____

_____

_____

_____

_____

_____

5. Գրել 10 տերմին, որոնք ներթափանցել են համագործածական բառաշերտ:

_____

_____

_____

6. Գրել 10 այնպիսի բառ, որոնք փոխաբերական իմաստով գործածվում են տարբեր ոլորտներում, և դրանցով կազմել բառակապակցություններ: Օրինակ՝ *ծանրություն* — թեթև ու

միջին *ծանրության* վնասվածք (մարզ., իրավբ., բժշ.), հանցանքի *ծանրություն* (իրավբ.), *ծանրության* կենտրոն (ֆիզ.) և այլն:

_____

_____

_____

7. Ընտրել գիտական ոճի մեկ տեքստ (մոտ 1 էջ) և վերաշարադրել հետևյալ ենթաոճերով՝ ա) մասնագիտական, բ) գիտաուսումնական, դ) գիտահանրամատչելի:

8. Գիտության ո՞ր ոլորտին են վերաբերում տրված տեքստերը. ընդգծել բառային և քերականական այն յուրահատկությունները, որոնք բնորոշ են այդ գիտաճյուղերին:

ա) Հնարավոր է՝ արարքը վերաորակվի մի քանի անգամ, այսինքն՝ հանցանքը կատարվի մեկ այլ օրենքի գործողության ժամանակ, հետագայում ընդունվի ավելի մեղմ օրենք, սակայն մինչև գործի քննության մինչդատական փուլի ավարտը ընդունվի նոր՝ ավելի խիստ օրենք: Այս դեպքում խոսքը միջանկյալ քրեական օրենքի կիրառման մասին է: Ըստ որոշ հեղինակների՝ միջանկյալ քրեական օրենքը կիրառելու իրավական հիմքեր չկան, քանի որ այն չի գործել ո՛չ հանցանքի կատարման պահին և ո՛չ էլ գործի քննության պահին, ուստի պետք է կիրառվի նախկին կամ նոր օրենքը՝ ելնելով այն հանգամանքից՝ նոր օրենքն ունի՞ հետադարձ ուժ, թե՞ ոչ:

բ) Վաղուց է՝ մարդկությունը օգտվում է հեռախոսից, սակայն հեռախոսով հաղորդակցվելու էթիկային ոչ բոլորն են տիրապետում: Հեռախոսային խոսակցության ընթացքում մտքերը պետք է ձևակերպել հակիրճ, անհրաժեշտ է ունենալ նաև չափի զգացողություն և ճիշտ ժամանակին եզրափակել զրույցը: Կարևոր է հիշել, որ գործընկերոջ տան հեռախոսահամարին պետք է զանգահարել

միայն լուրջ պատճառի դեպքում, ընդ որում, կարևոր չէ՝ նա Ձեր ենթակա՞ն է, թե՞ ղեկավարը: Էթիկայի կանոնները թույլ չեն տալիս զանգահարել ժամը 22–ից հետո (կարելի է զանգել խիստ անհրաժեշտության կամ նախնական պայմանավորվածության դեպքում):

գ) Կայծակը մթնոլորտային երևույթ է՝ պայմանավորված էլեկտրական կարճատև հոսանքով: Այն, որպես կանոն, դիտվում է ամպի ներսում կամ ամպի և գետնի միջև: Մթնոլորտի երկրամերձ զանգվածը, զգալիորեն տաքանալով, բարձրանում է վեր և արագ ընդարձակվելով՝ պաղում: Եթե այդ օդը բավականաչափ խոնավ է, ապա գոլորշու խտացման հետևանքով առաջանում են ջրի կաթիլներ, և գոյանում է ամպ: …Առաջանում է իոնացված գազի զիգզագաձև հաղորդիչ խողովակ՝ կայծակի անցուղի՝ լցված էլեկտրոններով և իոններով: Կայծակը սովորաբար հարվածում է տեղանքի բարձր հատվածներին:

դ) Հույները զարգացրին դիվանագիտական էթիկետը՝ ստեղծելով դեսպանական հանդիսավոր արարողակարգ: Ըստ դիցաբանության՝ դեսպանների հովանավորը Հերմեսն էր: Ի պատիվ նրա՝ դեսպանները անպայման կրում էին Հերմեսի գավազաններ, որոնց գլխիկին ամրացված էին դափնու տերևներ, թռչնի թևեր և թանկարժեք քարեր: Դափնու տերևները խորհրդանշում էին հունական դեսպանի փառքն ու պատիվը, թռչնի թևերը՝ շարժունությունը, իսկ թանկարժեք քարերը՝ խորամանկությունն ու ճարպկությունը: Դեսպաններին տրվում էին ծալվող քարտեր, որոնցում նշված էին բանակցություններ վարելու հրահանգները:

ե) Երբ մարդու բերանը փակված է ձեռքով, և բութ մատը հպված է այտին, ապա ուղեղը ենթագիտակցությունից ուղարկում է ազդանշաններ, որոնք նպատակ ունեն պահելու արտահայտվող խոսքերը: Եթե այս շարժումը (ժեստը) խոսողն օգտագործում է խոսելու ժամանակ, ապա նա ստում է: Եթե նա ձեռքով փակում է բերանը այն պահին, երբ Դուք եք խոսում, նշանակում է՝ նա

հասկացել է, որ Դուք ստում եք, և սկսում է կազմակերպել իր մտքերը: Եթե տղամարդիկ խոսելիս ուղղում են թևքաճարմանդները, ժամացույցը, գոտին, իրար են շփում ձեռքերը, փորձառու դիտողը չի խաբվի. դիմացինը ակնհայտ թաքցնում է հուզմունքն ու նյարդայնությունը:

զ) Հայ–թուրքական սահմանները որոշելիս Ռուսաստանի պատվիրակությունը առանց լուրջ դիմադրության Թուրքիային հանձնեց նրա նվաճած տարածքները: Երկար բանակցություններից հետո Թուրքիան համաձայնեց Բաթումը թողնել Վրաստանի կազմում՝ իբրև փոխհատուցում: 1921 թ. մարտի 16–ին Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև Մոսկվայում կնքվեց «Բարեկամության և եղբայրության» համաձայնագիր, որով, առանց Հայաստանի կամքը հաշվի առնելու, Թուրքիային էին անցնում Կարսի, Արդահանի, Արդվինի և Սուրմալուի շրջանները: Հայաստանին էր վերադարձվում Ալեքսանդրապոլի գավառը: Այդ պայմանագրով Նախիջևանի մարզը, ներառյալ նաև Գողթան և Շարուր գավառները, դառնում են ինքնավար տարածք՝ Խորհրդային Ադրբեջանի խնամակալության ներքո:

9. Ընդգծել իրավագիտության ոլորտին բնորոշ բառերն ու կայուն կապակցությունները:

ա) Սեփականության իրավունքի սուբյեկտ է իրավաբանական անձը: Առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները հիմնադիրների կողմից իրենց որպես ավանդներ կամ վճարներ հանձնված, ինչպես նաև այլ հիմքերով ձեռք բերված գույքի սեփականատերերն են (*Քաղ. օր. 167–րդ հոդվ. 3–րդ կետ*): Նրանք իրավասու են կանոնադրական իրավունակության շրջանակներում իրենց պատկանող գույքի նկատմամբ սեփական հայեցողությամբ կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի

տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով: (*Տ. Բարսեղյան, Հայաստանի Հանրապետության…*)

բ) Քննիչը գործի քննության ընթացքում իրավունք ունի հանձնարարություններ տալու հետաքննության մարմնին՝ առանձին քննչական գործողություններ կատարելու, օպերատիվ–հետախուզական միջոցառումներ իրականացնելու և դատավարական գործողություններ կատարելիս իրեն օժանդակելու վերաբերյալ:

Նախաքննության մարմիններն իրավասու են քննել հանցագործությունների մասին հաղորդումները, հարուցել քրեական գործ կամ մերժել գործի հարուցումը, հայտարարել հետախուզում, ապահովել դատավարության մարմինների կողմից իրենց իրավունքների իրականացումը, հետազոտել գործի հանգամանքները, ապահովել պատճառված վնասի հատուցումը: Այս խնդիրների իրականացման համար քննիչն օժտված է ընդարձակ լիազորություններով, որոնք նախատեսված են քրեադատավարական օրենսդրությամբ: (*Տ. Բարսեղյան, Հայաստանի Հանրապետության…*)

գ) Հայցի հիմքը փոխվելու դեպքերում տվյալ հայցով պաշտպանվող շահը՝ հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջը, մնում է անփոփոխ: Հայցի հիմքի փոփոխում տեղի է ունենում, երբ հայցվորն իր պահանջների հիմնավորման համար հենվում է հայցադիմումում սկզբում չմատնանշված նոր հանգամանքների վրա, փոխում է այդ հանգամանքները, լրացնում է հայցի հիմքը նոր հանգամանքներով կամ հայցի հիմքից հանում է սկզբում մատնանշված այս կամ այն իրավաբանական փաստը: Հայցի առարկան կամ հիմքը փոխելը հայցվորին հնարավորություն է տալիս իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության միջոցներից օգտվելու

ազատ, անկաշկանդ և համակողմանիորեն: (*Տ. Բարսեղյան, Հայաստանի Հանրապետության...*)

10. Գիտական ոճի որ ենթաոճին են պատկանում տրված տեքստերը. վերնագրել, յուրաքանչյուրի համար գրել 10 բանալի բառ և կազմել 5–6 հարց դրանց վերաբերյալ:

ա) Բանավեճի կազմակերպման գործընթացը բաղկացած է երեք փուլից՝ նախապատրաստում, իրականացում, քննարկում կամ եզրափակիչ փուլ: Նախապատրաստական փուլում ընտրվում է բանավեճի թեման, ստեղծվում են թիմեր, կատարվում է դերերի բաշխում, ուսումնասիրվում է գրականությունը, ձևավորվում են թեզիսներ, տեսակետներ, փաստարկներ, որոնք կազմում են ապացուցման կամ հերքման հիմնական բովանդակությունը:

Բանավեճի իրականացման փուլը միմյանց հաջորդող ելույթների, դիրքորոշումների, տեսակետների, փաստերի և հակափաստարկների բացահայտման ընթացքն է:

Եզրափակիչ փուլում ամփոփվում են արդյունքները, կազմակերպվում է քննարկում, որոշվում է, թե որքանով է հաջողվել թիմերի մասնակիցներին իրագործել իրենց առջև դրված խնդիրները: Դատավորները բանախոսների գործողությունները գնահատելիս հաշվի են առնում ելույթների, պատասխանների և հարցերի բովանդակայնությունը, տրամաբանությունը, համակարգվածությունը, ժամանակի ռացիոնալ օգտագործումը, շփման արվեստը: Փորձագետները հայտնում են բանավեճի արդյունքները՝ մեկնաբանելով արձանագրության մեջ գրանցված յուրաքանչյուր բանախոսի գնահատականը, քննարկման են հրավիրում բանավեճի ունկնդիրներին և մասնակիցներին:

Բանավեճ հիմնվում է երեք կարևոր սկզբունքների վրա, որոնք պարտադիր են բանավեճի բոլոր մասնակիցների համար: Բանավիճողները պետք է ընդունեն և իրենց գործողություններում ղեկավարվեն հետևյալ հիմնարար սկզբունքներով:

Սկզբունք առաջին՝ **հարգանք**: Բանավեճը չի վերաբերում մասնակցի անձին. չի կարելի նվաստացնել մարդուն այն բանի համար, որ նա համամիտ չէ մեկ այլ անձի կարծիքին: Բանավեճը գաղափարների բախում է, որտեղ միակ ընդունելի զենքը հիմնավորված փաստարկներն են:

Սկզբունք երկրորդ՝ **ազնվություն**: Ազնվությունը բանավեճի առանցքն է: Բանավեճի մասնակիցը պետք է լինի ազնիվ սեփական փաստարկներում, ապացուցման հիմքերի օգտագործման և հարցերի պատասխանների ժամանակ: «Լինել ազնիվ» երբեմն նշանակում է ընդունել, որ Դուք չունեք բավարար նյութեր Ձեր դիրքորոշումը հիմնավորելու համար: Երբեմն դա նշանակում է պատասխանել «Ես չգիտեմ» այն հարցին, որը վերաբերում է Ձեր դիրքորոշմանը: Երբեմն էլ ազնվությունը նշանակում է ընդունել, որ Ձեր տրամաբանական կառույցները սխալ են:

Սկզբունք երրորդ՝ **պարտվողներ չկան**: Բանավեճի առաջին և հիմնական նշանակությունը ուսուցանելն է: Ուսուցումն ավելի կարևոր է, քան հաղթանակը: Եթե անձը մասնակցում է բանավեճին միայն հաղթելու համար, ապա նա սխալ նպատակ է դրել իր առջև: (*Ն. Ջումարդյան, Մ. Շահբազյան, Ձեռնարկ բանավիճողների համար*)

բ) Վիեննայում Իսրայել Օրուն հասկացրին, որ հայերի ազատագրության գործին իրական օգնություն կարող է ցույց տալ Պետրոս Առաջինը: Օրին, հույսը կտրած Արևմուտքից, ընկերոջ՝ Մինաս վարդապետի հետ գալիս է Ռուսաստան: Ռուսական իշխանություններին ներկայանալու համար Օրին Հովհան Վիլհելմից վերցրեց հանձնարարական և այնտեղ եկավ որպես կորֆյուրստի պատվիրակ: 1701 թ. հուլիսին Օրին հասնում է Ռուսաստան և հանդիպում ռուսական պետության առաջին պաշտոնյա Գոլովինին: Վերջինս մանրամասն հետաքրքրվում է նրանց այցի նպատակով: Գոլովինը ուզում էր պարզել, թե հայերը ում օժանդակությամբ են ուզում ազատագրել իրենց երկիրը, կորֆյուրստը որքան զորք կտրամադրի, հայկական ազատագրված հողերը ում անունով են պահվելու և այլն: Իսրայել Օրին իր պատասխաններով ամբողջովին շրջադարձ է անում դեպի Ռուսաստան՝ հայտարարելով, որ հայերը ամբողջ հույսը դրել են միայն Ռուսաստանի վրա և Արևմուտքից օգնություն չեն խնդրել:

Գոլովինի հետ ունեցած զրույցների ժամանակ Իսրայել Օրին խնդրում է, որ իրեն հնարավորություն տան անձամբ տեսակցելու Պետրոս Առաջինին: Օրուն խոստացան այդ տեսակցությունը: Եվ մինչև ցարին հանդիպելը նա մշակեց Հայաստանի ազատագրության ծրագիրը: Ըստ այդ ծրագրի՝ նախատեսվում էր կազմակերպել 25–հազարանոց բանակ, որի մի մասը՝ 10 հազարը, Աստրախանից ծովով պետք է անցներ Անդրկովկաս, իսկ մյուս մասը՝ 15 հազարը, Հյուսիսային Կովկասից Դարիալի կիրճով պետք է մտներ Վրաստան, որտեղ ռուսական զորքերին պիտի միանային մի քանի տասնյակ հազար զինվորներ և շարժվեին Արևելյան Հայաստան:

Ծրագիրը ռուսական կառավարությանը ներկայացվեց դեռևս 1701 թ. հուլիսի 25–ին, իսկ արշավանքը նախատեսվում էր սկսել նույն թվականի հոկտեմբերին: Մինչդեռ 1702 թ. մարտին Օրուն նամակով տեղեկացրին, որ ցարը շվեդական պատերազմի ավարտից հետո անպայման կօգնի հայերին՝ թուրքական և

պարսկական լուծը թոթափելու համար: (*Հ. Ժամկոչյան և այլք, Հայ ժողովրդի պատմություն*)

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

գ) Հայկական իմաստուն մի ասացվածք կա. մեկին հարցնում են. «Եղբայրդ ինչպիսի՞ մարդ է»: Պատասխանում է. «Չգիտեմ, հետը սեղան չեմ նստել»:

Միտքը դժվար չէ կռահել. սեղանի, դրա բարիքների առաջ բերած անկաշկանդ, անկեղծ մթնոլորտը մարդուն ճանաչելու բավական հուսալի հիմքեր է ստեղծում:

Համենայն դեպս, եթե պատմության մատյաններն էլ չվկայեն, լեզուն անվերապահ վկայություն ունի առ այն, որ մեր նախնիներն իրենց համար **ընկեր** են ընտրել այն մարդկանց շրջանից, ում հետ հաց են կերել:

Չե՞ք հավատում: Եկեք միասին ստուգաբանենք հենց **ընկեր** բառը: Մեր բառարանները միաբերան վկայում են, որ այս բառը հետևյալ կազմությունն ունի. **ընդ «հետ»+ կեր «ուտելիք կամ ուտող»**: **Կ**–ից առաջ **դ**–ն ընկել է, ինչպես այդ տեղի է ունեցել **ընկրկել** (**ընդ+կրունկ+ել =** կրունկի վրա հետ–հետ գնալ, նահանջել) և այլ բառերում:

Ստուգաբանենք նաև ֆրանսերեն **compagnon** [կոմպանյոն], անգլերեն **companion** [քըմփենիըն] «**ընկեր**», գերմաներեն **kompanie** [քոմփանիի] «**ընկերություն**» բառերը, որոնք բոլորն էլ հանգում են ուշ լատիներենի **companio** [կոմպանիո] բառին = **com «հետ» + panis «հաց»**: Հետևաբար այս բոլոր բառերը տառացի նշանակում են **«հետը հաց ուտող»**: Ի դեպ, ռուսերեն **однокашник** բառը նույնպես նշանակում է «**հետը շիլա՝ *կաշա* ուտող**»:

Ուրեմն ի՞նչ: Ժողովուրդն ասում է. «Ասա՛ ով է ընկերդ, ասեմ՝ ով ես դու»: Լեզվաբանական տվյալներից ելնելով՝ կարող ենք մի փոքր ձևափոխել այս խոսքը. «Ասա՛ ում հետ ես հաց ուտում, ասեմ՝ ով ես դու»: (*ըստ Պ. Բեդիրյանի*)

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

դ) 1920 թ.՝ Սան Ռեմոյի համաժողովից հետո, Հայաստանի սահմանների հարցը հաջորդ անգամ քննության առարկա է դարձել 1920 թ. ապրիլի 22–ին, երբ վերստին արծարծվել է Թուրքիայի սահմանների հարցը երկու տեսանկյունից՝ հույն–թուրքական և հայ–թուրքական: Անհամեմատ բարդ է համարվել երկրորդը, քանի որ Հայաստանը «մի կողմում ունի ադրբեջանցիներին, որոնք կիսաքաղաքակիրթ են (half civilized), մյուս կողմում ունի անատոլիացիներին, իսկ մյուս կողմում՝ քրդերին»: Հատկապես

բարդագույն հարց է համարվել Էրզրումի խնդիրը, որով էլ մեծապես պայմանավորված էր հայ–թուրքական սահմանը: Քննության մասնակիցները գտել են, որ թեև պատերազմից առաջ էլ հայերը քաղաքում մեծամասնություն չեն կազմել, այսուհանդերձ այն պիտի տրվի Հայաստանին: Բերվել է մի քանի հիմնավորում: Ֆրանսիայի ներկայացուցիչ Բերթելոն իր ելույթում նշել է. «Հաշվի առնելով, որ քաղաքում եղել է զգալի հայկական համայնք, և որը ոչնչացվել է՝ այն ամբողջովին տիրելու համար, ուստի բարոյական տեսանկյունից ճիշտ է քաղաքը Հայաստանին հանձնելը»: Նա ընդգծել է քաղաքի ռազմական նշանակությունը՝ նշելով, որ եթե Էրզրում քաղաքն իր հզոր ամրություններով մնա թուրքերի ձեռքում, ապա դա ոչ միայն լուրջ վտանգ կլինի Հայաստանի համար, այլև թուրքերին հնարավորություն կտա Հայաստանը կտրելու ծովից: «Ի՞նչ պիտի անի նա [Հայաստանն] առանց ծովի» հարցը հնչեցրել է Ֆրանսիայի ներկայացուցիչը: Բրիտանական կայսրությունից լորդ Քերզոնը, պաշտպանելով ֆրանսիացի իր գործընկերոջ տեսակետը, հիշեցրել է Լոնդոնի համաժողովի՝ Հայաստանի սահմանները որոշող հատուկ հանձնախմբի տեսակետը, այն է՝ Էրզրումը պիտի տրվի Հայաստանին: Նա նաև նշել է, որ համաժողովն ընդունել է այդ առաջարկը՝ լիովին գիտակցելով բոլոր դժվարությունները, այդ թվում նաև՝ ժողովրդագրական: (*ըստ «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ» հանդեսի*)

11. Ընտրել դիվանագիտական, քաղաքագիտական և իրավագիտական մեկական տեքստ: Յուրաքանչյուրի համար գրել եզրակացություն և ամփոփում (անոտացիա):

12. Կետերով ներկայացնել գիտական շարադրանքում հղումներ տալու կարգը:

13. Գծապատկերով ներկայացնել գիտական աշխատանքի կառուցվածքը:

14. Տրված տեքստերը վերաշարադրել գիտական ոճով: Լեզվական ինչ միավորների փոփոխությամբ է պայմանավորված ոճական անցումը:

ա) Հպատակության դիմում կարող էի ներկայացնել միայն զինվորական տարիքիս, այսինքն՝ քսանմեկ տարեկանում: Իսկ ընդունելության քննություններին կարելի էր մասնակցել մինչև քսան տարեկանը: Այդ օրենքի խստությունը մեղմացնող ու մխիթարիչ մի փոքրիկ ուղղումն ինձ հանեց սարդոստայն ընկած

զոհի վիճակից. համաձայն Ֆրանսիայում գործող օրենքի՝ աքսորականը կամ գաղթականը կարող էր հավակնել գիտության այդ վկայականին, եթե ինժեների կոչումը ուղեկցվեր մի պիտակով՝ «Օտարի տիտղոս»: Նույնիսկ գիտություններն էին միավորվում՝ թեկնածուին (անհայրենիք և պատահական ողջ մնացածին) հիշեցնելու, որ նա տարաշխարհիկ ծնունդ է՝ արյան շնորհած որոշ իրավունքներով (*ԱՎ*):

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

բ) Վերջերս ծանոթացա Շոտլանդիայի՝ անկախությունից հրաժարվելու պատմությանը և հիացա նրանց մտածողությամբ: Կարճ ասած՝ Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության 307 տարվա պատմությունը 2014–ի սեպտեմբերի 18–ին կարող էր ընդհատվել Շոտլանդիայի անկախության հանրաքվեով, բայց արի ու տես, որ շոտլանդացիները որոշեցին մնալ թագավորության կազմում: Նրանք ընտրեցին «Միասին ավելի լավ է» կարգախոսը: Շոտլանդիայի հանրաքվեն մի պահ ձախողված թվաց ինձ, բայց հետո հասկացա, որ ազգային ինքնորոշման տեսանկյունից այնքան էլ վատ չէ:

Հետաքրքիրն այն է, որ ժողովրդին շոտլանդացի ազգայնակա-ները անկախության գաղափարին և հոգեբանությանը սկսել էին վարժեցնել հանրաքվեից մոտ 13 տարի առաջ: Երկրի ողջ մշակույթը աշխատում էր այդ ուղղությամբ. հաղթանա-կի ու անցյալի փառքը անընդհատ հիշեցնում էին ժողովրդին: Սակայն շոտլանդացիները, երևի թե հաշվի առնելով աշխարհի խառնիխուռն վիճակը, նաև Մեծ Բրիտանիայի ամուր թիկունքը և զիջումները, հանրաքվեի ժամանակ հրաժարվեցին անկախու-թյունից: Հրաժարվողները մոտ 55 % էին: Գուցե մեր օրերում զար-մանալի պատմություն է, բայց փաստ: Նրանք համոզված են, որ Մեծ Բրիտանիայի և Ուելսի հետ միասին իրենք ավելի ուժեղ ու անկախ են, քան յուրաքանչյուրն առանձին–առանձին: (*մամուլից*)

3.2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՈՃ: ԳՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ

1. Տրվածներից որո՞նք պաշտոնական ոճի ընդհանուր հատկանիշներից չեն. լրացնել բնորոշ առանձնահատկությունների շարքը:

ա) Որոշակի մշակված լեզվակաղապարների հաճախակի գործածություն, որը գրագրության լեզվին հաղորդում է միօրինակություն:

բ) Պաշտոնականություն, բայց ոչ հանդիսավորություն ու վերամբարձություն:

գ) Հուզական–սուբյեկտիվ վերաբերմունքի բացառում:

դ) Բառերի փոխաբերական իմաստով գործածություն:

ե) Համադրական բարդությունների և հապավումների հաճախակի գործածություն:

զ) _____

է) _____

ը) _____

թ) _____

ժ) _____

2. Գտնել անճիշտ ձևակերպումները և ուղղել:

Ա.

ա) Պաշտոնական ոճում գործում են գրական լեզվի արտասանական–ուղղախոսական կանոնը և հայերենի արդի ուղղագրությունը:

բ) Մտքի տպավորիչ ձևակերպման համար փաստաթղթերում (հաշվետվություն, տեղեկատվություն) գործածվում են լեզվական փոխաբերություններ:

գ) Պաշտոնական փաստաթղթերում հապավումներ հազվադեպ են գործածվում:

դ) Բառակազմական տեսակետից պաշտոնական գրագրության բառապաշարը բնութագրվում է բարդ բառերի հաճախակի գործածությամբ:

Բ.

ա) Պաշտոնական գրագրությունների բառապաշարը գրական–գրքային բնույթ ունի:

բ) Պաշտոնական ոճում գործածվող հնաբանությունները խոսքին հաղորդում են հնության երանգ:

գ) Պաշտոնական գրագրության մեջ, որոշ սահմանափակությամբ հանդերձ, գործածվում են նորակազմություններ և իմաստային նորաբանություններ:

դ) Պաշտոնական ոճին բնորոշ է փոխանունությունը:

Գ.

ա) Պաշտոնական խոսքում բացարձակ գերակշռություն ունեն գոյականական բառակապակցությունները:

բ) Լրիվ նախադասությունների գործածությունը պաշտոնական գրագրության մեջ պարտադիր պայման չէ:

գ) Բացականչական նախադասություններ պաշտոնական ոճում չեն գործածվում:

դ) Պաշտոնական ոճում դերբայական դարձվածների կուտակումը անխուսափելի է:

3. Գրել պաշտոնական ոճին բնորոշ բառապաշարային, ձևաբանական և շարահյուսական 5–ական հատկանիշ:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

4. Առաջին և երկրորդ շարքերից ընտրելով բառեր՝ կազմել բառակապակցություններ (նույն բառը հնարավոր է գործածել տարբեր բառակապակցությունների մեջ):

- Արդարադատություն, վարչական, իրավասություն, քաղաքական, կարգապահական, վարույթ, դատական, ուղղիչ, իրավաբանական, կանոնադրային, սեփականություն:
- Պրակտիկա, իրավունք, կապիտալ, անձ, դատարան, դաշտ, շրջան, խորհուրդ, տույժ, վարույթ, աշխատանք:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

- Դիվանագիտական, նստավայր, դեսպանընկալ, կառավարման, արարողակարգային, մուտքի, հյուպատոսական, վերբալ, միջնորդական, միջազգային, ռազմական:
- Կցորդ, կոնվենցիա, առաքելություն, անձնակազմ, հայտագիր, համակարգ, արտոնագիր, երկիր, հանդիպում, պետություն, ներկայացուցչություն:

_____

_____

_____

- Գործավարություն, հրաման, հայց, որոշում, ուղերձ, գործ, դատավճիռ, ակտ, հաշվետվություն, հարցեր, մեղադրանք, նախաձեռնություն, նիստ, դեսպան, փաստաթղթերը, խորհրդարան, բռնություն:
- Հղել, հարուցել, կազմել, ներկայացնել, կայացնել, հետ կանչել, հրավիրել, իրականացնել, արձակել, գործադրել, ձևավորել, առաջադրել, հերքել, անվավեր համարել, հանդես բերել, բավարարել, հրապարակել:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

5. Ընդգծել իրավաբանական և դիվանագիտական ենթաոճերին բնորոշ բառերը, կայուն կապակցություններն ու արտահայտությունները:

ա)

1. Ի կատարումն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ 2002 թ. հունիսից «ՀՀ պաշտոնական տեղեկագիրը» հրատարակվում է յուրաքանչյուր չորեքշաբթի: **2.** Բողոք բերած անձը պատճառաբանել է, որ Վերաքննիչ դատարանն անտեսել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15–րդ հոդվածի 2–րդ կետի 2–րդ ենթակետը: **3.** Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ օրենսդրական նման իրավակարգավորումն ինքնանպատակ չէ և բխում է արդարադատության արդյունավետության սկզբունքից: **4.** Գնորդը՝ ի դեմս Ա. Ա.–ի (ելնելով գործի վարույթի նպատակից՝ անունը չի հրապարակվում), տեսաձայնագրության միջոցով փաստում է իր տուժած լինելու հանգամանքը:

բ)

1. Դեսպանընկալ կողմը պարտավոր է իր երկրի տարածքում տրամադրել համապատասխան տարածք և անհրաժեշտ պայմաններ դեսպանության կամ հյուպատոսարանի գործունեությունը կանոնավոր կազմակերպելու համար: **2.** Ադրբեջանական «սև ցուցակը» այս անգամ անցանկալի անձ համարեց համաշխարհային հռչակ վայելող երգչուհուն: **3.** Հայաստանում Եգիպտոսի դեսպանը, հավատարմագրերը հանձնելով ՀՀ նախագահին, հույս է հայտնել, որ երկու երկրների դարավոր բարեկամությունը կշարունակվի և էլ ավելի կամրապնդվի հետագա տարիներին նույնպես: **4.** Թուրքիայի կառավարությունը, չմեկնաբանելով իր որոշումը, հետ է կանչել իր դեսպանին նստավայր երկրից:

գ)

1. Հունական կողմը պահանջում է կա՛մ պայմանագիրը ուժը կորցրած ճանաչել, կա՛մ վերանայել: **2.** Ի կատարումն որի՝

ներքոստորագրյալները, կառավարությունների կողմից պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն կոնվենցիան: **3.** Տուգանքները չվճարելու պատճառով սույն անձի անշարժ գույքը դրվել է արգելանքի տակ: **4.** Գործի քննության ընթացքում ի հայտ են գալիս գործը ծանրացնող այլ հանգամանքներ:

դ)

1. Մեղսունակ անձը, որ հանցանքը կատարելիս հոգեկան խանգարման հետևանքով չէր կարող ամբողջությամբ գիտակցել իր գործողության (անգործության) փաստացի բնույթն ու հասարակական վտանգավորությունը կամ ղեկավարել դա, ենթակա է քրեական պատասխանատվության: **2.** Ցմահ ազատազրկումը դատապարտյալին ուղղիչ հիմնարկում անազատության մեջ պահելու ձևով հասարակությունից անժամկետ մեկուսացնելն է, որը կարող է նշանակվել առանձնապես ծանր հանցագործությունների համար: **3.** Պատգամավորի անձեռնմխելիությունը կարող է բեկանվել Ազգային ժողովի կողմից: **4.** Գործը արդեն վարույթի է ընդունվել և հանձնարարվել է հատուկ քննչական խմբին: **5.** Չավարտված հանցագործություն են համարվում հանցափորձը և ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների նախապատրաստությունը:

ե)

1. Միջազգային հարաբերություններում որոշակի խնդիրներ լուծելու նպատակով ՀՀ նախագահը կարող է նշանակել հատուկ հանձնարարություններով դեսպան կամ ստեղծել հատուկ առաքելություններ: **2.** Ամերիկյան դիվանագիտական խողովակները արդեն պայթում են Մերձավոր Արևելքում: **3.** ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունն արտաքին գործերի նախարարության կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր գործունեությամբ ենթակա և հաշվետու է նրան: **4.** ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանի լիազորությունները վաղաժամկետ դադա-

ռեցվում են դեսպանընկալ պետության կողմից անցանկալի անձ (persona non grata) հայտարարվելու դեպքում:

6. Տրված հնաբանությունները գործածելով՝ կազմել.

ա) ուղերձ, **բ)** պաշտոնական նամակ, **գ)** հայտարարություն, **դ)** կոչ, **ե)** հայտագիր:

Տիարք, ի պատասխան, քանզի, առ այն, ի լրումն, հիշյալ, ձեռամբ, ի զարմանս, հույժ, հարգանոք, ի հավելումն, ի պատիվ, կարծեցյալ, սույն, ի գիտություն, հետայսու, ի հավաստումն, ըստ ամենայնի, ի շահ, հրապարակավ, ըստ արժանվույն:

7. Ընդգծված բառերը (բառաձևերը) փոխարինել համապատասխան հնաբառերով (ըստ անհրաժեշտության՝ կատարել քերականական փոփոխություններ): Ոճական ինչ տարբերություններ եք նկատում (օրինակ՝ այս փաստաթուղթը — սույն փաստաթուղթը):

ա)

1. Պատասխանելով _____ Ձեր գրությանը՝ կից ներկայացնում ենք նաև մեր առաջարկությունների փաթեթը: **2.** Մեր մարզիկները պետք է **արժանիորեն** _____ ներկայացնեն հայրենիքը: **3.** Դիվանագիտական այսօրինակ զարգացումների դեպքում կարելի է գործել նաև նրանց **հակառակ** _____: **4.** ՀՀ դեսպանությունը **կրկին** _____ իր **հարգանքների** _____ հավաստիքն է հայտնում Եգիպտոսի կառավարությանը՝ հայ զբոսաշրջիկների անվտանգ և ապահով դուրսբերման համար: **5.** Արտակարգ իրավիճակների դեպքում **վերը նշված** _____ հանգամանքները կարող են շրջանցվել:

բ)

1. Վստահեցնում եմ Ձեզ, որ նախարարությունը **հնարավոր չափով** _____ գործում է այնպես, որ հայրենիք–Սփյուռք բազմա-

կողմ հարաբերությունները էլ ավելի զարգանան ու ամրապնդվեն:
2. Այսպիսի գործառույթ իրականացնելու դեպքում Դուք պարտադիր պետք է ունենայիք **մուտքի** _____ և **ելքի** _____ մատյաններ:
3. Լրացնելով _____ զեկույցի 4–րդ կետը՝ ուզում եմ հատուկ ընդգծել հետևյալը: **4.** Հարցը պետք է լուծել երեք կողմերի կարծիքները և շահերը հաշվի առնելով միայն, **որովհետև** _____ դա է պահանջում **խնդրի** _____ առարկայի ներկա իրավիճակը:

8. Օգտվելով «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» դասագրքի «Հավելված»–ի ձևանմուշներից՝ կազմել նշված փաստաթղթերից որևէ մեկը՝ ա) արձանագրություն, բ) քաղվածք, գ) դատավճիռ, դ) տեղեկանք, ե) հրաման, զ) ոչ պաշտոնական հայտագիր, է) աշխատանքային պայմանագիր:

9. Գրել՝ ա) ինքնակենսագրություն, բ) երաշխավորագիր — բնութագիր:

10. Գրել դիմում հետևյալ խնդրանքով՝

ա) տեղափոխվել մի ֆակուլտետից մեկ այլ ֆակուլտետ,

բ) հարգելի համարել բացակայությունները,

գ) օգտվել գրադարանի հատուկ պահոցներից,

դ) թույլտվություն ստանալ քննությունը արտահերթ հանձնելու,

ե) ընդունվել աշխատանքի (նշել ցանկացած վայր):

11. Օգտվելով «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» դասագրքի «Հավելված» բաժնից՝ տրված տեքստերը ներկայացնել գրագրության որևէ ձևով: Բացատրել՝ լեզվական ինչ միջոցներով է պայմանավորված ոճական անցումը:

ա) ՀՀ կառավարության լրատվության բաժնից հայտնում են, որ 2011 թ. նոյեմբերի 29–ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին»

ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով կատարված փոփոխության արդյունքում անհատ ձեռնարկատերերի կողմից հարկային մարմին ներկայացվող տարեկան եկամուտների մասին հայտարարագրի ներկայացման ժամկետ է սահմանվել օրացուցային տարվան հաջորդող ապրիլի 15–ը:

Սակայն, ինչպես նշում է աղբյուրը, կառավարությունը հաշվի է առել այն հանգամանքը, որ նշված օրենքով կատարված փոփոխություններն ուժի մեջ են մտել 2012 թ. հունվարի 1–ից: Ստացվում է՝ հարկային մարմնի մեկնաբանությամբ՝ ապրիլի 15–ի ժամկետը կարող է վերաբերել 2012 թ. և դրան հաջորդող օրացուցային տարիների տարեկան եկամուտների մասին հայտարարագրի ներկայացման ժամկետին, իսկ 2011 թ. համար անհատ ձեռնարկատերերի կողմից հարկային մարմին ներկայացվող տարեկան եկամուտների մասին հայտարարագրի ժամկետի համար կիրառելի է մինչ փոփոխությունը սահմանված ժամկետը՝ մարտի 1–ը: Ուստի կարելի է հասկանալ, որ հայտարարագրի ներկայացման ժամկետը կարող է ձգվել մինչև 2013 թ. ապրիլի 15–ը: (*մամուլից*)

բ) ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 80–ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը ամփոփվել են մեկ գրքում և հրատարակվել անգլերենով:

ԵՊՀ հրատարակչության աջակցությամբ տպագրված գրքում տեղ են գտել 35 հեղինակների աշխատանքներ, որոնք ներառում են Հայաստանի ներկա իրավական համակարգի բոլոր ուղղությունները: Ինչպես նշում են համահեղինակները, գիրքը օգտակար կլինի այն մասնագետներին, որոնք հետաքրքրված են Հայաստանի իրավական արդի վիճակով: Հոդվածների մի մասը թարգմանել են հենց հեղինակները, իսկ գրքի ամբողջական խմբագրմանը օժանդակել են Հայաստանի ամերիկյան համալսարանի գործընկերները: Ի դեպ, ժողովածուն էլեկ-

տրոնային տարբերակով հասանելի է նաև ֆակուլտետի պաշտոնական կայքում:

Ֆակուլտետի ղեկավարության հավաստմամբ՝ գիրքը, որում ամփոփված են իրավագիտության ֆակուլտետի 3 սերնդի դասախոսների գիտական աշխատությունները, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների, դեսպանատների միջոցով կտրամադրվի նաև եվրոպական ու ամերիկյան գիտական կենտրոնների և բուհերի գրադարաններին: (*ըստ www.ysu.am կայքէջի*)

12. Գտնել փաստաթղթում առկա բացթողումները, կառուցվածքային, բովանդակային ու լեզվական սխալները և ուղղել:

ա)

ՀՀ սփյուռքի նախարար

հարգելի տիկին Հ. Հակոբյանին

ԴԻՄՈՒՄ

Հարգարժան տիկին Հակոբյան, ես՝ Արամ Գրիգորի Գրիգորյանս, գերազանցությամբ ավարտել եմ ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը և վարժ տիրապետում եմ անգլերենին, ռուսերենին:

Խնդրում եմ ինձ ընդունել աշխատանքի սփյուռքի նախարարություն: Վստահ եմ, որ ես կկարողանամ իմ ստացած մասնագիտական գիտելիքները, հմտությունները օգտագործել ըստ ամենայնի՝ ի նպաստ Ձեր նախարարության ծավալած հայանպաստ գործունեության:

Կից ներկայացնում եմ համապատասխան փաստաթղթերս և կանխավ շնորհակալ եմ:

Ա. Գրիգորյան

բ)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ԵՊՀ գիտական խորհրդի միասնական որոշումը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

ԵՊՀ բոլոր ֆակուլտետներին

1. Մինչև ս. թ. հունիսի 25–ը ԵՊՀ գիտական գծով պրոռեկտորին ներկայացնել արտասահմանյան գիտական գործուղումների համապատասխան փաստաթղթերը: Համագործակցության պայմանագիրը կամ հրավիրող կողմի հրավերը փաստող փաստաթղթի առկայությունը պարտադիր է:

2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից:

Ռեկտոր՝ _____ (ստորագրություն)

գ)

Երևան

25 Սեպտեմբերի 2014 թ.

Երևանի պետական համալսարանի

_____ ֆակուլտետի դեկան

պրն. _____

Հարգելի պրն _____

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը ս. թ. նոյեմբերի 19–21–ը կազմակերպում է ԵԱՀԿ մոդել համաժողով: ԵԱՀԿ մոդել համաժողովի նպատակն է կրթել ուսանողներին ԵԱՀԿ–ի մասին և նրանց հնարավորություն տալ փորձարկելու միջազգային դիվանագիտության մարտահրավերները: Անվտանգության ապագան անկասկած երիտասարդների ձեռքում է և կազմակերպիչների կարծիքով ԵԱՀԿ մոդելը կօգնի խթանել երիտասարդների միջև համագործակցությունն ու երկխոսությունը և հրահրել թարմ գաղափարներ և մոտեցումներ ԵԱՀԿ գործունեության վերաբերյալ:

Այս ծրագրի շրջանակում իրականացվելու է նախապատրաստական դասընթաց ս. թ. դեկտեմբերի 26–ին՝ ժ. 14.30:

Ձեր ֆակուլտետի մագիստրատուրայի 1–ին կուրսի ուսանող _____ –ը ընտրվել է մեր գրասենյակի կողմից որպես այս միջոցառման մասնակից: Շնորհակալ կլինենք, եթե կարողանա բացակայել դասերից նշված օրը միջոցառմանը մասնակցելու համար:

Հարգանքներով՝ _____

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի Մամուլի և
հանրային տեղեկատվության պատասխանատու

3.3. ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՈՃ

1. Տեքստում կան բովանդակային անճշտություններ. գտնել և ուղղել.

Խոսակցական լեզվին բնորոշ հատկանիշներ են միօրինակությունը, մշակվածությունը, հասկանալիությունը: Խոսակցական լեզուն գրական լեզվի համեմատությամբ չունի մեծ արտահայտչականություն. դրան բնորոշ տարրերը ժամանակի ընթացքում կարող են անցնել գրական լեզվին: Խոսակցական լեզվի տարրերը առավելաբար գործածվում են հրապարակախոսական ոճի ժանրերում:

2. Գրել խոսակցական ոճին բնորոշ հնչյունական, ձևաբանական և շարահյուսական 6–ական հատկանիշ:

_____

_____

_____

3. Տրվածներից որո՞նք խոսակցական ոճի ընդհանուր հատկանիշներից չեն. լրացնել բնորոշ առանձնահատկությունների շարքը:

ա) Խոսակցական լեզվում մեծ տեղ ունեն հնչերանգը և նկարագրական շարժումները (ժեստերը):

բ) Կից երկհնչյունները հաճախ վերածվում են ձայնավորների, իսկ ձայնավորները՝ երկհնչյունի:

գ) Խոսակցական լեզվում շատ տարածված են դարձվածքները, ժարգոնային բառերն ու հասարակաբանությունները:

դ) Հաճախակի են գործածվում նաև օտարաբանություններն ու նորաբանությունները:

ե) Խոսակցական ոճի բառերը հիմնականում չունեն իրենց հոմանշային տարբերակները գրական լեզվում:

զ) _____

է) _____

ը) _____

թ) _____

ժ) _____

4. Պարբերական մամուլից դուրս գրել նախադասություններ, որոնցում կան խոսակցական տարրեր: Բացատրել դրանց գործածության նպատակը:

5. Տրված նախադասություններում ընդգծել խոսակցական և ժարգոնային բառերը: Դրանք փոխարինել գրական համարժեքներով և բացատրել, թե ոճական ինչ հատկանիշներ են փոխվում:

Ա.

ա) Մոտ մեկ տարի է՝ քննարկվում է կենսաթոշակայինի հարցը, ըստ ամենայնի ներկայացվում են դրա կիրառման բոլոր խոցելի կողմերը, թերությունները, հստակ նկարագրված են նաև հակասությունները, բայց մեկ է. ոտ ու ձեռ ընկած անցկացնում են այն:

բ) Դեռ շատ ջանք եք թափելու, մինչև էս ամենը սաղացնեք օտարերկրացիների վրա:

գ) Կա՛մ մեզ ձեռ են առնում, կա՛մ օգուտ ունեն այս ամենից, թե չէ վաղուց էին զոռով քշել տները:

դ) Իսկ առաջին գործը, որ պետք է արվի, կուտակված աղբը վերին ատյանների մակարդակով պարտակելու անլուրջ փորձից հրաժարվելն է:

Բ.

ա) 34 տարի հետո միայն զգացի իսկական հայի դուխը:

բ) Մեղավորների հախից պետք է գալ, բայց ոչ Լինչի դատաստան կիրառել:

գ) Կանգ առեք, տղերք, կանգ առեք, ջահել եք, տաք եք, չեք զգում՝ մեր հողը կշիկանա, մեզ կայրի, մինչդեռ մեր հողը, տղեք ջան, քրտինքի է կարոտ, տաք ու ազնիվ ձեռքի է կարոտ:

դ) Հանցագործի անջատված տեսքը հուշում էր, որ առայժմ չունի իր հանցանքի ոչ բացատրությունը, ոչ գիտակցումը:

6. Հեռուստառադիոլեզվից դուրս գրել գովազդային տեքստեր, որոնցում գործածված են խոսակցական տարրեր. բացատրել դրանց գործառույթը:

7. Ընդգծել գրական լեզվից կատարված շեղումները և բացատրել դրանց գործառույթները: Ոճականորեն որքանո՞վ կարող է արդարացված լինել դրանց փոխարինումը գրական համարժեքներով:

ա)

Մեր բանն էլ, ախպեր, էսպես է եկած,
Մենք լեզու չունենք — ուժեղը աստված:
Մեր հին ադաթից ընկել ենք, զըրկվել,
Նորն էլ չըգիտենք թե ինչ է եկել:
Էստեղ մեզ մոտիկ թավադներ ունենք,
Ամենքս, իմացիր, տասը տեր ունենք.
Փորներն ողողած, փոխները թողած,
Կըռները կանթա՛ծ կըտերը կանգնած:

… Քննությունն արին, բըռնեցին գյադին,
Թե՛ ինչպե՞ս ուշունց կըտաս թավադին.
Բաց արին տեսան գըրած զակոնում,
Թե չոբան Զատին Սիբիր է գընում:
Մեր մեջ մի քանի ծեր մարդ ընտրեցինք
Գնացինք թավադի ոտը խնդիրքով,
Ինչ ուզեց տըվինք, հետն էլ խընդրեցինք՝
Բանը վերջացնի գեղակա՞ն կարգով (*ՀԹ*):

բ)

— Անբա՞ն, անբանի մեկը,— ասաց Ավագ հորեղբայրն ինքն իրեն,— գլխիդ մի սպիտակ…— և այստեղ Ավագ հորեղբայրը հիշեց անբանին ու շարունակեց նրա հասցեով.— տարվա էս ժամի՞ն, խուզը կիսա՞ռ, հունձը կիսա՞ռ, կարտոլը հանելո՞ւ, եկել է թե՝ ոչխարը… Ռևազը դո՞ւ ես… Բանից գործից ընկած՝ ի՞նչ ես մեզ էլ էստեղ բանից–գործից գցում… Ես եմ մորթել, ասա տեսնեմ ի՞նչ ես ասում…

…Օ՜ֆ, գնամ թոռիս թուշը պաչեմ,— ծառի տակ քթքթալով՝ խոսում էր Ավագ հորեղբայրը (*ՀՍ*):

գ)

Հայերին Լեոն է հնարել: Մինչև Լեոն, սուտ է, հայեր չեն եղել: էն է Լեոյի ժամանակներն էր, էլի, սարի պես մարդուն տվին աչքիս դեմ շուռ տվին՝ մի ձեն հանող չեղավ: Հայ կա՞ր՝ որ հայի համար ձեն հանող լիներ — կաթ, ոչխար, ես ինչ իմանամ ուրիշ ինչ: Մերանը Լեոն գցեց: Մածունը ոնց են սարքում, կաթի մեջ մերան են գցում՝ դառնում է մածուն, Լեոն հայերին էդպես է հնարել: Հովհաննես Թումանյանի «Շունն ու կատուն» — ոչ կատուն է արհեստավոր եղել, ոչ էլ շունը անգլխարկ, գլխարկը շան ինչի՞ն է պետք, այտա, Հովհաննես Թումանյանը նստել ու երեխեքի համար հնարել է: էն է մյուս սեղանին էլ Լեոն է նստել ու մեր հայերիս պատմությունը հնարել: Զարմայր նահապետ, չէ՞ մի, զահրումար նահապետ (*ՀՍ*):

8. Հայերենի բացատրական բառարաններից դուրս գրել տրված խոսակցական բառերի գրական համարժեքները և յուրաքանչյուրով կազմել նախադասություն: Բացատրել խոսակցական և գրական տարբերակների ոճական գործառույթները:

ա) Աբուռ, ադաթ, ազիզ, ալան–թալան, բշտել, բզբզալ, դալալ, դամ պահել, զավզակ, զոռով, զոռբա, թիթիզ, լոթի, լոլո, լոդր, խակ, հանաք:

_____

_____

_____

_____

_____

բ) Հավես, ձեռ քաշել, նալերը երկինք անել, նամարդություն, նամուս, նեղը դնել, շլմորել, շշկռել, շարբաթ, շշպռել, չոլ, վազ գալ, ցանցառ, քեֆ:

_____

_____

_____

_____

_____

3.4. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՈՃ

1. Գրել գեղարվեստական ոճին բնորոշ 10 հատկանիշ:

_____

_____

_____

_____

_____

2. Ընդգծել խոսակցական և բարբառային բառերը: Ոճական ի՞նչ գործառույթ ունեն դրանք գեղարվեստական խոսքում:

Երբ էս հին աշխարհը մտա ես տաղով, սազով–քամանչով,
— Ինչ պիտի անե աշխարհում էս անմիտ–անճարը, — ասին:
Սակայն երբ խալխի քեֆերին ես անուշ տաղերս ասի,
— Ամառվա մրգերի նման անուշ է քո բառը,— ասին:
Բայց խալխի անսիրտ քեֆերին ես տխուր, մենակ մնացի,
Ուզեցի թողնեմ–հեռանամ՝ հպարտ է ու չար է, ասին:
Եվ սրտիս ցավից հուսահատ ես մե թաս օղի խմեցի.
— Չարենցը ցնդած–գինեմոլ, հարբեցող–հիմար է,— ասին:
Ու ձմռան բուքերի միջին ես բոբիկ ու մերկ մնացի.
— Դուրսը ցուրտ, ձմեռ է, սակայն հոգուդ մեջ ամառ է,— ասին:
Ասի, թե՝ մարդ եք ախար դուք, չեք տեսնում մարմինս ծվատ:
— Չարենցի հոգին տաղերում աննկուն, համառ է,— ասին:
Խնդացին, քրքջացին միայն, որ այդպես մնացել եմ մերկ.
— Դարերի հիացմունքը վսեմ տաղերիդ համար է,— ասին (*ԵՉ*):

3. Եղիշե Չարենցի «Պատմության քառուղիներով» պոեմից դուրս գրել հնաբանությունները, բացատրել դրանց գործածության նպատակը:

4. Գրել շարադրություն՝ «Վաղվա Հայաստանը» խորագրով՝ գործածելով խոսքի պատկերավորման տարբեր միջոցներ:

5. 1–3 նախադասություն ավելացնելով՝ ավարտել տրված տեքստերը:

ա) Ծեր իմաստունն իր մոտ է կանչում աշակերտներին: Երբ բոլորը հավաքվում են, նա նրանց ցույց է տալիս մի սպիտակ թուղթ, որի կենտրոնում սև գույնի կետ էր նկարված:
— Ի՞նչ եք այստեղ տեսնում,— հարցնում է իմաստունը:
— Կետ,— պատասխանում է աշակերտներից մեկը:
— Հաստ, սև գույնի կետ,— լրացնում է երրորդը:
Ուսուցիչը խոնարհում է գլուխը, քայլում դեպի պատը, նստում անկյունում ու սկսում լաց լինել:
— Ինչո՞ւ ես լալիս, ուսուցի՛չ,— զարմացած հարցնում են աշակերտները:

_____

_____

_____

բ) Մի անգամ՝ պահակակետի կողքով անցնելիս, Նապոլեոնը տեսնում է, որ ժամապահը նիրհում է: Ընդունված օրենքի համաձայն՝ խեղճ զինվորին պետք է մահապատժի ենթարկեին, սակայն դեպքի վայր ժամանած հրամանատարն ապշած է մնում իր տեսածից: Բոնապարտն անձամբ է վերցնում հրացանը և պահպանում ժամապահի անվրդով քունը: Ավելի ուշ կայսրն այսպես է մեկնաբանում իր արարքը:

_____

_____

_____

գ) Երբ Ուինստոն Չերչիլը 90 տարեկան էր, Անգլիայի համալսարաններից մեկը նրան հրավիրեց ելույթի: Չերչիլը այդպիսի շատ հրավերներ էր մերժել, բայց, ի զարմանս բոլորի, այս մեկն ընդունեց:

Նշանակված օրը հազարավոր մարդիկ երկրի տարբեր քաղաքներից եկան համալսարան: Լսարանում ասեղ գցելու տեղ չկար, շատ շատերը ուղղակի կանգնել էին աստիճաններին: Մտնելով դահլիճ՝ Չերչիլը տեսավ հազարավոր մարդկանց: Դահլիճը լարված սպասում էր, բոլորը ցանկանում էին լսել ժամանակի մեծագույն մարդուն: Համալսարանի ռեկտորը Չերչիլին ներկայացրեց որպես 20–րդ դարի ամենանշանավոր մարդը, մեծ անգլիացին աշխարհում: Ըստ նրա խոսքերի՝ Չերչիլն այս ելույթով պիտի ամփոփի իր կյանքը, պիտի պատմի իր կենսափորձից:

Դահլիճը թնդաց ծափահարություններից: Չերչիլը վեր կենալով հանդարտ մոտեցավ ամբիոնին: Նա շատ լարված ու կենտրոնացած էր: Երկարատև ծափահարությունից հետո նա սկսեց իր ճառը.

_____

_____

_____

6. Ընդգծել խոսքի պատկերավորման միջոցները:

ա) Ինձ ճանաչելը մի քիչ դժվար է,
Հասկացեք էլի, ես մի քիչ բարդ եմ.
Քարի պես պինդ եմ, հողի պես փխրուն.
Ինչքան չլինի՝ դեռ մի քիչ մարդ եմ:

Ես իմ իշխանն եմ, իմ գլխի տերը,
Եվ ինձ թվում է մեծ ու անպարտ եմ,
Բայց ինչ–որ չափով և ինչ–որ մի տեղ
Դեռ թիապարտ եմ:
Մերթ ոտից գլուխ զարդեր եմ հագնում,
Մերթ այնպես անշուք, պարզ ու անզարդ եմ,

Մերթ քար ու քարափ, մերթ վայրի խոպան,
Մերթ կանաչ անտառ ու ցանած արտ եմ:
Հավիտենության լծորդն եմ անդուլ,
Բայց և կարճատև մի ակնթարթ եմ,
Փոթորիկներ են եռում հատակիս,
Թեև երեսից այսպես հանդարտ եմ:
Կյանքս ավարտելու վրա եմ արդեն,
Բայց ինքս, ավա՜ղ դեռ անավարտ եմ…
Ինձ ճանաչելը մի քիչ դժվար է
Հասկացեք էլի, ի՞նչ արած, մարդ եմ (*ՀՍ*):

բ) Ձիապանը լավ հայոց պատմություն գիտեր և սարերի միակ մարդն էր, որ զգում էր իր հայությունը: Մյուսները գիտեին, որ իրենք գառնարած, հորթարած են, ինձվոր, կթվոր, խուզվոր են, որ ցրտերի հետ իջնելու են ձորը՝ Ծմակուտ, շոգի առջևից զովի հետ դուրս են գալու սարերը: Ձիապանին այդքանը քիչ էր թվում, և նա պատմում էր հայոց պատմություն, ինչը որ լավ գիտեր: Եթե լսող էր ունենում՝ մի քիչ հնարում էլ էր, երեկվա պատմածն այսօր սուտ էր համարում, հայոց պատմության սկիզբը մեկ քշում, տանում, չորս հազար տարվա խորք էր իջեցնում, մերթ ծլեցնում էր երեկվա միջից, նայած այդօր ինչ վերաբերմունք ուներ:

— Գայլ Վահան: Եկան՝ ջարդեց. եկան՝ ջարդեց՝ նորից եկան: Եկածին ջարդեց՝ հաշվեցին, հաշվեցին: Պարսկաստանը սրբել էր, էլ Պարսկաստանում մարդ չէր մնացել: Աշխարքում հիմա էլ Պարսկաստան չկա, հայոց մեր գելը սրբել է: Գայլ Վահան, չէ՞ մի, քաջ Նազար:

Սարվորները գառնարած, տավարած մարդիկ էին, չէին վիճում, իրենցը խուզելն ու կթելն էր՝ խուզում ու կթում էին: Այդ բոլոր բաները՝ Լեոն, Զարմայրը, Քրիստոսի ծնունդից առաջը, Հովհաննես Թումանյանը՝ բոլորը ձիապանի տան կարասիներն էին, ուզածի պես դասավորում էր, և սարվորները մտածում էին, որ նա ձիապան չէր լինելու, երևաններում–բանում մի տեղ դասատու էր լինելու (*ՀՄ*):

7. Ո՞ր ոճին են պատկանում տրված տեքստերը: Դրանք գեղարվեստական ոճի տարրերով հարստացրեք:

ա) Արդարությունը հասարակագիտական հասկացակարգ է: Բնորոշում է երևույթների այնպիսի վիճակ, որը համարվում է պատշաճ և համապատասխանում մարդու, հանրույթի գոյության ու բնականոն զարգացման պահանջներին: Արդարությունը ենթադրում է բարու և չարի այնպիսի առնչություն, որի հիմքում ընկած է հասարակության շահը, և որը ճիշտ է, պատշաճ: Արդարությունը պահանջում է ներդաշնակություն ու համապատասխանություն տարբեր անհատների (դասակարգերի) իրավունքի և պարտականության, աշխատանքի և վարձատրման, հանցանքի և պատժի, ծառայության և հասարակական պարտքի միջև: Այդ հարաբերությունների անհամապատասխանությունը գնահատվում է որպես անարդարություն: Արդարության ելակետը, դրդապատճառը և նպատակը մարդն է: Արդարությունը բացարձակ չէ, այն ունի կոնկրետ պատմական որոշակիություն և հասարակության զարգացմանը զուգահեռ հարաբերականորեն փոխվում է: (*մամուլից*)

բ) Մեր օրերում հաճախ են խոսում մարդու իրավունքների մասին, իսկ ի՞նչ է այն:

Մարդու իրավունքները շատ հաճախ մարդկանց կողմից սխալ մեկնաբանություն են ստանում, խեղաթյուրվում և աղավաղվում:

Իրավունքը մի ամբողջ գիտություն է, նաև մարդուն տրված ամենամեծ պարգևներից մեկը:

Այդ իրավունքները մարդը ստանում է իր աշխարհ գալու օրից և դրանք կրում է մինչև մահ: Իրավունքը հնարավոր չէ վաճառել, տալ վարձով կամ նվիրել: Մարդ արարածն ի զորու չէ ինքնակամ կամ ստիպողաբար բաժանվել այդ իրավունքներից:

Լավ, ի վերջո, ինչ իրավունքների մասին է խոսքը: (*մամուլից*)

3.5. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ: ԳՈՎԱԶԴ

1. Տրվածներից որո՞նք են բնորոշ ԶԼՄ–ների լեզվին. լրացնել բնորոշ առանձնահատկությունների շարքը:

ա) ԶԼՄ–ների բառապաշարը հիմնականում գրական–գրքային է:

բ) Զանգվածային լրատվամիջոցները չեն օգտվում մասնագիտական բառապաշարից:

գ) ԶԼՄ–ների լեզվում հաճախ են կիրառվում կայուն կապակցություններ ու դարձվածքներ:

դ) Հասարակաբանությունների, բարբառային և ժարգոնային բառերի մուտքը ԶԼՄ բացառվում է:

ե) Փոխառություններն ու օտարաբանությունները ԶԼՄ–ներում լայն կիրառություն ունեն:

զ) _____

է) _____

ը) _____

թ) _____

ժ) _____

2. Գրել ԶԼՄ–ների լեզվին բնորոշ բառապաշարային և քերականական 5–ական հատկանիշ:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

3. Տրված տեքստերում ընդգծել ՁԼՄ–ների լեզվին բնորոշ կապապար–արտահայտությունները:

ա) Ֆրանսիական «Ouest–France» պարբերականը հայտնում է, որ Ուկրաինայի մշակույթի նախարարությունը ֆրանսիացի դերասան Ժերար Դեպարդիեի անունը ներառել է իր «սև ցուցակում»: Ինչպես գիտենք, այդ ցուցակում հայտնված մշակույթի գործիչների ոչ միայն մուտքն է արգելվում, այլև նրանց ստեղծագործությունների ներկայացնելը: Պարբերականի փոխանցմամբ՝ պաշտոնական Կիևը դերասանին փաստացի համարում է «սպառնալիք ազգային անվտանգությանը», դիվանագիտական բնորոշմամբ՝ պերսոնա նոն գրատա: Պարբերականը ենթադրում է, որ Դեպարդիեն «անցանկալի անձանց» ցուցակում է հայտնվել իր անզգույշ արտահայտությունների պատճառով: Ինչպես հայտնում է «Ouest–France»–ը, Դեպարդիեից բացի, «սև ցուցակում» հայտնվել են նաև ամերիկացի ռեժիսոր Օլիվեր Սթոունը, դերասան Սթիվեն Սիգալը, սերբ երաժիշտ ու կինոռեժիսոր Էմիր Կուստուրիցան: Ըստ լրատվական աղբյուրի՝ այդ ցուցակում, որը կիրապարակվի Ուկրաինայի մշակույթի նախարարության կայքում, ընդգրկված է արվեստի տարբեր ոլորտների մոտ 600 գործչի անուն ամբողջ աշխարհից: (*ըստ www.168.am կայքէջի*)

բ) Բիրմինգհեմի համալսարանի աշխատակիցները հայտնաբերել են Ղուրանի ամենահին օրինակներից մեկը: Այս մասին հայտնում է Interfax–ը՝ հղում տալով BBC–ին:

Ձեռագիրը պահվել է համալսարանի գրադարանում և մոտ մեկ դար աննկատ է մնացել գիտնականների կողմից: Հաղորդվում

է, որ ձեռագիր Ղուրանը Մերձավոր Արևելքին վերաբերող այլ հինավուրց փաստաթղթերի հետ բուհին է հանձնել պատմաբան, ծնունդով Իրաքից Ալֆոնս Մինգանան: Աղբյուրն ասում է, որ Բիրմինգհեմի համալսարանի ասպիրանտներից մեկը որոշել է պարզել Ղուրանի տարիքը և անցկացրել է ռադիոածխածնային փորձաքննություն: Պարզվել է, որ մահմեդականների սուրբ գրքի այդ օրինակը գրվել է 568–645 թթ., և որ ամենահետաքրքիրն է, հավանական է, որ այս գրքի հեղինակը անձամբ ծանոթ է եղել Մուհամեդի հետ:

Ըստ հրապարակման՝ հայտնաբերված հինավուրց Ղուրանի բնագիրը շատ մոտ է մերօրյա հրատարակումների տեքստին, ինչը վկայում է, որ մահմեդականների սուրբ գիրքը դարերի ընթացքում աննշան փոփոխությունների է ենթարկվել: (*մամուլից*)

4. Տրված նախադասություններում ընդգծել այն բառերն ու արտահայտությունները, որոնք ստեղծում են ոճական անհամասեռ միջավայր: Խմբավորել այդ բառերը ըստ բառապաշարի շերտերի:

ա)

1. Լրագրողի փոխանցմամբ՝ նա հանդես է եկել ընտրակեղծարարների ճանապարհը փակելու մի առաջարկով, համաձայն որի՝ նույն քարտով հնարավոր չի լինի երկրորդ անգամ քվեարկել: Եվ զարմանալի է, որ մինչ այժմ ընտրակեղծարար բարեկամները նրա գլուխը չեն կերել: Մնում է հուսալ կամ ենթադրել, որ դաբրո է տրվել առ հովանավորյալը: **2.** Հաճախ է պատահում, որ շոշափում եմ գլուխս՝ համոզվելու՝ տեղն է, ու խորհուրդ եմ տալիս նույնը բոլորին, որովհետև մարդիկ հաճախ են կորցնում իրենց գլուխը: **3.** Հրապարակավ այսպիսի հայտարարություններ անողին մնում է ասել, որ հայրենասիրությունը թունդ խմիչքի պես գլխին է տվել: **4.** Անատամ տեղեկատվություն հրամցնելը բնորոշ

է նույնիսկ զարգացած երկրներին: **5.** Ամենուրեք ներս մտնելով անարգել՝ նա կարող է ազնիվ մարդկանց անարգել:

բ)

1. Ցավալի է, բայց այդ քաղաքում վերելակ նստելը նմանվել է պատերազմ գնալուն. ճամփան բռնում են ու… չեն վերադառնում: **2.** Այդ պարտքի առյուծի բաժինը գոյացել է այստեղից–այնտեղից վարկեր կպցնելու հիվանդագին մոլուցքի պատճառով: **3.** Եվ հենց այդ ապաշնորհների ձեռամբ ու կամոք է հարցը պարբերաբար հայտնվում օրակարգում: **4.** Ասում են՝ փոքր ժամանակ հաճախ էր աթոռից ընկնում. երևի դա է պատճառը, որ տարիների ընթացքում իմունիտետ է ձեռք բերել, և երկար տարիներ է՝ նույն աթոռին է ու չի ընկնում: **5.** Մշակութային կոչված միջոցառումները մինչև հանրապետական մասշտաբով նշելը գուցե արժե մտածել՝ հանրապետքակա՞ն են դրանք, թե՞ ոչ:

5. Նախորդ վարժությունից դուրս գրել խոսքի արտահայտչականության միջոցները՝ նշելով տեսակը:

_____

_____

_____

_____

_____

_____

6. Անցկացրե՛ք հարցազրույց (որևէ թեմայով, ծավալը՝ 1–1.5 էջ) Ձեր համակուրսեցու հետ և շարադրե՛ք այն անփոփոխ: Ընդգծեք լեզվական այն միավորները, որոնք չեն համապատասխանում

հայերենի գրական նորմին: Բացատրեք՝ հարցազրույցում որքանով է արդարացված դրանց գործածությունը:

7. Ո՞ր ոճին են պատկանում տրված տեքստերը: Դրանք վերածեք հրապարակախոսական ոճի:

ա)

Հավելված ՀՀ կառավարության 2007 թվականի

դեկտեմբերի 27–ի N 1587–Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵԲԵՌՆԵՐԻ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԻ

1. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԵՐԸ

1. Հայտատուի կողմից մրցույթի մասնակցության համար ներկայացրած հայտը մուտքագրվում է նախարարության կողմից: Սույն կարգի պահանջներին համապատասխանելու դեպքում հայտը նախարարության աշխատակազմի կողմից հաշվառվում է հայտերի գրանցամատյանում՝ համաձայն N 8 ձևի:

2. Հայտնաբերված թերությունների վերաբերյալ ծանուցվելուց հետո հայտատուն կարող է վերացնել դրանք մինչև մրցույթի անցկացմանը նախորդող օրվա ժամը 12:00–ը:

3. Հայտատուն մինչև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը, իր դիմումի համաձայն, կարող է փոխել կամ հետ վերցնել ներկայացված հայտը:

4. Սույն կարգի 17–րդ կետի 5–րդ ենթակետի պահանջին համապատասխան ժամկետում թերությունները չվերացված, ինչպես նաև հայտերը ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո ներկայացված նոր հայտերի քննարկումը մերժվում է, որի մասին տեղեկացվում է հայտատուն աշխատանքային երկու օրվա ընթացքում գրավոր կամ էլեկտրոնային նամակով, որում նշված են մերժման հիմքերը:

2. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Մրցույթին կարող են մասնակցել սահմանված ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացրած այն իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, որոնք ունեն՝

ա) սեփականության և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործման իրավունքով իրենց պատկանող՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով հաշվառված ավտոբուսներ.

բ) ուղևորների երաշխավորված սպասարկման համար անհրաժեշտ թվով պահուստային ավտոբուսներ (սահմանվում է երթուղու սպասարկման համար անհրաժեշտ յուրաքանչյուր մեկից երեք ավտոբուսի դեպքում՝ մեկ պահուստային ավտոբուս):

2. Մրցույթն անցկացվում է, եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է նույնիսկ մեկ կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր:

բ)

ՔԱՂՎԱԾՔ

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի 2015 թ. մայիսի 20–ի N 8 նիստի արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ — Պրոֆ. Ալ. Մարգարյանի «Ստուգաբանական մեկնություններ» հոդվածների ժողովածուն հրատարակության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ — Պրոֆ. պրոֆ. Լ. Եզեկյանը, Յու. Ավետիսյանը, դոց. դոց. Փ. Մեյթիխանյանը, Մ. Ֆելեքյանը:

Նշվեց, որ ժողովածուում ամփոփվում են լեզվաբան Ալ. Մարգարյանի ստուգաբանական հոդվածները, որոնք տարբեր տարիներին առանձին–առանձին լույս են տեսել գիտական պարբերականներում: Հեղինակը ստուգաբանական վերլուծության է ենթարկել մոտ 130 բառ (մեծ մասը հայկական տեղանուններ են), որոշ բառերի ստուգաբանություններ կատարել է Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»–ի համապատասխան բառահոդվածների համեմատական հակադրությամբ: Ժողովածուում ընդգրկված հոդվածները ենթարկվել են խմբագրման, կատարվել են որոշակի ճշգրտումներ, և այս վիճակով այն արդեն պատրաստ է տպագրության: Նշվեց, որ ժողովածուն օգտակար կլինի լեզվաբանների, բանասիրության ֆակուլտետի ուսանողների, ստուգաբանությամբ հետաքրքրվող անձանց և ընթերցող լայն շրջանակների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ — Հաշվի առնելով հնչած կարծիքները՝ Ալ. Մարգարյանի «Ստուգաբանական մեկնություններ» հոդվածների ժողովածուն երաշխավորել տպագրության:

Ամբիոնի վարիչ՝ Յու. Ավետիսյան

Նիստի քարտուղար՝ Լ. Պապիկյան

8. Ստորև տրված է ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հարցազրույցը (սլովենական «Dnevnik» օրաթերթ): Ձեր կարծիքով՝ հարցադրումները համապատասխանում են լրագրողական էթիկային: Ընդգծե՛ք լեզվական այն միջոցները, որոնք ավելի տպավորիչ են դարձնում դիվանագետի պատասխանները: Կա՞ն այնպիսի ձևակերպումներ, որոնք Դուք կշտկեիք: Լրագրողի հարցերին տվե՛ք Ձեր պատասխանները:

Ալեշ Գաուբ.— Ձեր երկիրը Կովկասում շատ հետաքրքիր տեղ է զբաղեցնում: Ռուսաստանը Հայաստանի կարևորագույն դաշնակիցն է: Կարո՞ղ եք ներկայացնել ինձ, թե որքանով է լավ դաշնակից Ռուսաստանը Հայաստանի համար:

Էդվարդ Նալբանդյան.— Դաշնակից բառը շատ խոսուն է, այն խոր իմաստ ունի, այն ավելին է նշանակում, քան զուտ լավ, բարեկամական հարաբերություններ: Ռուսաստանի հետ մենք ունենք պատմական շատ ամուր կապեր: Մեր բարեկամությունը անցել է ժամանակի փորձությունը:

_____

_____

_____

_____

_____

Ալեշ Գաուբ.— Ես այս հարցն ուղղում եմ, քանի որ Ռուսաստանը ձեր սահմաններին ունի երկու տարբեր հակամարտություններ, չլուծված խնդիրներ… սպառազինություն է վաճառում ձեր դե ֆակտո թշնամուն՝ Ադրբեջանին: Այդ իսկ պատճառով հետաքրքիր է, թե ինչպես է այս փաստը ազդում Մոսկվայի հետ ձեր հարաբերությունների վրա:

Էդվարդ Նալբանդյան.— Մենք կնախընտրեինք, որ Ռուսաստանն Ադրբեջանին զենք չվաճառեր: Մենք չենք խնդրում

մեր բարեկամ երկրներին, գործընկերներ պետություններին Հայաստանի համար ինչ–որ բան անել՝ ընդդեմ ուրիշների: Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման առումով մեր ակնկալիքը մի կողմին աջակցելը չէ՝ ընդդեմ մյուսի, այլ միջազգային հանրության մոտեցումը ներկայացնող Մինսկի խմբի համանախագահների կողմից արտահայտված դիրքորոշմանը սատարելն է: Իսկ Ռուսաստանը երեք համանախագահներից մեկն է: Ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ համանախագահ երկրների՝ Ռուսաստանի, ԱՄՆ–ի և Ֆրանսիայի դիրքորոշումը արտահայտվել է այդ երկրների նախագահների կողմից արված հինգ հայտարարություններում:

Մեր դիրքորոշումը համահունչ է Մինսկի խմբի համանախագահների առաջարկներին: Մենք ողջունել ենք համանախագահ երկրների հինգ հայտարարությունները և նշել, որ պատրաստ ենք գնալու կարգավորման՝ նրանց կողմից առաջարկված միջազգային իրավունքի երեք սկզբունքների և տարրերի հիման վրա:

_____

_____

_____

_____

_____

Ալեշ Գաուբ.— Արդյո՞ք Ադրբեջանը ավելի ուժեղ է՝ հաշվի առնելով իր էներգետիկ ռեսուրսները՝ գազը և նավթը…

Էդվարդ Նալբանդյան.— Ադրբեջանը պարծենում է իր հզորությամբ, բայց դա մեծ պատրանք է: Մի երկիր, որը քարոզում է պատերազմ, այլ ոչ թե խաղաղություն, չի կարող հզոր լինել: Տասը տարիների ընթացքում Ադրբեջանը մեծացրել է իր ռազմական բյուջեն շուրջ 30 անգամ, սաստկացրել է իր ռազմատենչ

հռետորաբանությունը, ատելության քարոզչությունը և անդադար սպառնում է ուժ կիրառել:

Բոլոր պատերազմներից հետո կողմերը պետք է վերադառնան բանակցությունների սեղանի շուրջ, բայց առավել վատ պայմաններում: Մենք հնարավորություն ունենք շարունակելու բանակցությունները երեք համանախագահների հետ միասին: Ինչո՞ւ չօգտագործել այս հնարավորությունը՝ առաջ մղելու միջազգային հանրության առաջարկությունների հիման վրա կարգավորման գործընթացը:

_____

_____

_____

_____

_____

Ալեշ Գաուբ.— Ներկայումս ձեր ուշադրության կենտրոնում ղարաբաղյան հիմնահարցի կարգավորումն է, թե՞ Թուրքիայի հետ սահմանների վերաբացման հարցը: Վերջին անգամ կարծես թե այս գործընթացները մի փոքր համընկան, բայց հետո կարծես հայտնվեցին փակուղու մեջ:

Էդվարդ Նալբանդյան.— Թուրքիայի հետ բանակցություններ սկսելը մեր նախագահի նախաձեռնությունն էր՝ ուղղված առանց որևէ նախապայմանի հարաբերությունների կարգավորմանը: Մինչ դա մեր հարաբերությունները փակուղու մեջ էին: Մեր նախագահը հրավիրեց Թուրքիայի նախագահ Գյուլին՝ Հայաստանում ներկա գտնվելու ֆուտբոլային խաղին: Այս նախաձեռնությունը հայտնի դարձավ որպես «Ֆուտբոլային դիվանագիտություն»: Մենք վարում էինք շատ ինտենսիվ և դժվար բանակցություններ: 2009 թ. հոկտեմբերին Ցյուրիխում մենք ստորագրեցինք երկու արձանագրություններ: Սակայն Թուրքիան պատրաստ չեղավ՝

դրանք վավերացնելու և կյանքի կոչելու: Թուրքիան խախտեց pacta sunt servanda սկզբունքը: Այդ է պատճառը, որ միջազգային հանրությունը, աշխարհի շատ երկրներ ասում են, որ գնդակը գտնվում է Թուրքիայի դաշտում:

Թուրքիան վերադարձավ նախապայմանների լեզվին՝ փորձելով կապակցել ղարաբաղյան հիմնահարցի հանգուցալուծումը Հայաստան — Թուրքիա հարաբերությունների կարգավորման հետ: Բազմաթիվ երկրներ ընդգծում էին, որ ցանկացած փորձ՝ կապակցելու այս երկու գործընթացները, կվնասի երկուսին էլ: Թուրքական կողմի հին նախապայմաններից մեկը, որը վերակենդանացվեց Ցյուրիխից հետո, վերաբերում էր Հայոց ցեղասպանության ճանաչմանը: Բայց Հայաստանը անվերապահորեն հայտարարել և հաստատել էր՝ մենք երբեք հարցականի տակ չենք դնի Հայոց ցեղասպանության փաստը և նրա միջազգային ճանաչման ու դատապարտման կարևորությունը:

_____

_____

_____

_____

_____

Ալեշ Գաուբ. — Վերջին հարցը. Ռուսաստանը, որպես Թուրքիայի բարեկամ, կարո՞ղ է այս երկխոսությունը կրկին տեղափոխել նախորդ փուլ:

Էդվարդ Նալբանդյան. — Առաջին հերթին Թուրքիայի կառավարությունը պետք է Թուրքիայի ժողովրդի բարեկամը լինի՝ գործի ի շահ իր ժողովրդի: Արդյո՞ք կարծում եք, թե Հայաստան — Թուրքիա հարաբերությունների կարգավորումը ավելի շատ է բխում այլ պետությունների շահերից, քան Թուրքիայի և Հայաստանի:

Իհարկե, այդ կարգավորումը համապատասխանում է թե՛ Հայաստանի, թե՛ Թուրքիայի, թե՛ տարածաշրջանի շահերին:

Բայց, ցավոք, Թուրքիան քաջություն և իմաստություն չունեցավ՝ վավերացնելու և կյանքի կոչելու համաձայնեցված և ստորագրված արձանագրությունները: Այսինքն՝ սա այն դեպքը չէ, երբ որևէ մեկը պետք է ինչ–որ դերակատարում ունենա՝ առաջ մղելու Հայաստան — Թուրքիա հարաբերությունների կարգավորումը: Առաջին հերթին Թուրքիան պետք է վերլուծի, թե ինչն է սխալ արել: Դեռ այն ժամանակ ես զգուշացնում էի, որ Թուրքիան իր այս մոտեցմամբ իր հռչակած «զրո խնդիր հարևանների հետ» քաղաքականությունը կվերածի «զրո հարևաններ առանց խնդիրների»: Այսօր բոլորը համամիտ են այս տեսակետին: (*մամուլից*)

_____

_____

_____

_____

_____

9. ԶԼՄ–ներից դուրս գրել գովազդային տեքստերի օրինակներ, որոնցում առկա են լեզվական տարաբնույթ սխալներ, և ուղղել:

_____

_____

_____

_____

_____

_____

10. ԶԼՄ–ներից դուրս գրել գովազդային տեքստեր, ընդգծել լեզվական այն միջոցները, որոնք, ըստ Ձեզ, կարող են ակտիվ ներգործություն ունենալ լսարանի վրա:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

11. Ընդգծել դիպվածային բառերն ու օտարաբանությունները: Ինչ գործառույթ են կատարում դրանք գովազդներում. արդարացված գործածություններ են, թե՞ ոչ:

1. Ֆուտբոլվենք դեպի Բրազիլիա կոկա–կոլայի հետ միասին: **2.** Վայելի՛ր խաղը, զգա՛ համը: **3.** «AMERIA» բանկ. երեք տարվա ընթացքում ակտիվների աճ ավելի քան 5 անգամ, ...ամենամեծ կորպորատիվ վարկային պորտֆելը ՀՀ բանկային համակարգում...: **4.** Քաղցած՝ ես. մի՛ հապաղիր, սնիկերսի՛ր: **5.** Խաշկերույթը «Հավանա»–ում սկսված է: **6.** Մեր բաժանորդներից շատերը ինտերնետից օգտվելու համար տարբեր սարքեր են օգտագործում, օրինակ՝ համակարգիչ, նեթբուք կամ պլանշետ: **7.** Ձեր նոր «Orange» համարից հավաքե՛ք աստղանիշ... SMS–ով կստանաք ակտիվացման այն կոդը, որը պետք է հավաքեք Ձեր ոչ «Orange» համարից: **8.** «Արմենո». հայկական կոշիկ, իտալական

որակ: **9.** Վաճառվում է «Nissan Teana»: Գույնը՝ արծաթագույն մետալիկ, սրահի գույնը՝ սև, ղեկը՝ աջ, անվտանգության բարձիկներ, կոնդիցիոներ, կլիմատ–կոնտրոլ, հիդրավլիկ ղեկ, պանորամային լյուկ, էլեկտրակառավարվող ապակիներ, կասետային մագնիտոֆոն:

12. Բերել գովազդային տեքստերի օրինակներ, որոնցում գործածված են խոսակցական տարրեր: Որքանո՞վ են այդ գործածությունները պատճառաբանված:

13. Կազմել տեքստեր՝ գովազդելու համար՝ ա) սկավառակի վարձույթի սրահ, բ) իրավաբանական գրասենյակ, դ) ուսուցման կենտրոն (ծավալը՝ 15–20 բառ):

14. Կազմել հայտարարություններ (ծավալը՝ 20–25 բառ)՝ գովազդելու համար՝ ա) զբոսաշրջային, բ) աշխատանքի տեղավորման գործակալություններ:

ԱՄՓՈՓԻՉ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Յուրաքանչյուր բնորոշման դիմաց գրել, թե գործառական որ ոճին է համապատասխանում:

ա) Բացարձակ գերակշռություն ունեն գոյականական բառակապակցությունները: _____

բ) Աչքի է ընկնում պատկերավորման և արտահայտչական միջոցների առատ գործածությամբ: _____

գ) Բնորոշ են պատճառահետևանքային հարաբերություն արտահայտող բարդ նախադասությունները: _____

դ) Լեզուն պարզ է, մատչելի և հագեցած է ներգործող լեզվատարրերի գործածությամբ: _____

ե) Լրիվ նախադասությունների գործածությունը պարտադիր պայման չէ: _____

զ) Գերակշռում են բառ–նախադասությունները: _____

է) Հիմնական գործառույթները երկուսն են՝ հաղորդում և ներգործում: _____

ը) Դերբայական դարձվածների կուտակումը անխուսափելի է: _____

թ) Տերմինները կազմում են այս ոճի բառապաշարի 35–40 տոկոսը: _____

ժ) Հաճախադեպ են ուղղախոսական սխալները: _____

ի) Բառապաշարի բոլոր շերտերը գործածական են: _____

2. Գործառական ո՞ր ոճերով են շարադրված տրված հատվածները: Առանձնացնել պարբերությունները և ընդգծել

յուրաքանչյուր ոճին բնորոշ բառերն ու բառակապակցությունները:

Օպերատիվ կառավարման իրավունքը սահմանափակ իրային իրավունքի ինքնուրույն տարատեսակ է: Այդ իրավունքի սուբյեկտն իրավասու է սեփականատիրոջ կողմից իրեն ամրացված գույքը տիրապետել, օգտագործել և տնօրինել օրենքով որոշված շրջանակներում՝ իր գործունեության նպատակներին և սեփականատիրոջ հանձնարարականներին համապատասխան: Դեսպանի և դիվանագետների գործնական հանդիպումներն ու զրույցները դեսպանընկալ երկրի բարձրաստիճան պաշտոնյաների և հասարակական–քաղաքական գործիչների հետ հնարավորություն են տալիս հարուստ տեղեկություն ունենալ և ճիշտ պատկերացում կազմել ընդունող երկրի ներքին և արտաքին քաղաքականության մասին: Օրային արբանյակները հարմար են ռադիոհեռուստահաղորդումները վերահաղորդելու համար: Իրարից հավասարապես հեռու պտտվող օրային երեք արբանյակների օգնությամբ կարելի է Երկրի վրա գտնվող մեկ ռադիոկայանի հաղորդումներով սպասարկել ամբողջ երկրագունդը: Պատվիրակությունների կազմում մեծ աշխատանքներ են տանում նաև քարտուղարները: Քարտուղարն այն պաշտոնատար անձն է, որը մասնակցություն է ունեցել բանակցությունների նախապատրաստական աշխատանքներին: Քարտուղար կարող է լինել արտաքին գործերի նախարարության աշխատակիցը, որն ունի բավականին փորձ և հմտություն խորհրդակցությունների աշխատանքների կազմակերպման գործում: Վճիռների փոխադարձ պարտադիրությունը հետևանք է նաև այն բանի, որ իրավաբանական միևնույն փաստը հաճախ կարող է միաժամանակ առաջացնել նյութաիրավական տարբեր հետևանքներ, տարբեր իրավահարաբերություններ, որոնք դատական քննության առարկա կարող են դառնալ տարբեր ժամանակներում, տարբեր գործերով, տարբեր դատական մարմիններում, և նույն փաստն անընդհատ չհաստատելու համար առաջին գործով կայացված

վճռով հաստատված փաստը պարտադիր է համարվում նաև մյուս գործերի համար: Քաղքենիական բոլոր առաքինություն-ները հուսալի վահան են խաղաղ ընթացող առօրյա պահանջների հանդեպ. զգուշավորություն, ջանասիրություն, ողջախոհություն: Այս նույն հատկանիշներն անօգնական ու անհարկավոր են դառնում, հալվում, անէանում են այն մի վայրկյանի մեջ, որը բացահայտվում է միայն հանճարի առաջ և նրա մեջ է որոնում իր մարմնացումը: Արգահատանքով նա հեռու է վանում փոքրոգի մարդուն և միայն անվեհերին է բարձրացնում երկինք իր հրեղեն աջով ու նրան հերոսների կաճառը դասում:

3. Տրված նախադասությունները խմբավորել ըստ գործառական ոճերի:

ա) Մարզպանական Հայաստանը՝ որպես վարչական միավոր, ենթարկվել էր ներքին վարչական բաժանումների, որոնցից յուրաքանչյուրն առանձին ռազմավարչական միավոր էր և ուներ իր առանձին զորքը:

բ) Խաչքարը՝ իբրև հայ մշակույթի ինքնատիպ արտահայտություն, իր կատարելության բարձունքին հասավ՝ սկսած յոթերորդ դարից:

գ) Գորշ և սպիտակ արջերը ցեղակիցներ են, թեև արտաքինով բավականին տարբերվում են:

դ) Դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեության մեջ կարևոր են շաբաթը մեկ անգամ ներկայացուցչության ղեկավարի կամ խորհրդականի կողմից դիվանագիտական անձնակազմի անդամների համար կազմակերպվող խորհրդակցությունները, որոնց ժամանակ քննարկվում են օպերատիվ լուծում պահանջող հրատապ հարցեր, ինչպես նաև հավատարմագրող երկրից ստացված ցուցումներ, ընթացիկ ծրագրեր և այլն:

ե) Իր ժողովրդի հետագա հաջողությունը Թումանյանի հեքիաթները վերապրելուց է կախված: …Հայկական ժամանակը քարացել է երեք հզոր հեքիաթի մեջ. «Ձախորդ Փանոսը» հայի անցյալն է, հայի բախտը, որ չի բերել, «Քաջ Նազարը»՝ ներկան, հայոց երազն ու երազանքը, իսկ «Կիկոսի մահը»՝ վախն ապագայի նկատմամբ:

զ) Գրավոր ապացույցները պահվում են գործի նյութերում մինչև վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, որպեսզի անհրաժեշտության դեպքում վերաքննիչ դատարանը կարողանա վճռի օրինականությունն ու հիմնավորվածությունն ստուգել այն ապացույցների հիման վրա, որոնք եղել են առաջին ատյանի դատարանի տրամադրության տակ:

է) Երկիրը մերկ է, քարքարոտ, իսկ լեռները՝ անտառազուրկ, բայց գարնանը նրանք էլ են բուրում խունկով և ուրցով, իսկ լեռնագոգերում՝ խստահայաց նոճիների մեջ, ծաղկում է դառնահամ դափնեվարդը՝ մահվան մտքեր տարածելով շուրջբոլորը:

ը) Բամբակենին շատ է սիրում ջերմություն, արև, արգավանդ հող և խոնավություն, և սովորաբար այն աճեցնում են արհեստական ոռոգմամբ:

թ) Բնակավայրերն արտաքին վտանգից զերծ պահելու և ճանապարհները հսկողության տակ առնելու նպատակով հզոր պարսպաշղթաների կառուցման սկզբունքը Հայաստանում սկիզբ է առնում վաղ բրոնզի դարում, սակայն վերջնականապես ձևավորվում և լայն կիրառում է ստանում ուշ բրոնզի դարում՝ հիմք դնելով հայ մշակույթին խիստ բնորոշ «կիկլոպյան» կոչվող ամրոցների կամ բերդշեների մշակույթին:

4. Որոշել տեքստերի գործառական պատկանելությունը, ցույց տալ դրա բառապաշարային, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները:

ա) ՀՀ ԱԳ նախարար Էդ. Նալբանդյանն այսօր Բրյուսելում մասնակցել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 125–րդ նստաշրջանին, որին ներկա են եղել ԵՄ գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդը, ԵՄԽՎ նախագահ Անն Բրասյորը, ԵՄ մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մյուժնիկսը, ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Լամբերտո Զանիերը, Եվրոպայի խորհրդի 36 անդամ երկրների արտաքին գործերի նախարարներ և այլ անդամ պետությունների բարձրաստիճան պատվիրակություններ:

բ) Ելույթ ունենալով նստաշրջանում՝ նախարար Նալբանդյանը շնորհակալություն է հայտնել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին Եվրոպայում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ երկրորդ զեկույցի համար և նշել, որ Հայաստանը համակարծիք է զեկույցում տրված գնահատականին առ այն, որ մարդու իրավունքների պաշտպանությունը, ժողովրդավարական հաստատությունների և իրավական պետության ամրապնդումը կարող են էլ ավելի նպաստել Եվրոպայում ժողովրդավարական անվտանգության արմատավորմանը:

գ) Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող միջազգային բազմաթիվ կազմակերպություններ, այդ թվում՝ Եվրոպայի խորհուրդը, ահազանգել են հայերի հանդեպ ատելություն սերմանող այդ քաղաքականության մասին: Աղբյուրը նշում է, որ կազմվել է 58 կետից կազմված փաստաթուղթ, որում հանգամանորեն ներկայացվում են այդ քաղաքականության ապացույցները: Ըստ հանձնաժողովի անդամների՝ դրանք անառարկելի փաստեր են: «Հերքել դրանք, նշանակում է ժխտել ներկան»,— այսպիսի բնորոշմամբ է հանդես եկել ԵՄ անդամներից մեկը:

4. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ: ԲԱՆԱՎԵՃԻ ԱՐՎԵՍՏ

1. Ո՞րն է հրապարակային խոսքի հայրենիքը:

2. Առաջին շարքում տրված են ճարտասանական խոսքի սեռերը: Երկրորդ շարքից ընտրել յուրաքանչյուր սեռին համապատասխան ելույթի տեսակը:

ա) Ակադեմիական, դատական, սոցիալ–քաղաքական, սոցիալ–կենցաղային, հոգևոր:

բ) Բուհական դասախոսություն, խոսք (քարոզ), քարոզչական խոսք, ընդունելության խոսք, քաղաքական տեսություն, դամբանական, փաստաբանական (պաշտպանական) խոսք, դիվանագիտական խոսք, գիտական զեկուցում, ռազմահայրենասիրական խոսք, բաժակաճառ, գիտահանրամատչելի դասախոսություն, դատախազական (մեղադրական) խոսք, գիտական հաղորդումներ:

_____

_____

_____

_____

_____

_____

3. Որո՞նք են հրապարակային խոսքի հիմնական մասերը (համառոտ բնութագրել):

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

4. Գրել հրապարակային ելույթի նախապատրաստվելու կանոնները:

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____

5. Կարդալ Չ. Չապլինի ելույթը իր 70–ամյակի առիթով: Նշել հրապարակային խոսքին բնորոշ հատկանիշները և ընդգծել

լեզվական այն միջոցները, որոնք խոսքը դարձնում են տպավորիչ:

Երբ ես սկսեցի ինձ սիրել, հասկացա, որ ցավն ու տառապանքը նախազգուշացնում են, որ ես ապրում եմ իմ ճշմարտությանն ու բնույթին հակառակ: Այսօր ես գիտեմ, որ դա կոչվում է Ազնվություն:

Երբ ես սկսեցի սիրել ինձ, ես հասկացա, թե որքան կարող եմ վնասել մարդուն, եթե ստիպեմ նրան կատարել իմ ցանկությունները՝ հասկանալով, որ դեռ դրա ժամանակը չէ, և մարդը դրան պատրաստ չէ, նույնիսկ եթե այդ մարդը ես եմ: Այսօր ես դա Հարգանք եմ կոչում:

Երբ ես սկսեցի սիրել ինձ, ես դադարեցի ուրիշ կյանքի ձգտել և հանկարծ հասկացա, որ ինձ շրջապատող ամեն ինչ դրդում է ինձ աճել: Այսօր ես դա Հասունություն եմ կոչում:

Երբ ես սկսեցի սիրել ինձ, ես հասկացա, որ ցանկացած պարագայում ես գտնվում եմ ճիշտ վայրում, ճիշտ պահին, և ամեն ինչ տեղի է ունենում ճիշտ ժամանակին: Ես կարող եմ միշտ հանգիստ լինել: Այսօր ես դա անվանում եմ Ինքնավստահություն:

Երբ ես սկսեցի սիրել ինձ, ես դադարեցի վատնել ժամանակս և երազել ապագայի ու մեծ ծրագրերի մասին: Այսօր ես անում եմ այն, ինչ ինձ ուրախացնում է, ես սիրում եմ անել այն, ինչ գոհացնում է ինձ: Եվ այդ ամենն անում եմ իմ սեփական միջոցներով ու ռիթմով: Այսօր ես դա անվանում եմ Պարզություն:

Երբ ես սկսեցի սիրել ինձ, ես դադարեցի փորձել միշտ ճիշտ լինել և հիմա հազվադեպ եմ սխալվում: Այսօր ես հասկացա, որ դա Համեստությունն է:

Երբ ես սկսեցի սիրել ինձ, ես ազատվեցի այն ամենից, ինչ վնաս էր իմ առողջությանը՝ ուտելիք, մարդիկ, իրեր և իրավիճակներ: Ազատվեցի այն ամենից, ինչ ինձ ներքև էր քաշում ու հեռացնում

ինձ ինձանից: Առաջ ես դա անվանում էի առողջ եսասիրության դիրքորոշում, իսկ այսօր ես դա կոչում եմ Սեր ինքդ քո հանդեպ:

Երբ ես սկսեցի սիրել ինձ, ես դադարեցի ապրել անցյալով և անհանգստանալ ապագայի համար: Այսօր ես ապրում եմ միայն ներկայով, որում ամեն ինչ տեղի է ունենում: Հիմա ես ապրում եմ ամեն օր, ապրում եմ օրեցօր և կոչում եմ այն Գոհունակություն:

Երբ ես սկսեցի ինձ սիրել, հասկացա, որ մի օր իմ խելքը կարող է ինձ վշտացնել և հիվանդացնել: Բայց այն օրից, երբ խելքս միավորեցի սրտիս հետ, բանականությունս դարձավ իմ թանկագին դաշնակիցը: Այսօր ես այդ կապն անվանում եմ Սրտի իմաստնություն:

Մենք այլևս կարիք չունենք վախենալու վեճերից, հակամարտություններից կամ ինչ–ինչ խնդիրներից: Նույնիսկ աստղերն են բախվում, և այդ բախումից նոր աշխարհներ են ծնվում: Այսօր ես գիտեմ, որ դա Կյանքն է:

6. Կարդալ տրված տեքստը և որոշել՝ գործառական որ ոճին է պատկանում: Ընդգծել լեզվական այն միջոցները, որոնք պայմանավորում են խոսքի հուզականությունն ու արտահայտչականությունը:

Մարդ պե՛տք է բարեկիրթ (ինտելիգենտ) լինի: Իսկ միգուցե այնպիսի մասնագիտություն ունի, որ բարեկիրթ լինելը պարտադիր չէ: Գուցե կյանքն այնպես է դասավորվել, որ չի կարողացել կրթություն ստանալ: Եվ կամ միջավա՛յրը թույլ չի տվել: Իսկ եթե բարեկրթության պատճառով իր ընկերների ու հարազատների մեջ դառնում է սպիտակ ագռավ և մեկուսանում իր շրջապատից:

Ո՛չ, ո՛չ և կրկին ո՛չ: Բարեկրթությունը պետք է բոլոր հանգամանքներում: Պետք է մարդուն և իր շրջապատին: Այն շա՛տ, շա՛տ կարևոր է նախ և առաջ երջանիկ ու երկար, այո՛, երկար ապրելու համար, քանզի բարեկրթությունը համարժեք է բարոյական առողջությանը, իսկ առողջությունը մարդու միայն ֆիզիկական

առողջ գոյը չէ: Մարդ առողջ է նաև մտքո՛վ: Մի օր մի հին գրքում կարդացի. «Պատուէ՛ զհայր քո և զմայր քո, և երկար կեցցես ի վերայ երկրի»: Իմաստուն միտք է, պատգամ՝ ուղղված համայն մարդկությանն ու մարդուն:

Բայց նախ եկեք ճշտենք՝ ինչ է բարեկրթությունը և ինչ կապ ունի երկարակեցության պատգամի հետ:

Շատերը կարծում են, թե բարեկիրթ է նա, ով շատ է կարդացել, ստացել է բարձրագույն կրթություն (զարմանալիորեն շեշտվում է հատկապես հումանիտար կրթության դերը), շատ է շրջագայել, մի քանի լեզու գիտի: Մինչդեռ կարելի է այս ամենն ունենալ, բայց… բայց բարեկրթություն չունենալ: Եվ ընդհակառակը: Նշվածներից ինչ–որ բաներ պակաս են, բայց կա ներքին բարեկրթություն: Կրթվածությունը չի կարելի խառնել բարեկրթության հետ: Կրթվածությունը ապրում է հին բովանդակությամբ, իսկ բարեկրթությունը՝ նորը ստեղծելով և հինը որպես նոր գիտակցելով: Ավելին… Զրկե՛ք իսկական բարեկիրթ մարդուն իր գիտելիքներից, իր ամբողջ ունեցվածքից, վերցրե՛ք նրանից իր հիշողությունը: Թող նա մոռանա բոլոր դասականներին, թող չճանաչի արվեստի համաշխարհային գլուխգործոցները, թող չհիշի պատմության հանրահայտ դրվագները: Բայց եթե այս ամենով հանդերձ՝ նա պահպանի իր ընկալումներն ու սերը գիտելիքի, հոգևոր արժեքների հանդեպ, հետաքրքրվի պատմությամբ, հիանա բնության գեղեցկությամբ, հասկանա մարդու բնավորությունն ու անհատականությունը, մտնի նրա դրության մեջ առանց կոպտելու, առանց նախանձի ու անտարբերության, հետաքրքրվի իր նախնիների մշակույթով, հարգի անցյալի արժեքները, մեծագույն պատասխանատվությամբ վերաբերվի իր բանավոր և գրավոր խոսքի հարստությանն ու ճշգրտությանը… Ահա՛, հենց սա՛ է բարեկրթությունը:

Բարեկրթությունը չափվում է ոչ միայն գիտելիքներով, այլև դիմացինին հասկանալու կարողությամբ: Այն պայմանավորված է

հազար ու մի մանրուքով: Դրանք այնքան տարբեր են՝ հարգալից բանավիճել, սեղանի շուրջ զուսպ լինել, աննկատ, այո՛, հենց աննկատ օգնել մեկին, պահպանել բնությունը, չաղտոտել միջավայրը և մարդկանց վիրավորանքներով ու ապուշ մտքերով: (Այո՛, սրանք աղբ են, այն էլ ի՞նչ աղբ):

Բարեկրթությունը համբերատար վերաբերմունք է աշխարհի ու մարդու նկատմամբ: Մարդ պետք է իր մեջ զարգացնի ու մարզի այս հատկանիշը: Մարզի այնպես, ինչպես ֆիզիկական ուժն է մարզում: Իսկ այն, որ ֆիզիկական մարզանքն օգնում է առողջ ու երկար ապրելուն, հայտնի փաստ է: Մինչդեռ քչերն են ուզում հասկանալ ու ընդունել, որ հոգևոր մարզումը նույնքան կարևոր է մարդու առողջ երկարակեցության համար: Եվ, ի վերջո, բարեկիրթ լինելը մեր հասարակական ու անհատական պարտքն է ազգի ու ինքներս մեր առջև: Եվ ուրեմն ապրենք երկար և՛ որպես ազգ, և՛ որպես անհատ: (*Դ. Լիխաչով, Նամակներ բարու և հրաշալիի մասին (թարգմ.)*)

7. ա) Բացատրել վերը նշված նամակի ենթատեքստը, բ) տեքստը բաժանել կառուցվածքային մասերի, գ) ընդգծել առավել տպավորիչ արտահայտությունները, մտքերը:

8. Կարդալ տեքստը: Ձեր կարծիքով՝ լեզվական ի՞նչ միջոցներով է հեղինակը առավել արտահայտիչ ու ճշգրիտ դարձրել իր խոսքը:

Ինձ չեն բավարարում «ագահություն» բառի բառարանային բոլոր բացատրությունները: «Ագահություն՝ անվերջ ձգտում ինչ–որ բանի՝ բավարարելու անհագ, ծայրահեղ ցանկությունը» և կամ՝ «ընչաքաղցություն, գծուծություն, ժլատություն»: Ընդ որում, սրանք լավագույն բառարանների բացատրություններ են: Այս բացատրությունները սկզբունքորեն ճիշտ են, և, այնուամենայնիվ, դրանք չեն փոխանցում այն ողջ տհաճությունն ու զզվանքը, որը ես զգում եմ, երբ մարդու մեջ ագահություն եմ

նկատում: Ագահությունը սեփական արժանիքների մոռացում է, ավելին՝ ինքնամոռացում է: Ագահությունը փորձ է, որով դու նյութական արժեքները քո անձից բարձր ես դասում, այն հոգեկան շեղվածություն է, մտքի զզվելի ուղղվածություն, որը սահմանափակում է հենց միտքը, մտավոր հետամնացություն, թշվառություն, սփրթնած հայացք աշխարհին, դառնություն, որ շրջապատում է քեզ ու քո միջավայրին և մոռացության մատնում ընկերության գաղափարը: Մարդկային ագահությունը նույնիսկ ծիծաղելի չէ, այն ստորացուցիչ է: Այն թշնամի է քեզ ու քո շրջապատին: Խոսքը խելացի խնայողության մասին չէ. ագահությունը դրա խեղաթյուրումն է, հիվանդությունը: Խնայողությունը ղեկավարում է միտքը, իսկ ագահությունը տիրում է մտքիդ: (*Դ. Լիխաչով, Նամակներ բարու և հրաշալիի մասին (թարգմ.)*)

9. Ստորև տրված է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրապարակային ելույթը Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության 12–րդ համաժողովի բացմանը: Բաժանե՛ք այն կառուցվածքային բաղկացուցիչ տարրերի, առանձնացրե՛ք այն միջոցները, որոնք նպաստել են խոսքի արտահայտչականությանը:

Հարգելի՛ պարոն Ֆեյերստայն,

Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության 12–րդ համաժողովի հարգարժան մասնակիցներ

Ինձ համար պատիվ է ողջունել ձեզ Հայաստանում և ազդարարել այս ներկայացուցչական համաժողովի մեկնարկը: Հպարտ եմ, որ լինելով մարդկության դեմ ամենասարսափելի հանցագործության՝ ցեղասպանության ենթարկված ժողովուրդ, մենք վերածնվել ենք, պետականություն կերտել և այսօր հնարավորություն ունենք հանդես գալու որպես ցեղասպանության հանցագործության դեմ պայքարի առաջամարտիկներից մեկը:

Հաճախ թվում է, որ միջազգային իրավունքի զարգացմանը, քաղաքական մտքի առաջխաղացմանը զուգընթաց մարդկությունը պետք է արդեն իսկ հաղթահարած լիներ ցեղասպանության հանցագործության արհավիրքը: Այնքան է խոսվել մարդկության դեմ ուղղված այս հանցագործության բաղադրիչների մասին, այնքան ջանք է ներդրվել այս հանցագործությունը բնորոշելու, կանխարգելելու, պատժելու և դատապարտելու ուղղությամբ, որ թվում էր, թե «այլևս երբեք» կարգախոսն իր լիարժեք իրագործմանը կհասնի:

Ցավոք, մենք այսօր էլ ականատեսն ենք դառնում ցեղասպանական գործողությունների, այլատյացության քարոզչության, ֆաշիստական գաղափարախոսության առաջմղմանը: Մենք տեսնում ենք զանգվածային սպանություններ, վայրագություններ, կոտորածներ, կրոնական, ազգային, լեզվական տարբերակմամբ հիմնավորվող խտրականություն, առանձին խմբերի հատվածային կամ ամբողջական ոչնչացման փորձեր, մշակութային ժառանգության և հոգևոր կյանքի թիրախավորում:

Դա հուշում է մեզ, որ միջազգային պայքարը ցեղասպանության հանցագործության դեմ պետք է նոր թափ առնի, նոր բովանդակություն ստանա և օգտագործի բոլոր հնարավոր հարթակները:

Հաճախ ցեղասպանության մասին խոսելիս ոմանք օգտագործում են «ողբերգություն» ձևակերպումը: Բայց անհրաժեշտ եմ համարում, որ մշտապես օգտագործվի այդ եզրույթի միակ ճիշտ բնորոշումը՝ «հանցագործություն»: Ողբերգությունը հաճախ կարող է տեխնոլոգիական աղետի հետևանք լինել, կարող է լինել բնական արհավիրքի հետևանք, նույնիսկ կարող է լինել պատահականության հետևանք: Ցեղասպանությունը, ի տարբերություն այդ ամենի, խորապես հաշվարկված, նախագծված, նախապատրաստված հանցագործություն է, որն ունի հստակ թիրախ, սահմանված գործիքակազմ և այլատյացության վրա հենվող գաղափարախոսություն:

Եվ հաշվի առնելով այդ հանցագործության բազմաշերտ բնույթը՝ չափազանց կարևոր է, որ դրա բնորոշման, կանխարգելման, դադարեցման, դատապարտման, դրա համար պատժի կիրառման գործընթացը լինի բազմակողմանիորեն հիմնավորված, և այդ հիմնավորվածությունը կառուցված լինի գիտական հենքի վրա: Պատմաբաններ, քաղաքագետներ, ազգագրագետներ, մշակութաբաններ, միջազգային իրավունքի մասնագետներ, հոգեբաններ, բազմաթիվ այլ մասնագետներ են անհրաժեշտ ցեղասպանության հանցագործության դեմ պայքարն ավելի արդյունավետ առաջ մղելու համար, ինչպես նաև ցեղասպանությունների հետևանքները հաղթահարելուն ուղղված քայլեր ծրագրելու և իրականացնելու համար: Դրանով է կարևորվում Ցեղասպանագետների միջազգային ընկերակցության այս հարթակը: Դուք մասնագիտորեն եք զբաղվում մարդկության առջև ծառացած այդ դժոխային երևույթով:

Ցավոք, պատմության ընթացքում հաճախ տարատեսակ շահերն անհեռատեսորեն վեր են դասվում ցեղասպանությունները կանխարգելելու հրամայականից՝ մարդկության տարեգրության մեջ ստեղծելով անպատիժ նախադեպեր ու դրանով իսկ խթանելով այդօրինակ վարքագծի հետագա դրսևորումները: Գաղտնիք չէ, որ կատարված հանցագործությունները քողարկելու, զոհին ոճրագործ և ոճրագործին զոհ ներկայացնելու փորձերից զերծ չի մնում նաև գիտությունը կամ միգուցե ավելի ճիշտ է ասել՝ «հակագիտությունը»:

Հետևաբար նաև այդ առումով եմ արժևորում այս համաժողովի առաքելությունը և տարիներ ի վեր ձեր ներդրած ջանքերը՝ ուղղված գիտական մակարդակում պատմական արդարության վերականգնմանը: Բարձր ենք գնահատում, որ դեռևս 2007 թ. Ձեր ընկերակցությունը ճանաչել և դատապարտել է Հայոց ցեղասպանությունը:

Հարգարժան ներկաներ

Հայոց ցեղասպանությունից 100 տարի է անցել, սակայն ոչինչ չի մոռացվել: Չեն մոռացվել նաև այն մտավորականների, գիտնականների ու առհասարակ մարդասերների անունները, ովքեր իրենց մտքի ու գրչի շնորհիվ լույս են սփռել 100 տարի առաջ կատարված ոճրագործության վրա՝ թույլ չտալով ժամանակին քողարկել այն: Եվ պատահական չէ, որ 100–րդ տարելիցի ոգեկոչման չորս սյուներից մեկն էլ հենց երախտագիտության սյունն է. մենք երախտապարտ ենք բոլոր այն գիտնականներին ու հասարակական–քաղաքական գործիչներին, ովքեր, անտեսելով բոլոր դժվարությունները, բարձրաձայնեցին և շարունակում են բարձրաձայնել Հայոց ցեղասպանության մասին: Մենք շնորհակալ ենք բոլորիդ այս աննախադեպ աջակցության և ցուցաբերած խիզախության համար:

Հարգելի՛ հյուրեր

Ցեղասպանությունների կանխարգելման գործում մեր պայքարը լինելու է շարունակական, ու դրանում մենք անընդհատ զգալու ենք նաև ձեր աջակցության և խորհրդի կարիքը: Մենք պայքարում ենք մեր իրավունքները վերականգնելու համար և շնորհակալ ենք բոլոր նրանց, ովքեր մեզ սատարում են, գոնե բոլոր նրանց, ովքեր մեզ չեն խոչընդոտում: Համաժողովին մաղթում եմ արդյունավետ աշխատանք, իսկ ձեզ՝ նաև հաճելի օրեր Հայաստանում: Շնորհակալություն: (*ըստ www.president.am կայքի*)

10. Պատրաստե՛ք հրապարակային ելույթ հետևյալ թեմաներից որևէ մեկով՝

1. «Ոչ միայն հացիվ…», **2.** «Դիվանագիտություն և մշակութային երկխոսություն», **3.** «Իրավագիտակցություն և ազգային հոգեբանություն», **4.** «Անկախության քառորդ դարը», **5.** «Հայի բա՞խտ, թե՞ «հում» դիվանագիտություն»:

(Ձեր խոսքում գործածեք աստիճանավորման, չափազանցության, հակադրության, համեմատության և կրկնության ոճական հնարներ):

11. Թվարկել բանավեճի դասակարգման հիմունքները:

12. Ընդգծել սխալ ձևակերպումները:

ա) Բանավեճի ժամանակ պետք է հերքել հակառակորդի նախ թույլ փաստարկները, ապա՝ ուժեղները:

բ) Ապացուցման ժամանակ սկզբում պետք է բերվեն թույլ փաստարկներ, ապա՝ ուժեղ:

գ) Ամենաուժեղ փաստարկը միանգամից ժխտելու դեպքում կարիք չի լինի մյուս՝ երկրորդական փաստարկները հերքելու:

դ) Պարալոգիզմի դեպքում սխալ թույլ տվողը չի գիտակցում կամ չգիտի, որ սխալվում է, իսկ սոփեստության դեպքում սխալ թույլ տվողը գիտակցաբար է դա անում՝ ցանկանալով մոլորեցնել հակառակորդին կամ ունկնդիրներին:

ե) Բանավեճի հիմնական բաղադրիչներն են **հերքումը, ապացույցը, կշռադատումը, եզրահանգումը**:

զ) Բանավիճելիս ընդունված է կիրառել հակառակորդին կեղծ սիրաշահելու հնարքը:

է) Բանավիճելիս կատակելը խստիվ արգելվում է:

13. Շարունակել և ավարտել նախադասությունները:

ա) Բանավիճելիս անհրաժեշտ է նյութի համակողմանի իմացություն, քանի որ _____

_____:

բ) Բանավիճելիս հարցին հարցով պատասխանելու հնարքը օգնում է _____

_____:

գ) Բանավեճի ժամանակ հեգնանքը չպետք է ուղղված լինի հակառակորդի _____

_____:

դ) Բանավիճելիս շատ կարևոր է անհատի պահվածքը, քանի որ

_____

_____:

14. Տրվածներից որոնք չեն համապատասխանում բանավեճ վարելու ընդհանուր սկզբունքներին:

ա) Բանավեճ վարողը նախ և առաջ պետք է լավ տիրապետի նյութին, ասելիքին:

բ) Բանավեճը պետք է վարել առանց անձնական վիրավորանքների:

գ) Բանավեճ վարելու համար ոչ այնքան կարևոր է խոսքարվեստին լավ տիրապետելը, որքան տրամաբանության օրենքների վրա հենվելը:

դ) Բանավեճի ժամանակ միտքը հաստատելու համար կարելի է վկայակոչել հեղինակությունների, ինչպես նաև իր տեսակետները ներկայացնել որպես համընդհանուր ճանաչում ունեցող իրողություններ:

ե) Բանավիճելիս պատասխանի հետաձգումը կդիտվի որպես պարտություն:

15. Թվարկել ճիշտ բանավիճելու միջոցները (կանոնները):

_____

_____

_____

16. Լրացնել աղյուսակը ըստ բանավեճի դասակարգման հետևյալ սկզբունքների.

Ըստ արտա-հայտման լեզվական ձևի	Ըստ դրսևոր-ման կերպի	Ըստ ձևա-վորման եղանակի	Ըստ նպա-տակի	Ըստ մաս-նակից կողմերի քանակի	Ըստ անց-կացման ձևի

17. Կարդացեք Հ. Թումանյանի «Լեզվական փոխառություն-ները» բանավիճային հոդվածը: ա) Որոշեք բանավեճի տեսակը: բ) Գտեք բանավեճի բաղադրիչները և նշեք՝ ինչ միջոցներ է գործածել գրողը բանավեճը կառուցելիս: գ) Համոզի՞չ է բա-նավեճի փաստարկումը. հիմնավորեք Ձեր տեսակետը:

Նոր–Նախիջևանի «Լույս» շաբաթաթերթի No 10–ում պ. Ա. Մեղրյանը մի հոդված է տպել՝ «Մեր մանկական գրականությունը և հայոց լեզուն», որի մեջ ցավով գանգատվում է, թե «… ինչ որ հնչվում է ժողովրդի բերանում, լինի դա հայերեն թե թուրքերեն, թաթարերեն թե ռուսերեն, վերցվում է և իսկույն գրվածքի մեջ է դրվում»: Նա վշտանում է, որ մեր գրողներից ոմանք (ի միջի այլոց Ա. Իսահակյանն ու ես) գործ են ածում «ջան, ջիգյար, յար, յարաբ, ղարիբ» և այլն: Եթե խոսքը էս կամ էն օտար բառի կամ մի շարք բառերի վրա լիներ, հարկավ վեճը մասնավոր բնավորության

կունենար, և միայն ճաշակի խոսք կարող էր լինել, բայց պ. Մեղրյանը դատապարտում է օտար, այլև մինչև անգամ հայերեն գավառական բառերի գործածությունը ու մաքուր հայերեն լեզվի պահանջն է դնում: Լա՜վ: Պ. Մեղրյանին եթե տանք կարդալու էս բառերը, **վարդ, վայ, վախել, նվագ, նվաստ, նունուֆար, նամ, նոր, նանիկ, նախշուն, նիստ, նշտար, նշան, նարգիզ, նավ, նուռ, նաշ, նազուկ, մեգ, միլ, մեխ, նահապետ, մոմ, մուճակ, մուր, մուկ, մոռ, ջերմ, գրավ, գրվանքա, կիր, կարիք, կերպաս, քիչ, քիմք, գոմեշ, ոչխար, դրոշակ, կկու, խոտ, խաբել, կուտ, կանթեղ, կանոն, կարապ, փուռ, գավազան, հարս, տոն, տարազ, դայակ, սապոն, սուգ ու շիվան, շողք, շվաք, գումար, շեն, շաղգամ, դաս, աշակերտ, սուր, շուշան, սամույր, սպիտակ, սեր, սանդ** և այլն, և այլն, անշուշտ, նա էս բոլորը կհամարի մաքուր հայերեն բառեր: Եթե էդպես էլ չհամարի, կասի դրանք արդեն հայացել են: Էդպես է. ճշմարիտ է: Բայց հիմի մի ուրիշ հարց: Դրանք եթե մեր լեզվի մեջ են մտել ու հայացել, արդյոք դրանցից հետո կանգ է առել էդ պրոցեսը, և էլ նոր բառեր չե՞ն մտնում ու հայանում թե՛ մեր ժողովրդական լեզվի մեջ, թե՛ գրական, ուրիշ խոսքով՝ էլ չե՞ն կատարվում ժողովրդական ու գրական լեզվի փոխառություններ: Իհարկե, սրա պատասխանն էլ դրական է լինելու: Քանի որ մի ժողովուրդ հազար ու մի ձևերով հարաբերություն ունի ուրիշ ժողովուրդների հետ, քանի որ նրա կյանքը զարգանում է նաև արտաքին ազդեցությունների տակ, քանի որ մեծանում է, էնքան էլ ազդեցություններ է կրում, և նրա լեզուն, հարստանում, ճոխանում ու զարգանում: Նորանոր գաղափարների հետ նորանոր ոճեր ու բառեր է ընդունում, և մինչդեռ դուք բողոքում եք, թե չի կարելի հայերեն լեզվի մեջ գործ ածել **դարդ, ջան, չոլ, զիլ** ու նման բառեր, մյուս կողմից ներս են հոսում **ինտելիգենտ, կուլտուրա, լեգենդ, սոնետ, պոեմ, պոեզիա, օպերա, զիգզագ, պրոպագանդ** և այլն:

Ի՞նչ եք անելու: Եվ ինչո՞ւ պիտի վշտանաք ու կռվեք, ի սեր Աստուծո: Դուք կարծում եք միայն նրանով պիտի ճոխանաք ու բավականանաք, ինչ որ հայի միտքն ու հանճարն է տալի…

Վերցնենք բառը: Խնդրեմ ասեք, եթե մեր լեզվից հանեք ձեր հալածած «ջանը», որ չինական է, թե մոնղոլական–թաթարական, ինչո՞վ կփոխարինեք: Մի քիչ մտածեցե՛ք, կտեսնեք՝ մի բառ եք վտարում, որի տեղը համազոր ու համաշունչ մի այլ բառ դնել չեք կարող: Դրա նման և շատ ուրիշ բառեր, որ մաքուր հայերեն չեն: Եթե էդ օտարամուտ բառերի փոխարենը դուք ունեք, ինչ խոսք: Եթե ձեր լեզուն ընդունակ է հարազատ թարգմանելու կամ հարմար բառեր շինելու, տելեֆոնին հեռախոս ասացեք, տելեգրաֆին հեռագիր կամ վելոսիպեդին հեծանիվ, բայց հո չի կարելի ամեն բան էլ թարգմանել կամ շինել, էքսպրոպրիատորը ճողոպրիստ, ինչպես արել են մեր պոլսահայերը, տրամվայը քարշակ անվանել, հանգ. Գամառ–Քաթիպայի նման, խավիարը ձկնկիթ կամ ֆրակը պոչազգեստ:

Ավելի ձախորդն էն է, որ Մեղրյանը օրինակ է բերում ռուսաց և եվրոպական գրականությունները, թե նրանք ինչքան մաքուր լեզվով են գրում իրենց մանուկների համար: Ուրիշ խոսքով՝ իրենց լեզվի մեջ օտար բառեր չեն ընդունում: Էս հո արդեն էնքան է սխալ, որ ես հերքելն ավելորդ եմ համարում: Գրեթե ամեն մի նոր եվրոպական բառ, ինչ որ հայերը շինում են կամ թարգմանում, ռուսները նույնությամբ առնում են ու տալիս իրենց երեխաներին:

Ո՛չ. թե՛ ժողովրդական, թե՛ գրական լեզվի մեջ լեզվական փոփոխությունները եղել են միշտ, կլինեն միշտ, և շատ է գեղեցիկ, որ էդպես է. միայն թե պետք է իմանալ շնորհքով, խելացի առնել ու տեղը գործածել, ահա խնդիրը: Իսկ ինչ վերաբերում է ժողովրդական բարբառներից օգտվելուն, դա ոչ թե դատապարտելի է, այլ հենց դա է բնական ճանապարհը կայտառ ու կենդանի լեզու ստեղծելու: Բավական էր. մեր երեխաներն այլևս չպետք է սարսափեն «հա՛» ասելիս, և մայրերն այլևս չպետք է մատներն

սպառնալի թափ տան նրանց վրա. «հա՛» ասացի՞ր, ի՞նչպես կարելի է, ասա՛ «այո՛»: Բավական էր, նզովքը պետք է վեր կենա «հա»–ի վրից, իբրև թե նա գռեհիկ է. դրա մեջ ո՛չ առողջ միտք կա և ո՛չ էլ ճաշակ:

18. Օգտվելով փաստարկման եղանակից՝ 3 նախադասությամբ հաստատե՛ք կամ ժխտե՛ք տրված արտահայտությունների իսկությունը:

ա) Նախքան դատապարտելը միշտ պետք է մտածել՝ չի՞ կարելի արդյոք արդարացում գտնել (*Գ. Լիխտենբերգ*): Բնավ պարտադիր չէ համաձայնել զրուցակցի հետ նրա հետ լեզու գտնելու համար (*Մ. Թետչեր*): Ամենավերջում մենք հիշելու ենք ոչ թե մեր թշնամիների խոսքերը, այլ մեր ընկերների լռությունը (*Մ. Լյութեր Քինգ*): Տիրոջը տան համար չեն հարգում, տիրոջ շնորհիվ են տունը հարգում (*Ցիցերոն*): Վախենում եմ ես թույլերից. այդ նրանք են ամենից շատ ստորություն անում կյանքում (*Պ. Սևակ*): Պատմությունը գրում են հաղթողները (*Ու. Չերչիլ*): Խելացի մարդը ստիպված է երբեմն ստել, որպեսզի կարողանա հիմարների հետ զրուցել (*Է. Հեմինգուեյ*):

բ) Մարդուն տվեք այն ամենը, ինչ նա ցանկանում է, և հենց այդ նույն վայրկյանին նա կզգա, որ այդ ամենը ամենը չէ (*Ի. Կանտ*): Մեղմ կարող են լինել միայն ուժեղ բնավորությամբ մարդիկ (*Ֆ. Լառուշֆուկո*): Լեզվի մահն արագացնում է ժողովուրդների մահը (*Գ. Նժդեհ*): Մարդիկ հրաշալի պահում են այն գաղտնիքները, որոնք չգիտեն (*Ու. Չերչիլ*): Իշխանությունը մարդկանց կուրացնում է, եթե մարդիկ ավելի փոքր են, քան իրենց պաշտոնը, հարբեցնում է, եթե ավելի տկար են, քան իրենց պաշտոնը (*Հ. Թումանյան*): Իմաստնությունը միշտ չէ, որ գալիս է տարիքի հետ: Պատահում է՝ տարիքը գալիս է միայնակ (*Մ. Ժվանեցկի*):

19. Լսարանում կազմակերպել բանավեճ հետևյալ կամ Ձեր նախընտրած թեմաներով.

1. «Օրինականացնե՞լ էֆթանազիան, թե՞ ոչ»:
2. «Բնապահպանական խնդիրները և զբոսաշրջությունը ՀՀ–ում»:
3. «Հեղինակային իրավունքի անպաշտպանվածությունը»:
4. «Եվրոպան պե՞տք է ընդունի ներգաղթյալներին»:

(Բանավեճին հատկացնել 70 րոպե, կողմերին յուրաքանչյուր փուլի համար (խնդրի ներկայացում, պարզաբանում, փաստարկում և այլն) տրամադրել 10–ական րոպե):

5. ԽՈՍՔԱՅԻՆ ԷԹԻԿԵՏ

1. Ըստ տրված իրավիճակների՝ կազմել խոսքային համապատասխան կառույցներ.

Ա. Ներողություն խնդրել՝

ա) դասախոսից՝ դասից ուշանալու, **բ)** գործընկերոջից՝ գործնական հանդիպումը հետաձգելու, **գ)** ծնողներից՝ ընտանեկան միջոցառմանը չմասնակցելու, **դ)** ղեկավարից՝ ուշ երեկոյան զանգահարելու, **ե)** գրադարանավարից՝ գիրքը ժամկետից ուշ հանձնելու **համար**:

_____

_____

_____

_____

_____

_____

Բ. Շնորհակալություն հայտնել՝

ա) գիտական ղեկավարին՝ Ձեզ հազվագյուտ գրքեր տրամադրելու, **բ)** բժշկին՝ հոգատար վերաբերմունքի, **գ)** ծնողներին՝ անսպասելի նվեր ստանալու, **դ)** ընկերոջը՝ դժվար պահին օգնելու, **ե)** հարևանին՝ վերանորոգման աշխատանքներում օգնելու **համար**:

_____

_____

Գ. Անհամաձայնություն հայտնել՝

ա) դասախոսին՝ նրա կարծիքին համամիտ չլինելու, **բ)** երեխային՝ նրա ընտրած հագուստը չհավանելու, **գ)** ծնողներին՝ ուշ երեկոյան իր՝ դրսում չմնալու, **դ)** ղեկավարին՝ միայնակ որոշում կայացնելու, **ե)** եղբորը՝ սեփական մեքենան ծանոթին տրամադրելու **համար**:

Դ. Մերժել՝

ա) ոչ այնքան հաճելի ծանոթի հետ թատրոն գնալու հրավերը, **բ)** Ձեր ընկերոջ/ընկերուհու՝ միասին հանգիստ անցկացնելու առաջարկը, **գ)** ղեկավարին՝ աշխատանքային ժամի ավարտից հետո աշխատելու խնդրանքը, **դ)** դասընկերոջ խնդրանքը՝ Ձեր գիրքն ինչ–որ ժամանակով իրեն տրամադրելու վերաբերյալ, **ե)** քաղաքական լուրջ դեպքի մասին անպայման կարծիք արտահայտելու պահանջը:

Ե. Հաճոյախոսել՝

ա) ծնողներին, **բ)** գործընկերոջը, **գ)** ղեկավարին և աշխատակցին), **դ)** սիրելի ուսուցչին, **ե)** հիվանդին, **զ)** հայտնի գիտնականին:

2. Պատկերացրե՛ք իրավիճակ, երբ պետք է ծանոթանաք՝ *ա) սիրելի արտիստի, բ) դասընկերոջ ծնողների, գ) նոր հարևանի, դ) նոր գործընկերների հետ*: Յուրաքանչյուր իրավիճակի համար կազմե՛ք փոքրիկ տեքստ:

3. Զրուցակիցը հրաժարվում է Ձեր խնդրանքը կատարելուց: Փորձե՛ք համոզել զրուցակցին, որը կարող է լինել՝ *ա) Ձեր քույրը, բ) դասընկերը, գ) դասախոսը, դ) վաճառողը, ե) ոստիկանը*:

4. Գրել Ամանորի շնորհավորական ուղերձ՝

ա) դեկանին

բ) ՀՀ ԿԳ նախարարին

գ) եղբորը/քրոջը

դ) գործընկերոջը

ե) սիրելիին

5. Գրել կաղապար — արտահայտություններ (բարեմաղթանքներ, օրհնանքներ և այլն), որոնք պայմանավորված են հայոց ավանդույթով և ծիսակարգով: Յուրաքանչյուր խոսքային կառույցի համար նշել՝ ինչ իրավիճակում է գործածվում: Օրինակ՝ *«Մի բարձի ծերանաք» — բարեմաղթանք՝ նորապսակներին*:

_____

_____

_____

_____

_____

6. ա) Ընտրեք այն արտահայտությունները, որոնց կիրառությունը չի հակասում խոսքային էթիկայի կանոններին: բ) Լրացրեք Ձեր տարբերակ(ներ)ը: գ) Ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ իրավիճակներում և ի՞նչ միջավայրերում է նպատակահարմար կամ արդարացված մյուսների կիրառությունը:

Ա.

ա) Ես վստահ եմ, որ շատ լավ գիտեմ Ձեր հարցի պատասխանը:
բ) Հարցը գիտեմ, կարող եմ պատասխանել:
գ) Կարծում եմ՝ գիտեմ Ձեր հարցի պատասխանը:
դ) Դուք չեք էլ պատկերացնում, թե որքան լավ գիտեմ Ձեր հարցի պատասխանը:

_____

_____

_____

Բ.

ա) Դուք սխալվում եք, հարցն ըստ էության չեք պատկերացնում:
բ) Դուք այնքան էլ ճիշտ չեք հասկացել հարցը:
գ) Հարցը չեք հասկացել և ապուշություններ եք ասում:
դ) Ես լսեցի Ձեզ. հասկանալի է, որ գաղափար չունեք հարցի մասին:

_____

_____

_____

Գ.

ա) Ձա՛յնդ կտրիր. գիրք եմ կարդում:
բ) Խնդրում եմ՝ լռես. կարդում եմ:
գ) Շնորհակալ կլինեմ, եթե պապանձվես. խանգարում ես, թող գիրք կարդամ:
դ) Կարո՞ղ ես 5 րոպե բերանդ փակել՝ գիրք կարդամ:

_____

_____

_____

Դ.

ա) Հասկացա, հետո կխոսենք. գործեր ունեմ:
բ) Ներիր, հիմա էլ չեմ կարող խոսել. հետո կզրուցենք:
գ) Կա՛րճ կապիր. տեսնում ես՝ չեմ կարողանում խոսել, բայց էլի շարունակում ես:
դ) Ոչինչ, չէ՞, որ համակարգչով գործ եմ անում, դու խոսիր, ես լսում եմ:

_____

_____

_____

Ե.

ա) Մի քիչ հեռու նստիր, հանգիստ խոսենք:
բ) Կներես, ես քիչ հեռու նստեմ. չեմ սիրում քիթ քթի տված զրուցել:

գ) Տեղս այնքան էլ հարմար չէ…
դ) Քեզ չե՞ն ասել, որ խոսելիս մի քիչ հեռու նստես:

_____

_____

_____

Զ.

ա) Ինչ ես ցրված հայացքով դեսուդեն նայում. բա՞ն է եղել:
բ) Ինչ ես մռութներդ կախել, նստել:
գ) Դու այսօր կարծես քեզ այնքան էլ նման չես:
դ) Մինչև չասես՝ ինչ է եղել, հանգիստ չեմ տալու:

_____

_____

_____

Է.

ա) Չնեղանաք, բայց այսօր Ձեր տեսքը լավ չէ. Ձեր հագուստը շատ տձև է:
բ) Կներեք, իհարկե, բայց երեկվա Ձեր հագուստը ավելի լավն էր:
գ) Անկեղծ ասած, Ձեր տեսքը հաճելի չէ. այս հագուստը Ձեզ չի սազում:
դ) Հագուստը փոխել է Ձեզ. անսովոր կերպարանափոխվել եք:

_____

_____

_____

Ը.

ա) Ինձ այսօր հարմար չէ. չնախատեսված գործեր ծագեցին, ձեզ կմիանամ հաջորդ անգամ:
բ) Եթե ես չգամ այդ հանդիպմանը, աշխարհը շուռ չի գա:

գ) Եթե մտքիս դնեմ, կհարմարեցնեմ, ուղղակի մտածում եմ՝ ինչ պիտի անեք առանց ինձ:
դ) Չեմ ուզում գալ հանդիպման. ձեզ հետ անհետաքրքիր է:

_____

_____

_____

7. Օգտվելով համացանցից՝ ներկայացնել տարբեր ժողովուրդներին բնորոշ խոսքային վարվեցողության յուրահատկությունները: Նշել՝ ինչ ընդհանրություններ կան մեր խոսքային մշակույթի հետ:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՂ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՅՔԵՐԻ ՑԱՆԿ

1. **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:
2. **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, 4 հատորով, Եր., 1971:
3. **Զաքարյան Հ., Ավետիսյան Յու.**, Բառագիտություն, Եր., 2016:
4. **Հայրապետյան Ա.**, Օտար բառերի բառարան, Եր., 2010:
5. «Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան», 2–րդ հրատ., Եր., 2013:
6. «Նոր բառեր», Պրակ Ա, Եր., 2015:
7. **Չալլմյան Ն.**, Դիվանագիտական և հյուպատոսական տերմինների անգլերեն–հայերեն բառարան, Եր., 2011:
8. **Սուքիասյան Ա., Գալստյան Ս.**, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975:
9. www.nayiri.com
10. www.lezu.am
11. www.dic.academic.ru
12. www.arlis.am

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՄ — Արթուր Մեսչյան
ԱՎ — Անրի Վեռնոյ
ԴԴ — Դերենիկ Դեմիրճյան
ԴՎ — Դանիել Վարուժան
ԵՉ — Եղիշե Չարենց
ԼՏ — Լև Տոլստոյ
ՀԹ — Հովհաննես Թումանյան
ՀՄ — Հրանտ Մաթևոսյան
ՀՇ — Հովհաննես Շիրազ
ՀՍ — Համո Սահյան
Մ — Մուրացան
ՊԴ — Պետրոս Դուրյան
ՊՍ — Պարույր Սևակ
ՍՋ — Ստեփան Զորյան
ՍՍ — Սոս Սարգսյան
ՎԱ — Վախթանգ Անանյան
ՎԴ — Վահագն Դավթյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակների կողմից 3

1. ԼԵԶՈՒ. ԼԵԶՎԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԵՐԸ, ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ 6

2. ԽՈՍՔԻ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ 8
2.1. ՃՇՏՈՒԹՅՈՒՆ 8
2.1.1. Ուղղագրություն և ուղղախոսություն 8
2.1.2. Բառապաշարի շերտեր: Ստուգաբանություն 13
2.1.3. Հապավական բարդություններ և համառոտագրություններ . . . 29
2.1.4. Իմաստափոխություն: Բառակազմություն: Բառերի ձևաիմաստային խմբեր: Բառային զուգակցումներ 33
2.1.5. Ձևաբանություն 50
2.1.6. Շարահյուսություն. նախադասության անդամների կապակցման եղանակների և միջոցների յուրահատկություններ 72
2.2. ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ 80
2.3. ՃՇԳՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՍՏԱԿՈՒԹՅՈՒՆ 90
2.4. ՊԱՐԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ 101
2.5. ՍԵՂՄՈՒԹՅՈՒՆ (ԿԱՐՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ) 107
2.6. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 113
2.7. ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 119
Ամփոփիչ առաջադրանքներ 131

3. ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՃԵՐ 136
3.1. Գիտական ոճ 136
3.2. Պաշտոնական ոճ: Գրագրության ձևեր 151
3.3. Խոսակցական ոճ 163
3.4. Գեղարվեստական ոճ 168
3.5. Զանգվածային լրատվության միջոցների լեզուն: Գովազդ 174
Ամփոփիչ առաջադրանքներ 188

4. ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԽՈՍՔ: ԲԱՆԱՎԵՃԻ ԱՐՎԵՍՏ 193

5. ԽՈՍՔԱՅԻՆ ԷԹԻԿԵՏ 210

Հանձնարարվող բառարանների և կայքերի ցանկ 219
Համառոտագրություններ 219

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Յուրի Ավետիսյան, Լևոն Ավետիսյան,
Լիանա Սարգսյան, Ռիտա Սաղաթելյան

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ

Գործնական աշխատանքների ձեռնարկ հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար

Հրատարակության տնօրեն՝ Կ. Գրիգորյան
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի

Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 14:
Տպաքանակը՝ 200 օրինակ:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am